



Ա. ՏԱՐԻ 1962

ՕԳՈՍՏՈՍ

8

باكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك قزاجيان

PAKINE  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԾՍՅՈՒ

ՎԱՐԻՁ ԽՄԲԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՄԲԱԳԻՐՆԵՐ  
 ԵԳ. ՊՕՑԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԳԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԴ  
 Յ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ  
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- ԵԳ. ՊՕՑԱՋԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
- Վ. ԳԵՆՐԳԵԱՆ
- Կ. ՓՕԼԱՏԵԱՆ
- ԱՐՇ. ՍԱՐՈՑԵԱՆ
- ՍՄԲ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
- Հ. ՔԱԶԱՐԵՆՑ
- Ա. ՀԵՐԱՆ
- Ա. ԵՐԱՋԵՆՑ
- Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Վ. ՀԵՐԵԱՆ
- Զ. ԽՏՇԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Յ. ԳԵՂԱՐԴ
- Բ. ԹԱՇԵԱՆ

ԺԱՆՍԵՄԻ մէկ գարծր  
 Մաղրամկար՝ ՌԱՅՅԻ



# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ա. ՅԱՐԻ, ԹԻՒ 8

ՕԴՈՍՅՈՍ 1982

ՊԷՅՐՈՒԹ

### ՕՐԵՐ ՈՐ ԳԷՇ ԷԻՆ

Սփիւռքի հայրենեան փոքրիկ մէկ հատուածին՝ Մուսա Տաղի լեռնականներուն 1939-ի տարագրութեան առաջին տարիներէն մինչեւ ներգաղթ երկարող շրջանի մը կեանքին գեղարուեստական պատկերացումն են եզր. Պոլսեանի գրին պատկանող հետազայ էջերը, որոնք ժխտակ եւ Մրաքք ընդհանուր խորագիրը կրող պատմութեանն են: շարք մը կը կազմեն: Պատմութեանը եւ առաջին երեքը հրատարակուած ըլլալով, զանց առնուած են հոս: Թագիրէի այս եւ յաջորդական Թիւերով պիտի տանք շառանմին ամբողջութիւն մը եղող մնացեալ մասերը, ուր տարագրութենէն զատ, կայ քիչ մը պատերազմ, տիրութիւն ու... հայրենադարձ:

Գրեց՝ ԵՒ. ՊՕՅԱՅԵԱՆ

Շարք մը առաջ, Տէր Յարութիւն դեռ վախճանած չէր: Նոյնիսկ Հիւանդ չէր: Բայց սարահարթին վրայ նորէն Դեկտեմբերը տխուր էր, նորէն օրերը խիստ էին, նորէն ամէն ինչ գորշ էր: Զողազոր՝ Տրդատ էմմին, հզօր պիտով, հզօր յօնքերով եւ կարծես ամէն օր պնակ մը պողպատ կերած մարդ՝ գերմանական ծանր փետուանները կը դողէր Այնճարի հողին համար: Կը մարգարէանար խոպան հողերուն պարտութիւնը: Կ'ըսէր. «Այնտանքը ամուսնութիւն մը թող համարուի. աշխատողը էրեկ է, աշխատանքի վայրը՝ կնիկ՝ այս հողերը

կնիկներ են, պիտի յաղթենք դերենք»: Լաւ խօսքեր էին ասոնք, բայց մարդոց հողին չէր ուրախանար: Զափըզ գորաւոր տեղեկներ կ'երգէր, բայց բոլորը տխուր էին նորէն: Մարտի պապուկ շրջուն վաճառորդի մը պէս թաղէ թաղ ման կու դար եւ հասարակաց աղբիւրներու առջեւ կեցած այճէպրայի իր դիտութեան հաշակը կը սարածէր ամէն խաւէ ներս: Կը դարմանային բոլորը, կը հիանային, բայց ըստ փոփարար ոչինչ կը գտնէին լուծուած խնդիրներուն մէջ: Այճէպրայով գաղթականութեան բարդ խնդիրը պիտի

չլուծուէր անշուշտ: Ալճէպրան՝ հացէն ետք, հագուտէն ետք, մանաւանդ Հայրենիքի կարտէն ետք: Արեւիկն մէջ՝ - Ալճէպրա: Եւրօլէ մլուկ՝ - Ալճէպրա: Անօթի եւ փայծաղը ճահճատեղով յեցուն՝ - Ալճէպրա: «Յե՛նթ իմաստուն պատուկ, թու ալճէպրադ ի՞նչ պիտի ընէր կարօտին, հայու հայրենակա՛ն կարօտին»:

Տխուր են: Պատերազմը կը շարունակուի: Երկիրներ կը փլին: Ժողովուրդներ զողթակոն կ'ըլլան: Սուրճի գաւաթը կարգացող հոշակաւոր տիկին էլմաստ վարկաբեկուեցաւ Այնճարի մէջ: Իր բոլոր զուլակութիւնները զրեթէ սուտ ելան: Մէկուն՝ պիտի հարտանանս ըսուաւ: - Աղքատացաւ ժորգը: Ըսաւ մէկուն՝ դործը պիտի լուանայ: - Գէչցաւ գործը: - Պիտի նշանուիս: Չնշանուեցաւ ենթական: - Ճամբադ բաց է: Տարի մը ոչ մէկ քայլ նեանց գրեթէ՝ գաւաթ կարդացնողը:

Ամէն մարդու յոյս փուտ էր, ամէն ժողովուրդի յոյս փուտ. փուտ սերմի պէս որ չի՛ բուսնիր:

Այդ փուտ յոյսերու շրջանին էր, որ Այնճարի աղաքը դասին զինուորագորութեան: Ըսին.

- Երթանք զարտվաճա մը ուսենք. երթանք Այնճար քանի մը դրուշ զըրկենք:

Ճ

Շարաթ մը տաւջ, առատան ժամը ճիշդ տասին էր: Յուրտ պահ մը: Խիստ հով մը կը փչէր թաղապետութեան շէնքին վրայ, եւ ամբողջ Պէքասայի երկիրը քրտուր վայր մըն էր, անհրապոյր, աղօտ, դժնդակ:

Շարեց զիրենք Փրանսացի հարիւրապետը կէս շրջանակի մը ձեւով: Գեղեցիկ զինուորական մըն էր, ուղիղ եւ բարձրահասակ: Յայտնօրէն քաջ: Պիտի ուզէիր որ ամէնէն խիստ հրամանները արձակէ եւ դուն անմիջապէս հնազանդիս:

Ներկայացող բոլոր աղաքը գրեթէ հաւնուեցան: Հարիւրապետը առաւ ա-

նունները, մականունները եւ նստաւ օթօ, խոտանալով որ ուրիշ անգամ եւս պիտի հանդիպի: Պոռագին այն ատեն vive la France: Գացին ապա պարտքով սրկարէթ ծիւցցին, պարտքով օղի խմեցին: Շարաթ մը վերջ է հիմա: Վախճանած է Տէր Յարութիւն, Տրդատ էմմին իշած է դաշա, դերմանական 100 քիլոնոց փետատով: Ու եկած է լուր, որ արձանագրուած աղաքը որ մը ետք ներկայ ըլլան զինուորական կեդրոն: Պիտի երթան Ապլա, հագուին համազգեստ, Ուրախութեան եւ տխրութեան մէջ երթեւեկող դէմքեր ունին, տրամադրութիւններ ունին, արտայայտութիւններ ունին: Պիտի մեկնին որ մը տաւջ: Գիշեր մը պիտի անցընեն Բայաշ, առտու կանուխ Ապլա ըլլալու համար: Մէկ երկու լիբանանեան ոտկի պէտք է իւրաքանչիւրին: Գրեթէ ոչ ոք ունի, ոչ ոք կրնայ ճարել:

Ըսին իրարու.

- Երթանք ճաշենք, ժամը 1-ին բուրս շաղպքին թով կը հաւաքուինք ու կ'երթանք:

Ճաշի երթալը ձեւակոն էր յաճախ այդ օրերուն: Հնազանդութիւն մըն էր աւելի ճիշդ՝ հին ու լաւ օրերու վարժութեան մը, երբ կէսօրին կարելի էր յան մը ուտել: Հիմա...

Սարգիս կտոր մը հացի հանդիպած էր տունը եւ կտոր հացը ձգած տնեցիներուն:

Վահրամ կերած էր խաշած ու պաղած պնակ մը խոտ:

Յովհաննէս կակուղ հաց մը դրած էր շապիկին տակ ու ելած տունէն:

Սիսակ եւ Միսաք երկուսական գաւաթ օղի խմած էին եւ զիրենք արձանագրող հարիւրապետը օրհնած:

Աւետիս, որ բազմաթիւ փոքր եղբայրներ ու քոյրեր ունէր, թատ մը լուր խմած էր տունէն եւ ձօր արցունքները երկար տոնն չդիտելու համար՝ «Ուշացած եմ» ըսած էր ու սլացած դռնէն դուրս:

Ուրիշներ՝ ասոնց պէս...

Ճամբան են, կը քալեն դէպի հիւսիս-արեւելք: Կ'անցնին գերեզմանոցին վարէն: Միտակ.

- Առիկա փրկութիւն է: Ոչ մէկ տեղ գործ: Ուտող բերանները նոյնն են, ուտուելիք հացը՝ բնաւ: Զմեռը շատ դէշ պիտի ըլլայ, շատ: Մարդիկ եթէ չմեռնին՝ ա՛լ չեն մեռնիր:

Միտաք:

- Տան մէջ ինքզինքդ կախելու չըւան իսկ չես դռներ: Հարկաւ լաւ է զինուորութիւնը: Երեք հարիւր զինուոր պիտի գրեն. ածական մօտ երեք հազար ոսկի գիւղը գրամ պիտի մտնէ. բան մըն է...:

Անչ'ուշտ. ջաղացքը կ'աշխատի քիճ մը նաեւ մեզի համար. թոնիրի ծուխ կը Խեանենք: Յորենի հացը կը վերադառնայ գիւղ. աղուոր կնիկ ըլլար կարծես, կարօտցա՛յ իրեն:

Ըսողը Վազգէնն էր: Համաժիտ չեղող չգտնուեցաւ ըսածին:

- Առանց զինուորութեան, դարունը չեկած, բոլոր ոս գերեզմանոցի քարերուն տակ ենք:

Ըսողն է Աշուրը, որ գերեզմանաքարերէն կ'ուզէ բաժնիլ նայուածքը ու չի կրնար:

Միտակ, ակնարկելով գերեզմանոցին.

-Առիկա մտեղներուն նուէրն է հայ ազգին:

Ետեւէն քալող Միտաքը.

- Միայն մտեղներուն: Հայութեան համար մահ հանգանակած են նաեւ անթուփիւնը, ցուրալը, ցելիը, մարդկային թուրքէն ետք, բնութեա՛ն թուրքերը:

Ուժմբին մէջտեղէն, թաօ մը ջուր ճաշած Աւետիս.

- Պատերազմի դաշտ երթալով ուրիշներ կը մեռնին, մենք այսօր հոն երթալով միայն կրնանք ապրիլ, ողջ մընալ:

Յուզուած էին այս խօսքին վրայ բոլոր տղաքը: Բայց խնդացին: Ու Միտակ ըսաւ, ուղղելով խօսքը թուրքին.

- Վայ եւ ջոս սինսիլէ՞ք... տարօ-

րինակ ըրիր մեր կեանքը, ջու եօթը անգամ եօթանասուն պորտոգ...: Աշխարհը տունին մէջ ողջ կ'ըլլայ, մենք ողջ ըլլալու համար մահուան շատ պիտի մօտենանք, պատերազմող զինուորի մը շարի շատ:

Ու խօսելէն՝ դարձան առաջին քրտակողը, դէպի Բայազ տանող:

Ճ

Իրիկուան ժամը Թ-ին, քսանըրեկու հայ տղաք խօսեցան, խորհեցան, երգեցին ու խնդալով մտան Բայազ:

Տրամադրութիւնները ուրախ էին, ճակատները՝ մաքուր:

Բայազ երկաթ էր եւ հող: Երկաթուղային հանգոյց մըն էր եւ զինուորական մեծ կեդրոն մը: Գիտէին այս ընտրը: Երկաթուղագծերը, վայրաշարժներն ու թափառող զինուորները ամբացուցին յանկարծ բոլորին ջիզերը:

Անցան կարճ փողոցներէ: Երջանը ըրին հինգ անգամ բոլոր զօրանոցներուն: Կեցան սափրիչի խանութներուն առջեւ, նամակատուն շէնքին առջեւ, քանի մը փուռերու առջեւ: Ժամանակ պիտի ըսպաննէին: Ու կար դիշերը անցընելու դժուար խնդիր: Գասնըրկու՛ւ հողի, Ո՞ր պիտի պատասպարուէին: Որովհետեւ երկաթեղէն բաներու եւ զինուորներու կեդրոն մը ըլլալէ աւելի՝ ցրտաշունչ քամիներու կեդրոն մըն էր այս գիւղաքաղաքը:

Կարապետ, որ առանձին թափառած էր քանի մը ժամ եւ քանի մը կիներու աչք ըրած՝ եկաւ խումբին ջով եւ յայտնեց.

- Տղաք, բան մը ընելու ենք, կրնայ գիշերը անձրեւ կամ ձիւն տեղալ:

- Կանոնաւոր երիտասարդներ ենք: Ըսենք՝ եկած ենք, պիտի կարգուինք. թերեւս Բայազ քսանըրեկու բարի առններու մէջ մեզի տեղ տան գիշերուան համար, - ըսաւ Արշակ:

- Ուրեմն, Արշակ, ըստ քեդի, Բայազը դժբախտացնելու եկած ենք: Բայազի մէջ քսանըրեկու աղջիկ գժբախտացնել՝ ամբողջ Բայազը գժբախտացը-

նել ըսել է: Մե'ղք է, - միջամտեց քա-  
նակուտի ճակատով Մարկոս:

- Բայց դէ՞ չ'ըլլայ: Մեզ կը կոչեն  
անկէ հոք Բայազի Փետացուները, -  
պատասխանեց Արշակ:

Անդիէն Սիսակ վրայ բերաւ.

- Արշակին գաղափարը հիանայի է:

- Ծօ', ետ ըսելիք ունէի, - յայտա-  
բարեց Կարապետ, - Ի'նչ աղջիկ, Ի'նչ  
բան, ապա՛նով եղէք, պառաւներն իսկ  
մեզի արժէք չեն տար հոս: Կը նային  
զինուորի միայն: Գաղթականի՞ հետ  
գործ պիտի ունենան...

Մկրտիչ, որ շէլ մը չի է, միջա-  
մըսեց.

- Քանքը ժամ վերջ կը տես-  
նենք: Մենք ալ այդ օրհնեայ համազգես-  
տը կը հագնինք եւ զինուոր կ'ըլլանք:

Միտաք ըսաւ.

- Կ'առաջարկեմ, որ դուք երթաք ու  
չըջան մը եւս ընէք դէպի զօրանոցները:  
Իսկ ես եւ Սիսակ կ'աշխատենք տեղ մը  
ճարհի բոլորիս, զիչերը անցընելու հա-  
մար:

Ժամը Թ-ն էր: Գացին տղաքը զօրա-  
նոցներուն կողմը:

- Այս խնթերը Ի'նչ պիտի ընենք,  
- ըսին Սիսակ եւ Միտաք. ձեռ' հայ գաղ-  
թականութեան սուրբ թամազուրանի, Ը-  
սին, խօսքը ուղղելով Պատիթի իրենց  
անտիքին: Դո'ւն օգնէ մեզի, որ զիչեր-  
ուան համար տեղ մը գտնենք:

Ու քալեցին Սիսակ եւ Միտաք: Եւ  
ուշագրութիւն ըրին, որ հայու հանդի-  
պին:

Բայց մէկը հայ գործաւոր մըն էր,  
Մարաշցի, որ բազմանդամ ընտանիքին  
հետ թիթեղաչին խրճիթի մը մէջ կ'ապ-  
րէր: Իսկ միւսը՝ սափրիչ մըն էր, Տիգ-  
րանակերտացի, որ երկու հողիէ աւելի  
չէր կրնար պատուարել:

- Բոլորդ սիրով կ'ածիլիմ, եթէ ան-  
հրատելա է անիլուիլ. մինչեւ աստու  
կ'ածիլիմ: Բայց քանրերկու հողի պատ-  
կեցնե'լ, ըսաւ ցաւակից շեշտով մը:

Բայց ուրիշ մը, որ արդուկողի ալ-  
կերտ մըն էր, Սեբաստացի, ըսաւ թէ

ինք կը մնայ ասորի ընտանիքի մը տու-  
նը:

Գօշկակար տղայ մըն էր չորրորդը,  
Սեւ Ծովու շրջանէն եկած, որ այսպէս  
մինչեւ ժամը Թ-ը անց, կ'աշխատէր դեռ:  
Ըսաւ.

- Փիտ բան է մեր հայերու գաղթա-  
կանութիւնը: Ես չեմ գիտեր: Բայց հայ-  
րուս միշտ կը կրկնէր. «Վիճակ չէ, վի-  
ճակ չէ՛ մերը», եւ աւելցուց - Ծրանի՛  
օրէլ մը ունենայի, նուիրէի ձեզի: Քեզ  
անկողին մըն է ունեցածս: Հաւանաբար  
երկու շաբաթ հոք Պէյրուսի իջնեմ, հոն  
աւելի գործ կայ: Կարեւորը, փափաք  
մը ունիմ՝ ձեզի հետ մինչեւ աստու փո-  
ղոցները թափառելու, եթէ կ'ընդունիք:  
Հինգերորդ Հայը, որուն հանդիպե-  
ցան ցերեալ դարձուածքի մը վրայ, սայլ  
մը կը նորոգէր: Ատանացի էր եւ ծե-  
րուկ: Ըսաւ.

- Թէեւ շատ էք, մաշալլահ ձեր քը-  
սանրերկու հայ միասին ըլլալուն, բայց  
ձեզ զրեթէ պիտի փրկեմ, քանի որ քը-  
սանրերկու Հայ էք եւ կրցած էք մինչեւ  
հիմա իրարու հետ չկուռիլ: Զարմանա-  
լի է, որ չէք կուռած: Մեր պապերուն  
աւանդութիւնը խախտած է, ուրիմ:

Եւ այս բոլորը ըսաւ թուրքերէն լեզ-  
ուով:

Ատանացիի գուարթ ու հաճելի խօ-  
սակցութիւն ունեցող ծերուկին հետ մը-  
տան ճաշարան մը: Մերուկը ըսաւ քա-  
ռասուն տարեկան միջուհասակ մարդու  
մը.

- Պարոն Ղազար, ասոնց հետ խօ-  
սեցէ՛ք:

Եւ ինք դնաց:



Սիսակ խօսեցաւ, Միտաք խօսեցաւ:  
Յայտնի եղաւ որ Պարոն Ղազար բարի  
եւ տաք հողիով մարդ մըն էր:

- Գացէ՛ք եւ բոլորդ շուտ եկէք, -  
ըսաւ. - կերակուր եփել պիտի տամ,  
չուշանա՛ք:

Սիսակ ըսաւ.

- Անթի չենք, պապիլ կ'ուզենք.  
Վազը զինուոր պիտի դրուենք:

Պարոն Ղազար, զիչ մը նեղուելով, պատասխանեց.

- Ատիկա վերջը կը մտածենք: Ձեզի կերակուր պէտք է հիմա եւ ջուրն: Բնաւ մի՛ ուշանաք:

Ձուշացան: Կ'ըսէին ճամբան՝ - Աղքատ Ղազարտիւն ջով ա՛յսքան բազմութիւն: Եթէ մենք, Յիսուսն անգամ չի կրնար յարութիւն տալ:

- Ձէ՛, կը կրկնէր Միսաք, - ասիկա զօրաւոր Ղազար մըն՝ է եւ մանաւանդ բարի՛, բարի՛, բարի՛:

- Որչափ ալ հարուստ ըլլայ, զըսանընդհու հոգիով՝ մարդը ժողիւրի վըրայ պիտի նստեցնենք, դիտել տուաւ Աւետիս, - կարծեմ վաղը առտու պիտի զղջայ մեզ կերակրած ըլլալուն:

Ք Ամսադլխուն կը վճարենք. թէ ոչ՝ ջրանընդհու հոգիին կիւլլէնկէան մըն ալ չի բաւեր, - ըսաւ Արշակ:

- Հոգ մի՛ ընէք, Աստուած մեզի հետ կ'երեւի:

Մտան: Պարոն Ղազար նետեց սեղանին վրայ սիկարէթի տուփեր, թերեւս տասնըհինգ հատ, թերեւս ջրանընդհու հատ: Առատացաւ ժպիտ սրահին մէջ, սիկարէթի ծոփէ աւելի: Եղաւ խօսակցութիւն Ղազարի մասին, երբ ան ուրիշ սենեակ կը մտնէր բան բերելու:

- Իր մինչեւ այնտեղը հայ մըն է:
- Ասանկ մարդ զիչ կ'ըլլայ:
- Բայց Հայուն լան ալ իսկապէ՛ս լաւ կ'ըլլայ, անմասն կ'ըլլայ:
- Յէտայիի վաւակ ըլլալու է:
- Աստուած մարգս չի մոռնար:
- Այս Ղազարները Աստուծոյ ձեռքերն են:

- Աղնի՛ւ բան մը կայ վրան:

- Մէկ նայելով՝ կը զգաս թէ մէջը ուրիշին տրուելիք տոտութիւն կայ: Ձարժանալի է:

- Ճիշդ է, լաւ ըսիր, Միսաք, այս մարդուն ամբողջ անձը ճամբանի (սպանիփեղէ) պէս յստակ է. բարութիւն եւ հարստութիւն կ'երեւի ներքը:

- Սա խիտ յօնքերուն տակ խոշոր աչքերը չկա՞ն՝ ատոնք կը բաւեն արդէն,

Սերո՛ք:

- Սիպիւրիոյ սառցեղէններուն վրայ հանդիպիս այս տեսակ մարդուն, կը տաքնաւ, կրակի պէտք չես ունենար, Եփրե՛մ:

- Ուրեմն, թո՛ղ Այնճարցիները, փոխանակ փայտ եւ ածուխ ուզելու կառավարութիւնէն, տասներեկու հատ այսպիսի Ղազարներ ուզեն, այսինքն՝ ձմեռուան համար տասներեկու տարօրինակ վառարան: Փայտ, ածուխ, ի՞նչ պէտք կայ, Մարկո՛ս:

- Այսպէս հարելու հատ Ղազար, - ըսաւ Սիսակ ընդհանուրին, ամբողջ հայ զաղթականութեան ցօւրտը մեղմացնող շօքած սանթրալ կ'ըլլան: Եօքած սանթրալը դուք չէք գիտեր ի՛նչ է, ես ալ չեմ տեսած: Բայց անցեալները օթէլ աշխատող մեր կարսոնները կ'ըսէին, որ ամէն կողմ տաքնոց խողովակներ են եւ չէր: Մեր դժբախտութեան պէտք է շօքած սանթրալ: Պէտք է, այդպէ՛ս չէ՞, Աւետի՛ս:

- Այդպէս է, - համաձայնեցաւ Աւետիս, - Հայուն ցօւրտին դէմ մարդկային ջերմութիւն պէտք է. թէ ոչ՝ չկանք: Բայց վստահ եմ, որ մեր ժողովուրդին մէջ բաւական Ղազարներ կան՝ հոգի ու սաքութիւն ունեցող:

- Թէեւ ձեռնամարդերը չեն աւելի են մեր մէջ, - առարկեց Միսաք, - նոյնիսկ Օզոտոսի կիտուն: Աստուած ազատէ Հայը իր բոլոր ձեռնամարդերէն:

- Այո՛, - ըսին եւ շարունակեցին առաւօրէն ծխել:

Ներս մտաւ Պարոն Ղազար: Իր ետեւէն ներս բերին հինգ սնտուկ: Ուրիշ բաներ: Ըսաւ.

- Այս բոլոր դիւնները հոս պիտի խմենք: Հիմա կրակ պիտի դայ՝ պիտի տաքնանք: Բանա՛նք այս սակառին տոփերը, մէզզէի համար: Քէպապի ու սալտները հիմա պիտի դան խոհանոցէն, փիլուս ալ պիտի դայ: Ով որ պիտի ուտէ եւ ջնանայ՝ թո՛ղ շուտ ընէ, իսկ ով որ կ'ուզէ լուսցնել, անսպարելու պէտք չունի:

- Ձենք քննար, - պոռացին բուր-  
բը:

- Այս որքա՞ն հիւրասիրութիւն, -  
ըսաւ Սիւսակ, - պարո՞ն Ղազար, մեր ըզ-  
պացած ամօթէն կ'ուզենք փախչիլ այս-  
տեղէն:

Բարի՛ բարի՛ Ղազարը նայեցաւ ա-  
մենուն: Պատասխանած եղաւ:

- Երբ նստան սեղան, պարոն Ղազար  
դաւաթը վերցուց եւ ըսաւ.

- Բարի էք եկած, բոլո՛ր հայերուն  
կենացը:

Խմեցին:

Յետոյ:

- Ես դիտեմ, որ Այնճարի մէջ ձիւն  
կայ, Թլուստութիւն կայ, խեղճութիւն  
կայ: Բ՛ր հայը դժբախտ չէ եղած: Բո-  
լորին կենացը: Խմեցին:

Շարունակեց.

- Բնաւ Այնճար չեմ գացած: Որո-  
շած եմ, որ բնաւ պիտի չերթամ, հա-  
կատակ, որ Բայազէն երկու քայլ անդին  
է: Բայց դիտեմ, որ հոն մե՛ծ տիրու-  
թիւն մը կայ. գիտեմ, որ դուք զբաղած  
էք մտեւելի կոշնակ հնչեցնելով, մտեւելի  
փոս բանալով, մտեւել ճամբելով: Անու-  
շիկ երեխաներ թաղեցիք, չէ՞, բարի ծե-  
բուկներ գրիք ձիւնին մէջ, չէ՞, ու երի-  
տասարդներ, երիտասարդներ, չէ՞,  
Թո՛ղ անոնց հողիները խաղաղ ըլլան,  
խմե՛նք:

Խմեցին:

- Ձէ՛, ես այդտեղ չեմ երթար: Եր-  
թամ՝ ի՞նչ ընեմ: Քանի մը անգամ փոր-  
ձեցի, չեղաւ: Անգամ մը Շթորայէն  
դարձայ ետ, անգամ մը ճիգուիթներու  
վանքէն, անգամ մըն ալ Այնճարի կա-  
մուրջէն: Ամէն հայ տառապած է, ամե-  
նուն կենացը:

- Այո՛ - ըսին, - այո՛, պարոն Ղա-  
զար, - ու խմեցին:

Հանդիստ չէին տղաքը, ոչ ալ պա-  
րոն Ղազար հանգիստ էր:

Երբ հինգերորդ դաւաթը պարպե-  
ցին, պարոն Ղազար ըսաւ.

- Բայց մտնանք ամէն տիրութիւն:  
Բոլոր տիրութիւնները պէտք է մտցը-

ւին: Ով որ չի կրնար իր տիրութիւնը  
մտնալ, չի կրնար երկար ապրիլ, իսկ  
հայերը պէտք է երկար ապրին: Վնաս  
չունի, մոռնա՛նք: Իբրեւ թէ՛ բան մըն  
ալ չէ պատահած ոչ մէկ հայու: Իբրեւ  
թէ՛ պարսիկը մեզի բան մը չէ ըրած:  
Իբրեւ թէ՛ ձէնկիդ Քան վարդ ու նու-  
նուֆար բերած է Հայաստանին, Իբրեւ  
թէ՛ քիւրտերն ու ենիշեթիները հրեշ-  
տակներու պէս պտրտած են հայ գիւղե-  
բու մէջ:

Տժգունեցաւ յանկարծ, գոյն չմնաց  
վրան:

- Օ՛... խմենք... Իբրեւ թէ՛ ճիշդ  
Եփրատին կղերքը չէր, որ էս որբացայ:  
Իբրեւ թէ՛ աւազաթումբի մը հասել չէր,  
որ հայրս եւ մայրս մորթեցին, քոյրիկս  
փախցուցին, քոյրի՛կս, սպիտակ ու  
խեղճ քոյրիկս...

Սիւսակ, որ քովը նստած էր, տես-  
նելով որ աչքերը մշուշի մը յատած է  
պարոն Ղազարը, հագիւ լսելի ձայնով  
մը մըմնջեց.

- Պարոն Ղազար, դուն լա՛ւ մարդ  
մըն ես: Ձգենք այդ բոլոր բաները. եօթը  
պորտը...

Սիւս կողմէ Աւետիս տւելի բարձր  
ձայնով ըսաւ.

- Այո բոլորը կ'անցնին: Խմե՛նք Հա-  
յաստանի կենացը:

Խմելէ ետք՝ երգեցին՝ «Մենք ան-  
կեղծ պիտուր ենք»...

Պարոն Ղազարին դոյնը տեղը եկաւ:  
Նոյնիսկ ուրախացաւ.

- Ներողութիւն տղաք, ա՛յսքան չէի  
տկարացած: Այնճարը պզտիկ ամպ մը  
համարենք հայոց երկնքին վրայ եւ մոռ-  
նանք:

Երգեցին.- «Ով որ քալ է՝ ի՞նչ կը  
սպասէ»...

Երգեցին.- «Կարկուտ տեղաց»...

Երգեցին.- «Դարձեալ փայլեց Սաս-  
նոյ գլխին»...

Ու երգեցին «Ձմեռն անց կացաւ»ը,  
«Կարկուտ տեղաց»ը, «Ազատն Աստուա-  
ծ»ը, «Նպատակիս հասնիմ միայն»ը:

Հին երգեր, նոր երգեր: Երգեցին  
կրակոտ ազարակներով:



Պարոն Ղազար ասոնց դէմ մեներ-  
դեց. «նա ինկեր եմ քիւրտերի մէջ»:

Կարապետ կատակեց.

— Այսինքն՝ մե՞ր մէջ ըսել կ'ուզէք:  
Իրաւ որ, քիւրտի պէս եկանք, կերանք,  
կոտորեցինք, թափեցինք, պարոն Ղա-  
զար:

— Հարկա՛ւ տղա՛ք, երբ բարի հայ  
մը կայ մէջուեղ, միայն քսանըերկու  
քիւրտի թալանը բարերախոտութիւն պէտք  
է համարել:

— Նուազագոյն չարիք, չէ՞, պարոն  
Ղազար, — հարցուց Միսակ. եւ խնդա-  
լով աւելցուց. — Արդէն աշխարհի բուն  
բախտուարները նուազագոյն չարիք կը-  
բողներն են, չէ՞:

— Այդպէս է, այդպէ՛ս — համաձայ-  
նեցայ Ղազար — բարիք չկայ իրականին  
մէջ. բոլոր բարիքները դէ՛լ չըլլալու պա-  
րագային, նուազագոյն չարիքներ են: Եւ  
մեր տասներորդ գաւաթը պէտք է պար-  
պենք այս դիչեր խղաղ Բայազի մէջ  
մտած նուազագոյն Չարիքին, այսինքն՝  
ձեր կենաց: Ո՛ղ մնաք, Այնճարի քիւր-  
տե՛ր — եւ, Աստուած ողորմի Ծրանսա-  
յի արեւելեան բանակին, ուր քանի մը  
ժամ ետք պիտի արձանագրուիք:

Խմեցին, խնդացին, կատակներ ը-  
րին:

Ժամը հինգն էր: Մէկուկէս ժամ  
մրափեցին: Յետոյ արթնցան, թէյ իը-  
մեցին, համբուրուեցան Ղազարին հետ  
եւ կլան ճամբայ. կերան ոսպէ փիլաւ,  
այսինքն՝ սքանչելի միւսկուտերէ: Վեր-  
ջը պարոն Ղազար ըսաւ.

— Երթա՛ք բարով, յաջողութիւն:  
Ճաշարանը ձերը եղաւ, ու ձեր պզտիկ  
զաղթականութիւնը թո՛ղ կոչուի՝ Այն-  
ճար-Ջորանոց-Ղազարի ճաշարան եռան-  
կիւն: Պատի՛ւ այդ եռանկիւնին:



Յաջորդ առտու, կլան Բայազէն:  
Հին ու զարմանալի բաներ յիշելով՝ քա-  
լեցին: Կիներու մասին խօսեցան, անոնց  
մասին աղոտը բան ըսին՝ քալեցին: Բո-  
լորին աչքին մէջ յոյս կար, բոլորին

կուրծքին տակ հաւատք: Մուկերը ա-  
մուր էին այլեւս, եւ թողերուն մէջ կար-  
ծես աւելի օդ կը մանէր քան երէկ, քան  
առջի օր, քան տարի մը առաջ:

Մտան Ազլա: Կօպի սանթիւնէնքուն  
պօստուս ըսին եւ մտան կարմիր կղմին-  
տըրներով հսկայական զօրանցէն ներս:  
Ու մտան հոն գրախտ մանող անմեղիե-  
րու երջանիկ տրամադրութեամբ: Մի-  
լիոնատէրի պէս՝ որ կը մտնէ դրամա-  
տուն — ապահով, ինքնապատահ: Ու քա-  
ղութիւն կը բխէր իրենց մէջէն: Ու բազ-  
կերակին մէջ անոնց՝ արիւնք յստակ ըլ-  
լալու էր այդ պահուն, հերոսներուն ա-  
րիւնին պէս մաքուր եւ տրամադրելի:

Մէկիկ մէկիկ անցան քննութեան  
սենեակ: Բոլոր էլլողները սենեակէն՝ կը  
ժպտէին, ժամ մը ետք պիտի երթային  
հազուելու: Միսակ ելաւ սենեակէն ան-  
ժըպիտ: Վերջին մտնողն էր, ելաւ ձա-  
խողած: Հասակը օրինական շափը չէր  
լրացներ:

Գտնումէկ տղաքը բոլորն ալ յան-  
կարծ ախրեցան, մանաւանդ Միսաք:  
«Մայրերնի՛ն... է՛ս ալ չեմ գրուիր» ը-  
սաւ, ընկերները վարակող անկեղծու-  
թեամբ մը: «Մայրերնի՛ն... Այնճար  
երթանք» ըսին, այս անգամ ամէնքը:

Բայց Միսակ ուրախացուց մթնուր-  
աը.

— Մօ կը տխրի՞ք, իշութեան պէտք  
չկայ, հիմա հասկցուեցաւ որ խե-  
լացին 150 սանթիմէն վեր չի կրնար ըլ-  
լալ:

— Եղբայր, հոն եկան ընդունեցին,  
հո՞ս ինչու չեն ընդունիր, անլուրջ բան  
մըն է, ըսաւ Միսաք. ըսէ՛ր որ Այնճար  
եկած դարիթէնը ընդունեց. վալլա՛հի  
Միսակ իշութիւն ըրած ես, պէտք էր ը-  
սէ՛ր:

— Մօ բոլորդ է՛լ էք, չըսի՞ կարծեա-  
նոյնիսկ վիվ լա մըսաւ մօն Գափիթէն  
պոռացի, թերեւս լսեցիք, բայց ինչ ը-  
նեմ, մարդը չընդունեց: Ըսի՛ — մըրան-  
սան սիրողին հասակը կարճ չի մնար մօն  
զարիթէն. բայց երեւի մարդը չդճահա-  
տեց սրամտութիւնս. քաղաքավար կըր-

պով ըսաւ՝ դալ անգամ :

- Ուրե՞մն, ըսաւ Միսաք :

- Ուրեմն քսանմէկ անխելքները բանտ, եւ խելացին՝ դէպի ազատութիւն : Երթամ Այնճարի երկիրը դիտեմ, ով որ տունը բսելիք ունի, իշութիւն չընէ, թող ըսէ : Ամենուդ կողմէ Տէր Յարութիւնի հոգակոյտին վրայ ափ մը հող նկատե՞մ :

Մազոտ Ալիշան, թուիս գէժքով, թաւ ձայնով .

- Գիտնայինք, իս'չ որ քեզի համար հասակի հանգանակութիւն մը կ'ընէինք մէջերնիս : Կ'ըսէինք՝

- Գափիթէն, իմ մէկ ոտքս Միտակին հաշուոյն զրէ՛ :

- Գափիթէն, վիզիս կէսը Միտակին հաշուոյն :

- Գափիթէն, իմ ամբողջ գլուխս Միտակին :

- Գափիթէն իմ... բա՛նա  
Խնդապած էին զօրանոցի բակին անկիւնը, բաց տեղ մը : Միտաք վերադառած էր նախկին գուարթ արամադրութիւնը, կամ զոնէ այդ երեւոյթը առած էր : Միտակին՝

- Մօ՛, բուրբին մա՛յրը, մենք ամէնքնս զինուոր զբուռէն ետք, բնաւ հող պէտք չէ ընեա՛ . շահողը մենք ըլլանք, ծախսողը դուն եղիր . կրնաս նոյնիսկ մեր քսակէն ողորմութիւն ընել :

Ալիշան .

- Խելօք աշակերտի պէս սա մէջտեղը կեցիր նայինք, Միտա՛կ . կարծեմ բաներ պիտի ըսենք քեզի :

- Թէեւ ես զինուոր չեղայ եւ դուն ալ սպայ պիտի չըլլաս՝ բայց այստեղ զօրանոց է, հնազանդիք : Է՛, Ալիշան է՞մ մի, խօսէ նայինք, - ըսաւ Միտակ :

Ալիշան .

- Բոլոր մագերուս վրայ երգում, պատժուած ես եթէ իմած օղիդ պայապան չըլլայ : Զահէի լուսազոյն օղին պիտի խմես :

Դիմացէն քառակուսի ճակատը փայլելցնելով՝ Մարկոս .

- Պատիժ՝ եթէ ծխածդ Սիլբիք չըլլայ :

Միտակ .

- Անշուշտ, կարճ ենք, կարճին հա՛սար կը վայելէ :

Կարապետ, որուն նաեւ սէվտալի կ'ըսէին,

- Մօ Միտակ, բոլոր դադանի տըխրութիւնները մէկդի... վրաս դրէ զինուոր, զօրանոց, աշխատութիւններ, ատոնք բոլորը իրականին մէջ ազեղ բաներ են, տխուր բաներ են, անվայել բաներ են : Հեզե՞մ ամէնէն գեղեցիկ բանը : - Կէնըթիլ նուիրիկէննիկ...  
Բոլորը միտարան .

- Իշուձա՛գ :

Կարապետ .

- Ականջ մի տար, Միտակ, մենք իբար կը հասկնանք . ուրեմն եթէ քաղաք երթաս եւ խննթութիւն չընես՝ քսանմէկ հողիով քեզ դատարան պիտի յանձնենք, բարի կ'ինքուն անգործութեան իբրեւ պատասխանատու : Յոյս ունինք սակայն որ այդ սծիրը դուն չես գործեր : Անգործ կ'ինքուն, ըստ Աւետարանի օրինաց, պէտք է զործ հայթայթել :

Միտաք .

- Տասնարանեան կ'ըսէ, որ նաեւ աղուորները գտնես :

Կարապետ .

- Աա քու տասնարանեադ է . Կարարագետին տասնարանեան, էֆէնտիմ, խարութիւն չի գնիր, տղեղ կ'ինքն ալ իրաւունք ունիմ քովը :

Միտակ .

- Մօ դեռ ընդիտութիւն մնա՞ց, ձեռքէք երթամ, ինձմէ գնած քնքիւն (խոտ մը) ինձի պիտի ծախեն այսօր :

Աջէն Սարգիս .

- Մեր գեղեցիկ նշանարանը չժողոնաս . Սեվտալին միտականի է, միայն կընիկ կը տեսնէ . դուն միշտ երկու աչքով եղիր : Այսինքն՝ ամէն տեղ հայ ազգը սիրելի, ամէն քաղաքի մէջ աղջիկ սիրելի :

Միտակ .

- Ապրիս Սարգիս, քու տասնարանեադ քիչ մը աւելի քաղաքավար եղաւ ազգին հանդէպ . այս ապերախտ շունբոլը Փրանսական լուրիան պիտի լափեն եւ հայ Ազգը ժողովան :

**Աւետիս.**

- Եղբայր, դեմ, մեր ինչպիսի մի նայիր, կարծեմ զու մէջը լալու փոփաք կայ, մեր մէջ ալ:

Միտաք, որ բնական է ամէնէն աւելի ազդուած էր, ուզեց բոլորը ապահովցնել թէ միայն կատակ եւ ուրախութիւն կայ մէջտեղ, կենալով ճիշդ Սարգիսին դիմաց:

- Ընկեր, պատուէր մ'ունիմ զու հոգիդ յանձնելու, ինչպէս կը կարգար մեզի Խաչատուրեան վարժապետ էֆէնտին. կը շարունակեմ. «Այնճարակոխ ոտքերուդ դամելու պա՛յտ մը ունիմ...»: Եւ այսպէս, տրտում աւանակ ծնած, շարունակեմ կեանքի մեր իշութիւնները. մենք հոս, դուն հոն: Արդէն յուզիչ բան չկայ. կը խնդաս՝ - ամէն ինչ կը վերջանայ: Հայտէ նայինք, Միտա՛կ, կարճ ես, կրկա՛ր ապրիս:

Յուզումը ծածկելու համար Միտակ ըսաւ.

- Վալլանի եպիսկոպոսական օրհնութիւն էր ասիկա. կը վայլէր որ զինուոր չըլլայիր, այլ Տէր Յարութիւնին տեղ տէրտէր ըլլայիր:

Յնդացին դարձեալ բոլորը. բայց չես դիտեր ինչո՞ւ, բոլորին աչքին մէջ եւս լալու անբացատրելի տրամադրութիւն մը կար: Թերեւս չէին ուզեր որ Միտակ ձախողէր, մինակ ըլլար հեռադահտէ գիւղի տիրութեան մէջ: Կային դեռ բազմաթիւ աղաք, բայց որոշ էր որ զրեթէ ամէնքը զինուոր պիտի գրուէին:

Իրենց յուզումը աստիճան մը աւելցաւ, երբ Միտակ սուտ ուրախութեամբ մը ըսաւ.

- Գացէք նայիմ, յաջողած խոզեր, արդէն ամէնքդ ալ իսկոյն մարդ միութարելու մասնագէտ դարձաք զլիտուս: Երթամ երկինք նայիմ, օրերը համբեմ եւ շարիքները թուելէն կարճութիւնս սնուցանեմ: Ուրիշ գործ չմնաց ինձի, քան դադարականութեան Այնճարի քոնսիւլ ըլլալը: Մայրիտայէ բռնուած դեղին քօնսիւլ մը:

**Սարգիս.**

- Երթաս բարով, սկսայ նախանձի վրադ, երանի կարճը ես ըլլայի:

**Միտաք.**

- Կեցցէ՛ դադարականութեան 150 սանթիմեթրը:

Ես քսանին անունով համարուեցան 190 սանթիմեթրն ու 150 սանթիմեթրը, - Միտաք եւ Միտակ:



Անցան շարթներ: Չորրորդ շարթը բռան երկուշարթի առաւօտ, Միտակ հետեւեալ ընդարձակ երկտողը ճամբեց Ապլա, Միտաքին:

«Միլեյի 190 սանթիմեթր, Ամենուդ բարեւ: Քսանըմէկ հողին եղաւ կարծեմ հարիւր քսանըմէկ: Նոյն չափ եւ ուելի տղաք ունինք նաեւ Բայազի զօրանոցին մէջ: Մեր քաջութիւնն ու արիւնը հանած ենք վաճառքի՝ որ ապրինք: Այդտեղ էք՝ որ ծերերը, կիներն ու ինձի պէս կարճերը ապրին: Յարակար գործ: Կարճե՛րս ինչ կ'ընենք: Առաջ տիրեցանք, տիրեցուցինք: Հիմա կ'ընենք փայլուն գործ: - Չինուոր ենք մտեղներու դէմ: Ես, Ալեքսանը, Սասակը եւ ինձմէ ալ կարճ Մակարը՝ մայրիտայի դէմ պայքարող սպասարկութեան մէջ ենք. ուղիմաղաշտը Այնճարի ճահիճներն են. զէնքերնիս փօմփա եւ մազութ: Նիւթապէս լաւ կը վարձատրուինք: Անդլիացիներն ու Ամերիկացիները կարճերը կը գնահատեն առայժմ: Մենք չորսս կարճութեան շորքոտանին ենք Այնճարի մէջ. վտանգաւոր շորքոտանի մը՝ ճահիճներու դէմ, մայրիտայի դէմ, Այնճարի բոլոր բազմոտանի շարիքներուն դէմ: Երկաններդ այս դադարականութեան նիւթականը երաշխատրեցէք, էթէ հարկ ըլլայ մեր արեւնով: Կարճերս կ'երաշխատրենք անոր առողջութիւնը հանապազօրէ մազութով»:

Համբարներ՝  
150 Սանթիմեթր ՍԻՍԱԿ

# Բարապետ



Գրեց՝ Պ. ՄՆԱՊԵԱՆ

Սկիւտարէն Բերա, Երկարգ-Քէօշէն Գում-Գափու, Պանգ-Օքո-  
մանէն Պապ-էլ-Ալի, Այա Սօֆիայէն Շիշլի, Մարմարայէն Սեւ Մով:

Անցած եմ այս անունները կրող, այս անունները պարփակող բոլոր  
թաղերէն, ծովերը եզերող պազուտաներէն, անցած տենդավառ մարդոց ու  
պեկնոծ ամբոխներու խռովայոյց հետքերէն ու հիմա՝ երոպական ավիճն,  
բլուրի մը վրայ կանգ առած՝ կը սպասեմ: Որո՞ւ: Ինչո՞ւ:

Տարիներ, տարիներ շարունակ, տարիքիս կէսէն աւելի ժամա-  
նակ, յարմենտէ բանաստղծութիւնը սկսաւ խռովել զիս, գրագէտները  
բացառիկ էակներ հաշուել սկսայ, յեղափոխականներ սիրեցի, այս կարօ-  
տը կը վառէր սիրտս, այս քաղաքը տեսնելու երազը կը ծաւալէր ու կ'ար-  
մատանար մէջս:

Տեսած եմ ինչ որ կ'ուզէի տեսնել, բայց չյագեցած տենչ մը կը  
յամառի աչքերուս մէջ ու սպասողական կացութիւնս կը շարունակէ մնալ,  
անհանգստացնել զիս:

Կարծես քառուղիի մը վրայ՝ պիտի տրուի ինձի տեսնել Ջօհրայը,  
խռովակնոծ հագինով նարէն, որ կը վազէ կնօջ մը կոշումէֆին:

Պիտի տեսնեմ կարծես Ջարդարեանը, իր պերճ արձակին պէս  
պերճաշուք անձին գնացքը, ձկնատամարտի մամբուն վրայ, ազատամար-  
տի կտրիճներուն իմացական ծարաւին տպասարկելու անսակարկ տրամա-  
դրութեամբ:

Պիտի տեսնեմ պանգուլիսներուն գլուխը անցած Հրանդը, իր հո-  
գիին մէջ անկործանելի հայրենիք մը կրող այդ մեծ պանդուխտը. տառա-  
պած ու արի այդ հաւատացեալը:

Կարծես յանկարծ դէմս պիտի ցցուի Բարսեղեանը, որ մագերէ հա-  
վուն, կ'անցնի հեռասպառ, Հայաստանեայց գրականութեան ի պատիւ փըր-  
փըրայեզց իր բաժակը պարպելու: Պիտի տեսնեմ տակաւին իր «Լայագէն»

նոր ֆանդակած հեթանոս ֆուրմը, իր տարիքը թուզթին յանձնած այլ ինք երեքուսն ատուեր մը մնացած տարեբային միւս բանաստեղծը, ամէն- քը, ամէնքը, ուսմէ իրենց գործերէն առաջ, ուսմէ իրենց գործերէն հտէ, ուստիսն վառած դժոխային խարոյկին բարձրանալէ առաջ, բարձրաչարչար ցեղին յաջակէզ դարձած մեծ գոհերը:

Յարոպական ափին, բլուրի մը վրայ կեցած՝ կը դիտեմ վերջալոյսի նստազայթներուն կրկնեքեռոյթը զուրեքուսն անհանգարտ խաղին մէջ, արե- ւելեան ֆազաֆի ծոցին, ու հետզհետէ անկուրթին մը կը պատէ զիս:

Վարը վասփորն է, «Մեր վասփորը», պիտի ըսէր Տէմիրճիպաշեան: Դիմացս՝ Դուրեանի Զամլրնան է, ճալիս՝ ուրիշ բանաստեղծի մը մակա- նունը յիշեցնող թաղը կը տարածուի, ու աջիս Մարմարան է, որուն բացե- րուն կը ցցուի Զարիֆեանի Մեծ կղզին:

Կարծես կը տեսնեմ զիրենք, ու իրենց հետ գիրքերը, ու գիրքե- րուն հերոսները, որոնք կենդանի էակներու պէս յաշեր կ'արթնցնեն մէջս ու գիրքնէ տեսնելու անապարամք մը կը ստեղծեն: Նոր եկած չեմ կարծես այս ֆազաֆին մէջ, այլ վերագարձած եմ ու անկուրթեամբ կը նայիմ չորս դիս: Կարծես տեղէ մը դուրս պիտի գայ «Քրֆուհին» ու նայելու տեղ բունկի կրկին, պիտի տեսնեմ կարծես «վերջալոյսի ազդիկը, իր կուտութեան մէջ իրմամ», ու «հանրմը»՝ որ «կ'արեւոյ մակեղջիւրը ու դիւթելով երե- կուն» պիտի անցնի դարձեալ «անկարելի, սխալի»:

Աշխարհի այս կախարդական ափին կախարդորէն կը վերադառնան ինծի բոլորը ուժ մը զգացնելով, դոյ մը ձգելով: Կը ցնցուիմ, կը վերա- նամ, կը կարօտմամ: Կը նայիմ համայնապատկերին ու յափշտակութիւնս կ'անի հետզհետէ: Հետզհետէ աւելի կը գեղեցկանան իրերը, զուրերը, եր- կիներէն թափուող շոայլ գոյները: Իրաւունք չունէ՞ր միթէ Տէմիրճիպաշ- եան, երբ աւելի ուժգին թափով մը կ'ապրէր այս անգիր բանաստեղծու- րիւնս, ու հագիւ հեռացած անկէ, երգի կը վերածէր իր կարօտախտը՝

*«Հոն սիրելիս, հոն կ'ուզեմ, որ տանին դիս»:*

Իլուր ու ծառ: Կապոյտ ծով մը վեր, կապոյտ երկինք մը վար, ու վերջալոյսի հետախուզող կարմիրը, որ երկու կապոյտներուն միջեւ նոր թովչանք մը կ'երկնէ, չգրուած բանաստեղծութեան մը հեռաւոր համը մօ- տեցնելով դիտողներուն:

Կ'ըսեն թէ նկարիչ մը բանաստեղծ դարձած է այս պատկերին դի- մաց: Կ'ըսեն թէ բանաստեղծ մը նկարիչ դարձած է այս բանաստեղծու- րեան առջեւ: Այլ ո՞վ պիտի դաշնաւորէր ձայները որ գոյները ալիք ալիք կը նետեն միջոցին մէջ, ու զուրերը կը պատմեն անոնց հեքիաքը աներե- ւոյթ ունկնդիրներուն:

Աչքերա չէին յագեցած պատկերէն, ու սիրտս չէր աւարտած տա- կարին այդ բանաստեղծութեան ընթերցումը, երբ ձայն մը զարմուեցաւ ինծի.

- Ալլա՛հ էքպեր...

Ծնցուեցայ: Նայեցայ չորս դիս: Ուրկէ՞ կու գար այդ հին ձայնը, ինչո՞ւ կը յամառէր ակամջիս մէջ, ինչո՞ւ կը մնէր վրաս.

- Ալլա՛հ էքպեր...

Արիւնս պատրեցաւ նորէն: Աչքերուս վարագոյր մը իջաւ նորէն, գեղեցկութիւններ ըմբռնելու անընդունակ դարձայ նորէն:

Ալլա՛հ:

Այս երկինքին վրայ :

Ի վիճակի՞ եմ միթէ աշխարհի այս մասին վրայ ընդունելու աստուածութիւնդ եւ ազօքելու քեզի, Տէր կողմնակալ, քարտէրու՛ Ալլահ, շրթներս կրնա՞ն միթէ կրկնել քեզի շաշուած ստորագիծները :

Պատուէրդ պատիւ, կամքդ օրէնք, ամունդ ազօք ըրինք մեզի դարեր շարունակ ու տարչութեանդ ձգած թերիները լրացնելու անմահալի ձգողութենէ մը բռնուած մարդեր ընծայարեցիքնք քեզի, ընտիր ամսեր, վառելու, բռնկելու, ցակատագիր մը իրագործելու եւ քու ցակտիդ ցառագայթներ ակնկոյտ անհուն կարողութիւններով օժտել մարդեր, բայց զո՞ւն ինչ ըրիր, Ալլահ էֆաէր, ի՞նչպէս վարուեցար անոնց հետ, այս երկինքին տակ ինչպէ՞ս գտանք մեր գայրոյթը : Այդքա՞ն դժուար էր քեզի հանդուրծել նոր մարդոց նոր շունչը : Շարականներու փոխարէն եթէ քանի մը նաք երգեր երգեցինք՝ կարծեցիր աստուածութիւնդ կը պակսի, վտա՞նգ մը կը սպառնայ մեծութեանդ :

Կ'ըսեն թէ դուն կը սահմանես ամէն ինչ, կ'ըսեն թէ առանց կամքիդ տերու չի շարժիր : Բայց վասիտի ափին ինչպէ՞ս յարգեմ կամքդ եւ աստուածային ի՞նչ ցաշակ կ'ազես որ տեսնեմ այս սահմանումիդ մէջ : Արարչութեանդ վրայ յաւելում չըբած, արարչութիւնդ երբեքից չպակցեցուցած, սեփական ցառագայթներու մեծափառ ուժերէն գուրկ, տուածիդ համար գոհ, շտուածիդ համար երեսանկեալ ազօքող մարդերու հին այս բազմութիւնը ի՞նչն էր ամէնէն արժանին ամենամեծ պարգեւիդ :

Վասիտի ափին զգացի բովանդակ թրքասիրութիւնդ :

Վասիտի ափին զգացի աստուածային հաշիւներուդ ողջ թշուառութիւնը : Մեզմէ առաջ դուն գիտես անշուշտ, որ հրաշքներդ հաս միայն պիտի պահեն իրենց հմայքները : Այս ստուերներն են միայն, սիրելիներդ, որ ստուեր պիտի ձգեն վրայ : Գիտես որ նոր տեսիլներու սրբագրիչ շունչին պիտի չյաջողին ենթարկել տեղծագործութիւններուդ ցարտարապետական յօրհանուածքը եւ իրենց ներքին խոյանքներով պիտի չկրնան հմայաթափ գարձակ ստեղծած պատրանքներդ, առասպելներդ, դրախտներդ : Հո՞ս, միայն հո՞ս կրնաս տեսիլ դուն հնարքէ գուրկ, դանդաղամիտ, անմիտ այս բազմութեան մէջ, նեղամիտ Ալլահ : Հոս ցանցայ քեզ նաեւ եւ, ու գտայ մարդոց պէս, մարդոց պէս տկար, տկարներու պէս խորամանկ, ողջութիւններու վրայ քաղաւորութիւն հաստատող, պատուանդաններէ վեր բարձրանալու ընդունակները վարձատրող միահեծան թրքասիրութիւն, հոս ցանցայ քեզ :

Քաղաքը հոն է, խոռվայոյց կեդրոնները հոն են, հոն են պաշտամունքս արժող մարդոց յիշատակները, հոն է անցեալիս մէկ մասը, բայց այս պատուանք ամէնէն աւելի քեզ միայն կը տեսնեմ, ո՞վ Ալլահդ էֆաէր, կ'ազեմ քեզի հետ խօսիլ, վիճիլ, կռուիլ : Ու կ'ըսեմ սեա, գուրգուրանքդ շաշուած ընծայած բազմութեան մէջ կ'ըսեմ... Եթէ ուժ մը ունիս՝ գա՛րկ նաեւ ինձի, տե՛ս, ազօքելու սիրտ չունիմ, գա՛րկ : Իրականութենէն մի՛ խուսափիր : Որոշէ՛ : Վայրկեանները սուր են : Շուտ ըրէ՛ : Հանդերձեալներով մի՛ սպառնար : Կը բաւէ, Ալլահ էֆաէր, կը բաւէ՛ :

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Դ Ի Ս



Յաւերժագին հայրենիքդ իմ,  
Շրթներուս վրայ՝ շունչս վերջին  
Ըլլար փառհիդ նուիրուած գռռ  
Նրդ սը հօրս :

Ու դուն ընդմիշտ երգ ըլլայիր,  
Մեր տենչերուն բոցը կարմիր,  
Օրերդ անմեռ, յաւերժութիւն,  
Ինքդ խնդութիւն :

Լուսաշեփոր ձայնով երգուած  
Տաղն այդ ուրախ - սսկի քերթուած -  
Թրթռար ամէն կողմ քաղցրաձայն  
Ջերդ շարակամ :

Ըլլայիր սէր, Կ'րգ ըլլայիր,  
Խաղաղութիւնը երկնածիր,  
Նօթիներուն, օ՛, քաղցրահամ՝  
Յօղ, մանանան :

Ու տիւ գիշեր դուն ըլլայիր  
Հոգւոյս լուսէ ջանն սսկեծիր,  
Փառհիդ շողար, մանանչէր յար,  
Արեւովառ :

Դարեր գային շարան շարան  
Պեղիլ ակերդ իմաստութեան,  
Աշխարհ խմէր ակէդ վնիտ  
Լոյս ու ծպիտ :

Ըլլար հօր գալիքդ աննառ,  
Մշտագուարք երգ, խնդութիւն,  
Եւ աշխարհ գար խմել ակէդ  
Լոյս արփաւէտ :

Մե՛ծ ըլլայիր մեծերու մէջ,  
Մի՛շտ իմաստուն, փառհիդ անշէջ,  
Փառհիդ ի տես չարը գալար՝  
Մի՛շտ մահաճար :

Ու լուսասփիւռ ծոցէդ ծնէր  
Մեզ նոր Մետրոպ, Դաւիթ, Մեհր,  
Ըլլար փառհիդ քեզ պատուանդան,  
Ինքդ վրան :

Ըլլար, ըլլար հայրենիքդ իմ,  
Ծոցիդ մէջ հուսկ շիրիմս իմին,  
Մասիսի պէս շուքդ վրաս  
Մի՛շտ անպակաս... :

Ըլլար յաւերժ մշտածպիտ  
Արիւրներուդ ջուրը վնիտ,  
Ուրկէ պատուքն իր անցնել գար  
Արար աշխարհ :

ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

Պուէնոս Այրէս, 31-1962

# Հանդիպումներ...

ԶՐՈՅՑ՝ Պ. ՍՆԱՊԵԱՆԻ ՀԵՏ

Գրեց՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏՅԱՆ

Տարօրինակ եղաւ Հանդիպումն Պօղոս Մնասպեանի հետ:

Միշտ ալ արդէն զարմանալի, խորունկ պահեր են Հանդիպումները, ըլլան անոնք անակնկալ թէ նախապատրաստուած:

Աւելի դիւրին են թերեւս առաջինները, քանի որ ոչինչ կրնանք ընել անոնց դէմ, դրուած ենք կատարուած իրողութեան մը դիմաց, ամբողջովին զինաթափ: Ու այդ վայրկեանի մեր տրամադրութենէն, բառէ մը, շարժումէ մը յաճախ, կախում ունի այդ կարճ, այդ անսպասելի պահը, անքակտելի, յաւիտենական օրտակցութեան մը կամ վերջնական խղճի մը վերածելու պատասխանատուութիւնը:

Նախապատրաստուած Հանդիպումները աւելի դժուարին կացութեան մը կը մատնեն մեզ: Մեր ուղեղը որովհետեւ սկսած է աշխատիլ օրեր առաջ, դասաւորել նախորդ զէպքերը, վերլուծել դանոնք, պատասխանատուութիւններ փընտ-

ռել: Փնտռել նաեւ ինքնարդարացումի կոտաններ:

Այո՛, այդ անպիտան ուղեղը, ետսէր, ամբարտաւան, որ սկսած է իր քանդումի աշխատանքներուն, լռեցնելու Համար սիրտը, որ կը տենչայ միայն բարութիւն ու սէր:

Հարկ է խոստովանիլ, թէ ապրիցայ այդ խառնաշփոթ, այդ դժուարին պահերը «Բազին»ի երխտասարդ մէկ խմբազրին Հանդիպելէ առաջ:

Մեծ եղաւ սակայն ուրախութիւնս, երբ Հաստատեցի որ անհետացած էին այդ բոլորը մեր ձեռքի առաջին սեղմումին: Ու կրկնապատկուեցաւ ուրախութիւնս, փոխուեցաւ երջանկութեան, երբ զգացի նաեւ, որ այդ նոյն հրաշքը տեղի ունեցած էր ի՛ր մէջ: Այնքան, որ քսանեւորոս ժամ յետոյ, մտերիմներ դարձած էինք արդէն: Վաղեմի բարեկամներ կարծէք, որոնք տարիներով ապրած են միասին և որ զիրար կը գըտնեն յանկարծ այս լուսաւոր պողոտանե-



բուն վրայ, բախտի մէկ բարեգէպ կարգադրութեամբ:

Ու հաւատացէք, որ սրտառուէ էր մեզ տեսնել մեր խօլ արշաւին մէջ, Փարիզի լոյսերուն ետեւէն, թատրոնէ-թատրոն, կապելայէ կապելայ...:

Ու նաեւ, ի հարկէ, երկուստեք խոստովանութիւններ՝ ապազայ ծրագիրներու, գրուելիք նոր դործերու մասին:

- Թատրոնը, զիս կը քաշէ ամէնէն աւելի թատրոնը, կ'ուզեմ թատրերգութեան նուիրուիլ, Բայց նախ քան այդ, պէտք է տեսնեմ խաղցուած բոլոր գործերը, դասակարգ թէ՛ նոր...:

- Ձէիք կրնար աւելի լաւ տեղ ընտրել, Փարիզը...:

- Ատոր համար եկայ արդէն, տիրանալու համար նախ լեզուին, ապա թատերական թեքներին... Ու գինովցած եմ արդէն. այս ի՞նչ այլազանութիւն, ի՞նչ դեղեցկութիւն: Ա՛հ, ա՛հ, Փոլատեան, որքան բան կայ ընելիք մեզի, Վազիրին պէտք է դարձնենք...:

- Բազիրին...:

- Այո՛, այո՛, մեր վերջին յոյան է, եթէ այս անգամ ալ չկարողանանք մէջէն ելլել...: Հիմա որ հեռացած եմ Պէյրութէն՝ աւելի զօրաւոր կերպով կը զգամ անոր կենսական նշանակութիւնը մեր սերունդին համար... Մահու ու կենաց խնդիր է ա՛լ սփիւռքի գրականութեան համար... Պէտք է փրկենք սփիւռքը, փրկենք մեր հողին...:

Ու վարակիչ է Մնայեանի շունչը: Կը տեսնեմ որ ան կ'ապրի մի՛ միայն այդ գրականութեան համար: «Կրօնք է հայ գրականութիւնը իրեն համար: «Կեցցե՛ս, Օշակա՛ն, լաւ տեղ ես նետեր կրակիդ, կը մրմնջեմ ես ինծի, ու դառնալով խօսակցիս»:

- Աղուոր էր գրածդ, կ'ըսեմ, աղուոր էր Քրիստափորի արձանին վրայ դրածդ, «Մարդիկնե՛րը»...:

- Ամբողջ շարք մը ունիմ, ուր ամփոփած եմ անցեալ տարուան ճամբորդութեանս տպաւորութիւնները: Քանի

մը օր առաջ Վազիրին զրկեցի Պոլսոյ վրայ դրածս, յաջորդ թիւին մէջ կը կարդաս:

- Վեր ի վերոյ կ'ենթադրեմ թէ ի՞նչ կրնաս գրած ըլլալ: Վոսփո՛րը, ի հարկէ, բայց հոն տեսա՞ր ուղուականները մեր սիրելիներուն, Մնայեան, հոն տեսա՞ր Վարուժանը, Զարդարեանը, Զօհրա՛պը...:

- Ի՞նչպէ՛ս, կը դառնայ ան ինծի, այլայլած, ի՞նչպէս գիտցար. այո՛, այո՛, տեսայ Զօհրապը... Զօհրապը որ կարծես կը վազէր նոր սիրոյ մը կոշտներին, Գեղամ Բարսեղեանը, որ կ'երթար Հասասանեայ Գրականութեան ի պատիւ իր բաժակը պարպուլու, ու Զարդարեանը, որ կ'անցնէր առջեւէս, պերճ, ինչպէս իր արձակը, ու միւսե՛րը, բոլոր՝ բոլոր: Վարուժանը, Սիամանթօն, Կոմիտասը...:

Ու յանկարծ ամէն ինչ խառնուեցաւ շուրջս, ու թուեցաւ ինծի, որ կը լսէի մօլլայիս աղօթքը՝ «Ալլաի էֆայր...»: Ու յանժամ, հաւատա՛ Փոլատեան, փոթորկեցաւ հողիս, արեւնս խուժեց ուղեղիս, սեղմեցի բռունցքս...:

- Վազիրը բռունցքիդ մէջն:

- Այո՛, ա՛յդպէս, հողիս բռունցքիս մէջ:

- Լա՛ւ, լա՛ւ, Մնայեան, հասկցայ, մնացիք այդպէս, բռունցքդ սեղմած, բայց ես պէտք է մեկնեմ...:

- Գնա՛, գնա՛, բայց դուն ալ մի՛ մոռնար Վազիրին, մի՛ մոռնար որ ձեզի, մեր բոլորիս կը սպասէ Վազիրին: Բաժնուեցայ Մնայեանէն բայց չկրցայ բաժնուիլ խռովքէն, որ կ'ալիկոծէր մեր երկուքին ալ հողինները:

- Ի՞նչ բան է այս, կը մրմնջէի ես ինծի, ի՞նչն էր միացուցած մեզ այսպէս, մէկ հարուածով քանդած բոլոր պատուարները, մեզ վերածած մէկ յայտարարի:

Ամէն ինչ պէտք էր բաժնէր մեզ իրարմէ: Ապրած էինք երկու տարբեր աշխարհներու մէջ, ունեցած բոլորովին տարբեր կեանք ու իմացական կազմութիւն:

Այո՛, ամէն ինչ պէտք էր բաժնէր մեզ  
իրարմէ: Ու հաւանաբար կը բաժնէր ալ:

Միայն մէկ բան կը միացնէր մեզ  
անբազմաբանութիւն:

- Հայութիւնն է այդ, յայտարարե-  
ցի բարձրաձայն, փապուղիին ընդերք-  
ներէն երբ դուրս ելայ ու շնչեցի լիա-  
թոք գիշերային գոլ օդը:

- Ու միայն հայութիւնը չէ, շարու-  
նակեցի մենախօսութիւնս, մեզ այսպէս  
եղբայրօրէն իրարու դիրկ նետողը. չենք  
կրնար այդ բառով միայն բացատրել:  
Մեզ միացնողը աւելի խոր զգացում մըն  
է, գերադիր իտէալ մը, գերազանց ապ-  
բուստ ու կրօնք. - Հայաստանայց Գրա-  
կանութիւնը:

Երկու օր ետք, միանաբար հրաւիր-  
ուած էինք սիրելի ընկերոջ մը հիւրա-  
նոց-արուեստանոցը, ընթերցի:

Ուշացած էի, եւ երբ հեւասպաս  
մուտք գործեցի սենեակէն, ծուխի վա-  
րագայլի մը մէջէն տեսայ Մնայեանը,  
անկիւն մը քաշուած:

Խորհրդաւոր ժպիտ մը դէմքին ու  
հանդիսաւոր մօտեցայ անոր:

- Այս եղա՞ւ, Մնայեան, գոչեցի,  
հաւանաբար ըսածդ, դո՛ւն որ, դուն որ  
ուրիշներուն...:

- Ի՞նչ է պատահած, վերցուց ան  
գլուխը իր առջեւ փուռած դրական թեր-  
թի մը էջերէն:

- Դեռ ի՞նչ կ'ուզէիր որ պատահէր,  
շարունակեցի միշտ լուրջ, չի՞ բաւեր ե-  
ղածը, ա՛ռ եւ կարդա՛...:

Եւ անոր երկարեցի օրուան «Յառա-  
ջ»ը: Ու աւելի մեղմաձայն.

- Եթէ երկու օր առաջ ինծի պատ-  
մած չլլայի Պոլսոյ մասին դրածդ,  
պիտի կարծէի թէ՛...:

- Բայց կը շարունակեմ բան չհաս-  
կընալ ըսածներէդ, Փոլստեան, բանը  
ինչո՞ւմն է...:

- Կարդա՛ սա քերթուածը եւ կը  
հասկնաս:

Երբ Մնայեան աւարտեց իր ընթեր-  
ցումը, լման դէմքը ինծի դարձուց:  
Դժուար թէ կարենամ նկարագրել դայն:

- Փօլստեան, օտքի ելաւ շուարած,  
խկապէս որ... իրաւունք ունիս, ի հար-  
կէ, բայց իսկապէս որ զարմանալի է  
այս զուգարիպութիւնը, անհաւատալի  
նոյնիսկ...:

- Անհաւատալի՞, ո՛չ, սիրելիս,  
ընդհակառակն, հրաշալի՛... չես կրնար  
երեւակայել թէ ի՞նչ հրաշալի է...:

- Քերթուածը թերեւս, բայց...:

- Մտիկ ըրէ, Մնայեան, ըսի, տե-  
ղաւորուելով անոր կողքին... Հրաշա-  
լին քերթուածը չէ... Հրաշալին դիտե՛ս  
ի՛նչն է, Արշալոյս Մարտիանի եւ քու  
նոյնուած թիւ նոյնութիւնն է... Կա՞յ  
մեզի համար աւելի հրաշալի բան քան  
տեսնել, հաստատել թէ սովետահայ  
քերթողը եւ Պէյրութի հասակ նետած  
զրագէտը ունին նոյն նայուածքը՝ նոյն  
տեսարանին դիմաց: Կը դիտեն Պոլսը,  
Արարատը, Եփրատը՝ նոյն հայու աչքով,  
կը սարսուտ նոյն սարսուտներով, կը  
զգան, կը տիրին, կ'ընդզղին՝ նոյն  
հոգիով, նոյն սրտով:

Ու այս չէ՞ մեզ դեռ կանգուն պա-  
հողը, պայքարին մէջ մեզի սիրտ տուտ-  
ղը, թէ մեր բոլոր բաժանումներէն, մեր  
սարակարծութիւններէն, մեր վէճերէն  
վեր, կան գեռ սրբազան, բարձր կայան-  
ներ, ուր ինքզինք կը գտնէ հայութիւնը,  
անեղծ, միակամ: Դեռ կան, կը շարու-  
նակեն դոյութիւն ունենալ ակնադրիւր-  
ներ, որոնց կենարար լուրերը կը մաք-  
րեն մեզ մեր մեղքերէն, մեր վէճերէն  
ու կը վերադարձնեն մեզ մեր նախկին  
զեզեցկութեան, մեր նախկին առուջնու-  
թեան, մեր խնդութեան, - մաքրամա-  
քուր մեր Հայութեամբ:

Կ. փ.

### ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

*Կ. Փօլատեանի «— Զրոյց Պ. Մնայեանի հետ» գրութեան մէջ, իսոք կ'ըլլայ Պ. Մնայեանի «Քաղաքը» (է-Պոլիս) գրութեան եւ Արշալոյս Սարոյեանի «Ստամբուլում» գրութեան միջեւ եղած նմանութեան մասին: Ընթերցողը անորոշութեան եւ տարակոյսներու մէջ չձգելու համար, Պ. Մնայեանի «Քաղաքը» արձակէն ետք, կրտանք նաեւ այս թիւով Արշ. Սարոյեանի «Ստամբուլում» գրութեանը, յայտնելով, թէ դժուար է Կ. Փօլատեանի սուած բացատրութենէն աւելի զեզնցիկ բացատրութիւն մը տալ այս երկու գրութեանց նմանութեան մասին:*

Հեռու – հեռուից իմ դէմ փռուեց  
 Ստամբուլը լայնատարած,  
 Հիացմունքի ցոլքը վառուեց  
 Աչքերիս մէջ եւ իմ հագում:

Տեսայ շէնքեր ե՛ւ հիմ, ե՛ւ նոր՝  
 Գօտու մնամ ծովը գրկած,  
 Եւ մզկիթներ հարիւրաւոր,  
 Միմարէթները երկնքում:

Մի ակնքարք... յետոյ մէկից  
 Շէնք ու մզկիթ անհետացան,  
 Այս ի՞նչ պատրանք է սրտամաշ՝  
 ջրերը ջինջ կարմիր դարձան...

Կարմիր ծովից՝ աչքերիս դէմ  
 Վարուժանն է կարծես յառնում,  
 Իրբեւ հօր մի ուրուական  
 Զօհրայն է լաւ դէմս կլնում:

Սարսուտ հմ... Փոքր ինչ հեռում  
 Սիամանթօն է քայլում կամաց,  
 Կողմին՝ Սեւակը լըջախոհ,  
 Եւ Կամիտասը խեղճացած:

Եւ քարքում հմ աչքերս արագ,  
 որ տեսիլն այդ անհետանայ,  
 Եւ ուզում հմ պատրանքներից  
 հոգիս մի պահ քեքեւանայ:

Բայց չի լինում... Ու ես հիմա,  
 երբ շքում հմ Ստամբուլում  
 Նոյն դէմքերն են աչքիս առաջ՝  
 ցասման բոցեր հայեացքներում:

ԱՐՇԱԼՈՅՍ ՍԱՐՈՅԵԱՆ

# Կ Ր Ա Կ Ը

Գրեց՝ ՄՄԲԱՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Չուշարանը լեցուած էր ամէն տե-  
տակ ձայներով: Մրտա ու փոշոտ դէմքե-  
րը՝ ուրուակտններու պէս կը շարժուը-  
կէին հոս, հոն, եւ ծանր մուրճներով հո-  
ղը կը ծեծէին, երկաթէ ձոյլերու համար  
կաղապարներ շինելու:

— «Անիծուի՛ այն օրը՝ երբ օտարու-  
թեան ցուպը ձեռքս առի, եւ ինկայ այս  
գործարաններու ակոսներուն տակ: Ես  
ի՞նչ գործ ունէի այս հետուոր ու աս-  
նաստուած երկիրը», կը մրմնջէր Մար-  
գիս անլսելի ձայնով մը, ու կը մըճա-  
հարէր հողը՝ իր ամբողջ ուժովը, քըրտ-  
նած, վշտահար, բայց առկուն: Կը լըն-  
ջէր ծանրօրէն, քրտինքներու մէջ կը լո-  
ղար. եւ երբեմն այնքան կը զզուէր իր  
գործէն, որ թքնել կ'ուղէր անոր վրայ,  
եւ հեռանալ այդ դժոխքէն:

Մեղմացնելու համար, սակայն, այս  
տաժանքն ու թախիծը, ան՝ իր հոգու  
պապակած լըթները կ'երակրէր իր պա-  
տանեկան յուշերուն, եւ երեւակա-  
յութեան թեւերուն վրայ նստած՝ կ'եր-  
թար իր հայրենի տշխարհը, Յանվա-  
սիւնն, որ քարքարուտ լեռներու ստորո-  
տը, աղեղնաձեւ գոգի մը մէջ բազմած  
արեւախանձ գիւղ մըն էր:

Ամբողջ օրը հոն կը թափառէր, Փո-  
ղոցները կը շափշփէր: Լեռնալանջի վը-  
րայ պատկած այգիները կը բարձրանար:  
Անոնց ախորժակամ խաղողներէն խոշոր-  
խոշոր ողկոյզներ կը քաղէր, եւ այդ  
բարձունքներէն կը դիտէր իրենց գիւղը,  
ուր, կարասներու մէջ պինին կը պնայճար  
եւ քաջարի ժողովուրդ մը՝ իր հազարա-

շէն տուններու ամբարները՝ պաշարնե-  
րով կը լեցնէր:

Իրենց գիւղը՝ ըլլալով կարեւոր կա-  
յան մը յեղափոխականներու երթեւեկու-  
թեանց, կառավարութեան մասնաւոր ու-  
շաղրութեան առարկայ էր դարձեր:

Վերջին տարիներուն, երեք հալու-  
կային կոիւնք տեղի ունեցած էին հոն:  
Առաջին երկուքը՝ շատ յաջող: Իսկ վեր-  
ջինը՝ աղիտալի: Սպաննուեցան հարիւր  
քառասուն գիւղացիներ եւ քանի մը յե-  
ղափոխականներ: Կողոպուտի ենթար-  
կուեցաւ գիւղը: Տարին երկու հազարէ  
աւելի անասուններ, այսինքն՝ գիւղին  
ամբողջ նախիրը: Տարին նոյնիսկ անկո-  
ղիններն ու աման շամանը: Կրակի տը-  
ւին գոմերն ու մարագները, եւ գիւղը  
մոխրի վրայ նստեցուցին:

Հակառակ, սակայն, այս համատա-  
րած աւերին, վերապրողները չընկճուե-  
ցան, Կարճ ժամանակէն, իրենց կեանքը  
նորէն բնականոն հունի մէջ մտաւ: Կազ-  
մակերպական գործը նորէն սկսաւ շար-  
ժիլ, եւ ժամն ու զպրոցը նորէն բաց-  
ուեցան:

Մարգարին ախորը ըրեր էին դպրոց՝  
երկու ուսուցիչներով: Մէկը՝ Սեդրակ  
անունով խարբերդցի երիտասարդ մը,  
կըթուած եւ ազնիւ, իսկ միւսը՝ Յան-  
վառննու Գրդոյ նազարը:

Այս երկուքին գործն էր՝ հայերէն  
գրել-կարդալ եւ եկեղեցական արարո-  
ղութիւն սորվեցնել երախաններուն, ու  
զրգուել անոնց հպարտութիւնը ըսելով  
որ, մեր պատմութեան ամէնէն յայտնի

Հերոսները՝ Վարդան Մամիկոնեան եւ Սասունցի Գաւրիէն են հղած: Երկուքն ալ տարօնցի:

Տ՞

Երբ դպրոցական յիշատակներու մասին կը մտածէք, Սարգիսի մրոտ դէմքին վրայ ժպտած կը սկսէր ծաղկիլ, և մուրճին Հարուածները քնազղաբար աւելի կ'արագանային, ըսելու համար կարծես, որ Գրգոյ Նաղարը այնքան ալ մեղադրելի չէր:

Ուրիշ ի՞նչ կերպ կ'ընար վարուիլ ան՝ իրեն հետ, եւ ինչքի բերել զինք:

Սարգիս՝ շատ չար տղայ մըն էր: Թէ՛ դպրոցէն ներս, եւ թէ՛ դպրոցէն դուրս՝ կատարեալ անտակ մը: Հակառակ էր ան, մասնաւորաբար, աղջիկներուն, և հոգեւին կ'ատէր զանոնք: Զրօնանքի ժամերուն՝ քարերով ու փայտերով անոնց վրայ կը յարձակէր, եւ անոնք ալ կու գային Գրգոյ Նաղարին բողոքելու:

Ա՛յ՛ ծեծ, լաց, հայհոյանք:

Քարերդցի վարժապետը՝ իր մանկավարժական խրատներով, կ'աշխատէր շարունակ Նաղարին զիջք փոխել աշակերտներուն հանդէպ, սակայն ան՝ իր քնաւորութեան մէջ անդրադուելի մնաց:

Օր մը, երբ գրօսանքը վերջացաւ եւ Սարգիս դասարան մտաւ, նշմարեց որ Նաղարը՝ դալար վարոց մը ձեռքը բռնած՝ սեղանին առջեւ կը սպասէր:

Սարգիս անմիջապէս կուսնէր որ, այդ փայտը իրեն համար էր պատրաստեր: Վարժապետը, անմիջապէս հանդարտօրէն մօտեցաւ անոր, եւ մէկէն պոռաց.

— Տօ՛ անպիտան տղայ, ալ հերիք չե՞ն ըրածներդ:

Սարգիս, յանկարծակիի եկածի պէս կակապեց.

— Տօ՛ ես ի՞նչ եմ ըրեր, վարժապետ: Երբ վերջին հարուածէն խոյտ աւուաւ, դալար փայտը շառաչելէն իջաւ իր ընկերներէն Աւոյի հրեսին, որ ցաւէն՝ սուր ճիչ մը արձակեց:

— Ո՛ւհ, վարժապետ, զքու հօր հա-

պին...: Ու փախաւ դուրս:

Աւօ այլեւս դպրոց չեկաւ: Երջանաւարտեց:

Որոտոմանինք սակայն, որ Սարգիսը՝ այնքան ալ բարի պոռուց մը չէր: Զփորձենք արդարացնել զայն, եւ կամ անտեսել անոր արարքները: Երբ դըպրոցէն դուրս կ'ելլէր՝ ուրիշներու հուսելը կը սպաննէր: Պատիկ ձագերու վիզը կը կորէր: Պտուղի ծառերէն՝ խակ պտուղները վար կը թափէր: Բրուտներու շինած նոր ամանները կը ջարդէր, եւ իր քոյրերը առանց որեւէ պատճառի կը ծեծէր:

Իր մայրը, շարունակ, անոր երեսին կը պոռար ու կ'ըսէր.

— Լաօ՛, քու արեանդ մէջ տապկուիս: Այս խեղճ աղջիկները ի՞նչ են ըրեր քեզ, որ այդպէս անգթօրէն կը ծեծես:

Ո՛չ միայն Նաղար վարժապետը, այլ նաեւ ամբողջ դիւղացիները լարուած էին անոր դէմ:

Տ՞

Օգոստոս էր: Կալերու վրայ օսկեփոշիի բարակ մէզ մը կը ծփծփար: Սայլերը՝ փոշոտ ճամբաներէն ղէպի արտոնք կը ճոճոյային: Այգիներէն՝ հասած ողկոյղները անհուն մօզականութեամբ մը կը ժպտէին, և զիւղը՝ անկուրթեամբ այգեկուրթին կը սպասէր:

Այդ օրերուն մանաւանդ, պէտք էր այգիներուն հսկել:

Սարգիսինք երեք այգիներ ունէին: Երկուքը՝ զիւղէն քիչ մը հեռու, սարալանջին վրայ, Սարգիսի հսկողութեան տակ կը գտնուէին, իսկ միւրը՝ զիւղին մօտ, իր քոյրերը կը պահէին:

Գողերը, անշուշտ, այդ երախաներէն չէին վախճար, սակայն, անոնք պարտաւոր կը գզային ինքզինքներն՝ իրենց սեփականութեան վրայ հսկելու, ինչ կերպ որ կրնային:

Օր մը, երբ Սարգիս պատրաստուէր էր այլեւ երթալու, իրենց դրացի աղջիկը՝ Մաւիկ, իրեն տարեկից, ժպտազին մօտեցաւ անոր եւ ըսաւ.

— Սարգի՛ս, վաղը քե՛զ մը խաղող կը

բերե՞ս մեծ մայրիկին:

- Լա՛ւ, լա՛ւ, պատասխանեց կրտսրուկ եւ հեռացաւ:

Ասկէ առաջ, ամէն անգամ որ ան այգի երթալու ըլլար, ներքին անդիմադրելի մղումով մը՝ իր ճամբան կը շեղէր, կը մտնէր ուրիշներու այգիներուն մէջ, կը քաղէր խաղող կամ ուրիշ պըտուղներ, նշաններ կը դնէր խոշոր ողկոյններու առջեւ՝ յաջորդ օրուան արշաւանքին համար, ապա կ'երթար իրենց այգին:

Այսօր, սակայն, այդպիսի բաներ չըրաւ: Մաւիկի քաղցրալուր ձայնը իր ականջին մէջ կը հնչէր շարունակ, և ինք չկրցաւ շեղիլ գէպի ուրիշներու այգիներէ: Ուղղակի գէպի իրենց այգին անպարեց, եւ առանց ժամանակ վատնելու՝ թաշկինակ մը լեցուն խաղողով վերողարձաւ Մաւիկինց տունը:

- Մեռնի՛մ քրդի, լա՛ս, դուն լաւ տղայ կ'ըլլաս, ըսաւ մեծ մայրիկը, մինչ Մաւիկ անուշ ժպիտով մը կը նայէր անոր դարձացած, թէ ինչպէս եղաւ որ ան իր հրամանը անմիջապէս կատարեց:

Մարդիս՝ անխօս, ամօթխածութեամբ մը գլուխը կախեց: Անհունօրէն կը փափաքէր Մաւիկի աչքերուն մէջ նայիլ. սակայն, համարձակութիւնը չունենցաւ այդ բանը ընելու, եւ անմիջապէս վերողարձաւ այգի:

Ինչո՞ւ համար այս փոփոխութիւնը: Կախարդական ի՞նչ բան էր տեղի ունեցեր: Պատանեկան կեանքի արշալո՞յսն էր ան: Նորագարդ յոյգերու դարնանային հովե՞րն էին որ կը փչէին, թէ՞ անանուն ծաղիկներ էին Ծլեր իր հոգուն մէջ:

Քանի՞ քանի անգամներ Մարդիս Ծեծեր էր դայն, եւ ան՝ իր մեծ մօրը բողբոջէր էր այդ մասին: Զարմանալի՛ երեւոյթ: Այդ անստակ տղան, այսօր, գառնուկի մը պէս՝ անոր առջեւ կանգնած, չէր համարձակեր նոյնիսկ անոր աչքերուն մէջ նայիլ:

Այդ օրուընէ սկսեալ, ան՝ բոլորովին նոր յոյգերով, ցերեկները՝ Տէր Կարպետինց տանիքը կը կանգնէր, Մա-

ւիկի գրան ճիշդ դիմաց, եւ կը սպասէր անոր դուրս գալուն: Ծրք ան ուշանար, բան մը կորսնցնողի պէս, արագ-արագ տանիքին բուրբոջը կը դառնար, եւ կը սուչէր ու կը շուար:

Մաւիկ դուրս կ'ելլէր խնդալով: Կը բարձրանար տանիքը, կը կանգնէր անոր քով, եւ երկուքը միասին՝ կը սկսէին սարէն ձորէն խօսակցիլ:

- Այսօր այգին կ'երթա՞ս, կը հարցընէր:

- Այո՛, կը պատասխանէր եւ գլուխը կը կախէր: Աչքին պոռոյժ սակայն անոր դէմքը կը գիտէր, զոր, կարծես, նոր էր տեսեր: Եէկ մագեր: Արեւախանձ դէմք: Կապոյտ, պայծառ աչքեր: Ոնամբով շարուած ակունք եւ քաջառողջ կազմ: Ի՞նչն էր պատճառը, որ այս բաները ասկէ առաջ չէր նշմարած, եւ հիմա էր որ կը տեսնէր: Չէ՞ որ հազար անգամներ իրարու հետ խաղացեր էին եւ զիրար Ծեծեր:

Իրողութիւնը այն էր որ, Մարդիս, իր հոգու աչքերովը զայն չէր տեսած առաջ: Այս օրերուն էր որ զայն կը տեսնէր լիութեամբ: Որովհետեւ, այս օրուայ տանիքը՝ բոլորովին տարբեր տեսնել էր:

Ու բան մը խլրտաց անոր սրտին մէջ: Թե՛լ մը փրթաւ: Ոտքերը դետին կը գամուէին, եւ չէր կրնար գիւրութեամբ հեռանալ անկէ:

Այդ օրերէն սկսեալ՝ Մարդիս խնջօքացաւ: Ո՛չ գողութիւն կ'ընէր, ո՛չ կը Ծեծէր ուրիշները, եւ ո՛չ ալ ռեւէ մէկու վնաս կը հասցնէր:

Ամէն մարդ կը զարմանար կատարուած փոփոխութեան վրայ: Մաւիկն ալ կը զարմանար, եւ կը մտածէր թէ ի՞նչպէս եղաւ որ այս անստակ տղան մէկէն գառնուկի մը վերածուեցաւ:

Այգի երթալէ առաջ, Մաւիկին ըսաւ, որ վաղը մեծ մայրիկին խաղող պիտի բերէր:

Մաւիկ լսեց: Մեղմ ու անոյշ ժպիտով մը անոր նայեցաւ, եւ Մարդիս, անձայն ու անձուն քալեց դէպի այգին: Քանի մը անգամներ ուղեց ետեւը նա-

յիլ, բայց չկրցաւ: Ոտքերը իրարու կը խառնուէին: Խիճերով՝ քարերու եւ ծառերու նշան կ'առնէր, ու լիւր կը բարձրանար:

Իրենց դրացի այգեպանները՝ Սեդրակ, Մխիթար, Առաքել եւ Երեցիկն, զարմանքով զինք դիմաւորեցին այդ օրը, եւ ուղեցին հասկնալ թէ ինչո՞ւ համար էր ուշացեր:

Սարգիս, չկրցաւ ըսել անոնց որ, Մաւիկն էր որ իր ոտքերը վաճեց Տէր կարասկտեանց տանիքը, եւ չէր կրնար հետանալ անկէ:

Ըստ իրենց սովորութեան, ընկերները սկսան խաղալ, երգել ու պարել, իսկ ինք ո՛չ երգել եւ ո՛չ ալ խաղի մասնակցեցաւ այդ օրը, հակառակ եղած պնդումներուն:

— Խուրպան ըլլամ քեզ, Սարգիս, այդ ի՞նչ է պատահեր քեզ, կը հարցընէր Երեցիկնը:

Երեցիկնը չէր ուզեր, որ Սարգիսին ըսած ըստատահէր, որովհետեւ Սեդրակն ու ան, ամէն օր խոշոր-խոշոր կրեաններ կը բերէին լեռներէն եւ կուտային իրեն, որ մտով կերակուրներ եփէր:

Քանի՜ անգամներ, կրեանները անոր ժանգոտի վարտիկը պատներ էին, եւ սակայն, Երեցիկնը, օր մը օրանց չմտածեց զայն կարկանդակ մասին: Իր մայրն էր, որ կը շարժարուէր ու կը տանջուէր շարունակ, ըսելով.

— Լա՛ս, ես ի՞նչ ընեմ քեզ: Ամէն շաբաթ քեզ վարտի՛կ կ'ընամ առնել:

Սեդրակն ու Սարգիսը, սակայն, ամէն օր կրեայի միտով պատրաստուած կերակուրներ կ'ուտէին Տէր կարասկտեանց տանը:

Այդ գիշեր, երազներու մէջ տապալուրկեցաւ Սարգիս, մինչեւ առաւօտ: Երբ արթնեցաւ, այգիին եղերքէն հոսող պաղ ու զուլալ ջուրով իր երեսները թրջեց, առաւօտեան շողով ծածկուած թաշկենակ մը խաղող առաւ հետը եւ իջաւ դիւղ, Մաւիկի մեծ մայրիկին:

Մաւիկի ուրախութեան չափ ու սահ-

ման չկար: Փաթթուեցաւ Սարգիսին առանց այլեւայլի, եւ անհուն դրաւութեամբ մը անոր աչքերուն մէջ նայելով, մանկական պարզութեամբ մը ըսաւ.

— Ի՞նչ է, ամէն օր խաղո՞ղ պիտի բերես մեզ:

— Այո՛, ըսաւ ան եւ գլուխը կտիւց: Իր հոգին այնպէս տակնուվրայ էր եղած Մաւիկով, որ ո՛չ թէ կողով մը խաղող, այլ նոյնիսկ եթէ ամբողջ այգիին ուզէր, նորէն «այո՛» պիտի ըսէր:

Ի՞նչ լաւ օրեր էին, պատանեկութեան արշալուստային այդ օրերը: Ահոսս որ դացին հետացան, ու ալ չվերադարձան:



Գործարանը լեցուած էր ծուխով ու մուխով: Մեքենաներուն ճոխնչն ու կռինչը եւ սուլիչներու պարբերական սոյլերը կուզային յաճախ արթնցնելու Սարգիսը իր երազանքէն, եւ խանգարելու անոր քաղցր յիշատակներու ընծայած արբըռումները: Ան սակայն, յամառօրէն կ'առչած կը մնար անոնց եւ թոյլ չէր տար որ գործարանային այդ մթնոլորտը արգելք հանդիսանար իր հոգեկան թափառումներուն, իր ծննդավայրին մէջ, որ կարծես եզր ու սահման չունէր՝ որպէս տարածութիւն, եւ անխորաչափելի՝ որպէս միտք եւ զգայնութիւն:

Իր ականջին մէջ յոտակօրէն կը հընչէին իրենց աղբիւրներուն եւ առուակներուն մելանոյլ մեղեդիները: Աքաղաղներու զիլ կանչը: Գուլթաններու հոռովչելը: Տաւարներու կանաչարոյր աղաղակները, եւ այդ բոլորէն՝ իր հոգիին մէջ կը կաթկթէին մեղսաբանութիւն՝ սրտնք աւելի արբեցնող էին, քան հին կարասներու հրաշէկ զինին:

Իր զիւղն ու շրջապատը դադարէր էին կարծր ու կշռելի իրականութիւն դառնալէ: Անոնք հրաշագործ ուժերու էին վերածուած, եւ Սարգիս, այդ ուժերուն օգնութեամբ կը շարունակէր իր աշխատանքը, իր պայքարը, իր ձգտումները:

Օգոստոս, ամիսն էր: Շատ տաք: Գիշերները ամէն մարդ զուրս կը քնա-

նոր աստիճանագրող երկնքին տակ: Լուս էր ամէն ինչ: Լուս էին նոյնիսկ դամբոսերը՝ որոնք հանգիստ կը մրափէին: Աստղերը միայն արթուն էին ու կը ժողատէին, եւ լեռները՝ ուրուականներու պէս կանգնած՝ հեռուներ կը նայէին:

Արթուն էր նաեւ Սարգիս: Այգիին եղերքը, տաք դետին վրայ պառկած՝ աստղերուն կը նայէր եւ աղբիւրին կըրկըլոցին կը հետեւէր: Ձէր կրնար քնանալ: Մաւիկին հետ կը խօսէր մտովի եւ անոր ժպտուն աչքերուն կը նայէր դողալէն:

Անձեւ ու անտնուն յոյզեր կը վրդաժէին զինք այնպիսի աստուութեամբ մը, որ մէկէն ուղի ցատկէց, եւ վճռեց Մաւիկը տեսնել այդ գիշեր: Ա՛լ չէր կրնար գիմանալ: Մերտը պիտի պայթէր կարծես:

Թաշկինակ մը խաղողով իջաւ դիւղ: Կէս դիշերը անցեր էր: Գիւղը խորունկ ջրունով մը կը քնանար: Աղբիւրներու եւ ասուականներու ձայներն էին միայն, որ կու դային մեղմօրէն:

Սարգիս հասաւ Մաւիկենց տանիքը: Մերտը ուժգին սկսաւ բարախել, եւ եւրանները սկսան վառիլ, երբ քանի մը քայլ անդին, տեսաւ որ ան կը քնանար իր երկու քոյրերուն մէջտեղը, հրեշտակի մը պէս գեղեցիկ եւ անոր պէս կիսամերկ:

Ճնորեցուցիչ վայրկեան մըն էր: Ամբողջ էութեամբ կը դողար եւ աչքերը կը մշուշոտէին աննկարագրելի յոյզերէն: Ինչ ընելը չէր գիտեր: Ի՞նչ պիտի ըլլար իր վիճակը, եթէ զիւղացիները զինք տեսնէին, գիշերուան այդ ժամուն Մաւիկենց տանիքը:

Գերազոյն վճռակամութեամբ մը մօտեցաւ անոր: Թաշկինակի մէջ կապուած խաղողը դրաւ անոր դիտուն մօտիկ եւ անասպարանքով հեռացաւ: Փախաւ:

Առաւօտ կանուխ, երբ գիւղ վերադարձաւ, Մաւիկ իր դէմը ելաւ ժպտազին:

— Սարգիս, այդ խաղողը ո՞վ էր բերեր երէկ գիշեր եւ դրեր դուրսիս մօտիկ:

— Ծ'օ, պատասխանեց կարմրած:

Մաւիկ՝ անուշ մը անոր նայեցաւ, իսկ Սարգիս, ամօթխածութենէն դուրսը կախեց եւ հեռացաւ:

Գիւղը եղած ատեն, իր ամբողջ ժամանակը Մաւիկին հետ կ'անցընէր: Կը խօսէին, կը խնդային, կ'աւրաբանային: Ընկերներու խաղերուն ա՛լ չէր մասնակցեր: Ամէն մարդ սկսած էր խորհրդաւոր նայուածքներ նետել անոնց վրայ: Նոյնիսկ երեցկնոջը ըսած էին, որ Սարգիս սիրահարուած էր Մաւիկին վրայ:

Օր մը, երեցկինը Սարգիսը իր քով կանչեց եւ ըսաւ.

— Լաօ՛, դուն դեռ պզտիկ տղայ ես: Ի՞նչ գիտես ի՞նչ է սիրահարութիւնը: Լսեր եմ որ դուն Մաւիկին վրայ ես ծըռնը: Խելքդ դուրսդ բեր եւ վազ անցիր այդ մաքերէն:

Սարգիս, երեւութեան հանգարտութեամբ մը մտիկ ըրաւ խրատներուն, սակայն երեցկինը չէր տեսներ այն մուխը՝ որ անոր սրահն զուրս կ'ելլէր:

Երկար բարակ խրատելէ յետոյ, անցաւ կարեւորագոյն հարցին.

— Քանի մը օր կ'ընէ որ կրեայ հաւաքելու չես դացած լեռները: Ատիկ կը հետեւեցնեմ, որ դուն սիրահարուած ես: Մոռցի՛ր, լաօ՛, այդ բոլորը, եւ քու նախկին սովորութեանդ հետեւէ: Սեղորակին հետ կրեայ հաւաքելով անցուր օրերդ:

Սարգիս քաղաքավարութեամբ մտիկ ըրաւ եւ մտածեց, որ ալ հերիք էր կըրեաներու այդ որսորդութիւնը: Անոնց սուր ճանկերէն, ամէն օր իր վարտիկը կը պատռուէր: Հիմա արդէն հազնելու յարմար բան մը չէր, բայց կը հաղնէր: Նոր վարտիկի մը մասին պէտք էր մըտածել:

Ու կողով մը խաղող շալկած՝ զնաց Խաւսգիւղը, ժամ մը հեռու, իր քեռիին տունը, ժանգաղի վարտիկի մը ակնկալութեամբ:

Երկու օրէն Յառիւստինն վերադարձաւ նոր կապոյտ վարտիկով մը: Կարօտէն սիրտը կը պայթէր: Մաւիկ անոր առջեւ ելաւ, փաթթուեցաւ անոր եւ եր-



կու անգամ համբուրեց զայն :

— Մաւի՛կ, ամօթ է, մեր դրացին սեռաւ, ըսաւ Սարգիս ամօթահար :

— Շա՛տ հոգս է : Ես քեզ կը սիրեմ, պատասխանեց ան քաջաբար :

Սարգիս զարմանքով անոր աչքերուն մէջ նայեցաւ եւ հարցուց ինքզինքին թէ ի՞նչպէս կ'ըլլար, որ ինք այսքան ատեն չհամարձակեցաւ Մաւիկին ըսել՝ «ես քեզ կը սիրեմ», իսկ ան ատենց այլեւայլի իրեն կ'ըսէր «ես քեզ կը սիրեմ» :

Ճ

Ռենթ աշուն էր : Կայուկուտը վերջացեր էր, եւ այգիները՝ կթուեր էին : Հնձաններու շիրաթ կարասներու մէջ կը պծայճար, եւ գիւղացիները կը պատրաստուէին ձմեռուան հանգստաւէտ կեանքին :

Ձմեռ ատեն, կենդանիներու հոգատարութենէն զատ՝ ուրիշ աշխատանք պրծեց չկար : Կ'ուտէին : կը խմէին, կ'արբենային եւ տաւուլ զուսնայով հարսիքներ կ'ընէին :

Սարգիս, սակայն, ո՛չ արբենալու ե ո՛չ ալ ամուսնանալու ատրիքին մէջ կը կը դանուէր : Անոր արբուների արշալոյսը նոր էր բացուեր : Անորոջ ցանկութիւններու հով մը կը փչէր : Ձեփիւտաշունչ համբոյրներ կը զգար իր տաք շրթներուն վրայ : Մեղձ ու կախարդական սարսուռ մը իր բազմալար ջիղերը կը թրթոացնէր այնպէս՝ ինչպէս տաւիղի մը լարերը կը թրթոան երկնային երաժշտութենէ մը : Մաւիկ դադրեր էր մարմին ըլլալէ : Իր զգայարանները շոյող անուշ հով մըն էր ան : Շաղով ծածկուած վարդի մը արեցողցիչ բոյրն էր ան : Գունահեղեղ արեւածագերու հրեղէն նայուածքն էր ան :

Մաւիկ, իր քոյրերը եւ մեծ մայրիկը՝ իրենց թոփ Սուկոյ Ղազարի տունը կը բնակէին : Ղազար երկու աջերէն կոյր էր եւ գաւազանի օգնութեամբ կը քայլէր : Անոր սովորութիւնն էր՝ երեկոյեան ժամը եօթին մերկանալ եւ անկողին մտնել, մինչ աղջիկներն ու տղաները կը շարունակէին իրենց ուրա-

խութիւնը :

Ղազարենց տունը անոնց համար հարսանիքի տուն էր, ամէն օր : Սարգիս, հակառակ Մաւիկի հանդէպ իր ունեցած սիրոյն, չէր նախանձեր երբեք, երբ իր ընկերները անոր հետ կը խօսէին ու կը խնդային :

Իր ընկերներն ալ զայն կը սիրէին սրտանց :

Օր մը, բոլորը միասին շօքօք մը կը պարէին : Զափական քնքոյլ Ծեքեքտաներով պար մը : Աղմուկը դադրեր էր, եւ տունը լեցուած էր մեղձ պարերգին գեղեցիկ ելեւէջներով, երբ մէկէն շօքօք փոխուեցաւ քոնքալի : Ու ահա, բոլորը միասին՝ երաժշտական կշռոյթով, եւ սրունքներու նուրբ լարժումներով սկսան թեթեւօրէն ելլել ե իջնել, եւ ստգերու ուժեղ հարուածներով գետինը թնդացնել, համապատասխան բացաղանջութիւններով :

Տունը լեցուեցաւ ահուկի աղմուկով եւ իրարանցումով, երբ, յանկարծ, Ղազար, անկողին տակէն դաւազանը վերցուց, ստգի ցատկեց աղամամրկ, կանգնեցաւ պարողներուն առջեւ, եւ գաւազանը սպառնալին օդին մէջ ճօճելով պոսաց :

— Տիտէ՛, այս որո՞ւ հարսիքն է : (Տիտէն՝ մեծ մայրիկին աւելորդ առնուն էր) :

— Ղազար, խուրպան, ի՞նչ կայ որ, ճօճերը քիչ մը կը խաղան, պատասխանեց Տիտէն աղաչական ձայնով մը :

Այս պատասխանին վրայ, Ղազար՝ փայտը ճօճելով եւ հայհոյելէն, մայրներու եկած ուղղութեամբ նետեց :

Բոլորը միասին, բնազդաբար գետին ինկան, հարուածէն խուսափելու համար :

Ղազար, սակայն, կատաղած, եւ բոլորովին մերկ՝ երախաներու առջեւ կանգնած՝ կը շարունակէր պոսալալ ու հայհոյել :

Մեծ մայրիկը, կուտրած ձայնով մը ըսաւ .

— Գացէ՛ք, լսօ՛ : Գացէ՛ք, որ Ղազար քնանայ :

»

Ու գործարանը ամէն տեսակ ժայներ կը հանէր, եւ Սարգիս կը ժպտէր թեթեւօրէն, ամէն անգամ որ Սուկոյ Ղազարի այս միջնակէր կը վերսիւնէր: Անոր ժպտը, սակայն, չէր տեսնուեր իր մըրոտ սէմքին վրայ: Չայն կարելի էր տեսնել միայն իր մտքին խորշերուն մէջ:

Սարգիսին տրամադրութիւնը կը զլարթանար պահ մը, եւ կը սկսէր մտածել իր սակագրուած շարաթականի մասին:

Մեծ բան մը չէր իր առածը, բայց բան մըն էր վերջապէս:

— Կտրուողը կարողութեան համաձայն գոհարեւինն է, — կ'ըսէր Սարգիս մտովի, ու կ'անդադարանար պահ մը իր առօրեայ կեանքին: Պանդխտութեան միայնագ կեանքին: Կանոնաւոր կերպով սակագրած էր ան իր աշխատավարձը: Շարաթական այսքանը՝ կ'երթար կերակուրին ու վարձքին, այսքանը՝ հագուստին ու կապուստին, մաքրութեան ու ժամանցին: Իսկ հասարակական ձեռնարկներուն համար իր ըրած գոհողութիւնը՝ բաղդատականօրէն իշխանական էր եղած շարունակ:

Երբ այդ գոհողութիւնը կ'ընէր, Մաւիկի անթաղ ոսկորները, խորապէս կը սկսէր, որ կը հրճուէին ու կը մըմնջէին:

— Ապրի՛ս, Սարգիս, աչքս վրայ է միշտ:

Սարգիս կը հաւատար անմահութեան: Կը հաւատար, որ մեր սիրելիներու հոգիները մեզ կը նային շարունակ եւ մեր գործերը կը կշռեն:

Առօրեայ կեանքին հետ կապուած այս մտածուքները՝ անբաժան էին իր մըմնջարութեան: Կ'աշխատէր, կը ջրտնէր, կը մտածար: Ու այդ պահ մը միայն: Ուրովհետեւ ան, ամբողջովին անցեալին կը պատկանէր եւ անցեալովը կ'սպրէր:

Ու ահա՛, ան, իր յաւիտենական սովորութեան համաձայն, կը թուէր նորէն դէպի իր հայրենի աշխարհը, եւ կ'երթար այցելելու՝ յիշատակի վերածուած իր խաղընկերներուն, որոնք, մօտ կէս շար առաջ սպրեցան իրեն հետ երա-

նական կեանք մը, եւ բաժնուեցան իրարմէ պանդխտութեան բերումով:

»

Երկար ատենէ ի վեր գոցուած դուրսը նորէն բացուեցաւ: Նախկին ուսուցիչները հեռացեր էին: Նոր վարժապետը Յերշտըրցի էր, եկեղեցական արարողութեանց մէջ տկար, եւ աչքերն ալ շիւ էին:

Սարգիսին ստիպեցին, որ ինքն ալ դպրոց յաճախէ: Ան մերժեց, ըսելով որ, այդպիսի վարժապետէ մը ի՞նչ պիտի կրնայ սորվիլ: Անոր մերժումին զլարթուող պատճառը սակայն, ո՛չ թէ այդ էր, այլ Մաւիկը: Անկէ չէր կրնար հեռու մնալ ամբողջ օրը:

Քանի մը օր ետք ցնցող լուր մը հասաւ Սեդրակին, որ անմիջապէս դնաց Սարգիսինց տունը եւ զայն դուրս կանչեց:

— Ի՞նչ կայ, խէ՛ր է, — հարցոց Սարգիս:

— Գիտե՛ս ինչ: Գալ շարթուն՝ Մաւիկն ու վարժապետը պիտի նշանեն:

— Տօ՛, տղայ՛, այդպիսի բան կ'ըլլա՞յ, — բացառանչեց ցնցումով:

— Միտաքի կնիկ խանիկը ըսաւ:

Սարգիս անմիջապէս վազեց Ղազարեանց տունը: Խանիկը դուրս կանչեց՝ մանրամասնութիւնը հասկնալու համար: Մաւիկն ալ դուրս եկաւ անոր հետ:

— Դուն դնա՛, ես խանիկին հետ խօսելիք ունիմ, — ըսաւ յուզուած:

— Դուն ինձէ՛ վաղտնիք կը պահես, — ըսաւ Մաւիկ վշտացած:

— Ո՛չ, քեզ վերջը կ'ըսեմ:

Ու խանիկ մանրամասնօրէն պատմեց իրադարձութիւնը: Վարժապետը խոստացած էր հինգ կրականոց ատրճանակ մը Մաւիկայ հօրեղբորը, եթէ ան՝ Մաւիկը իրեն կնութեան տար:

— Մաւիկ լուր ունի՞:

— Ո՛չ:

Սարգիսին սիրտը կրակ լեցուեցաւ: Թակարդի մէջ ինկած թռչունի մը պէս կը քփռտկար ան, եւ ինքզինքնէն ելած՝ պոռաց:

- Մաւիկ, դո՛ւրս եկուք, ըսելիք ունի՞մ:

Մաւիկ խնդալով դուրս եկաւ:

- Այնպէս կ'երեւայ որ զաղտնի բան մը ունիս ըսելիք: Ըսէ՛:

Եւ Սարգիսի լիզուն քարացաւ:

- Ի՛նչ, ըսէ՛: Ի՞նչ է այդ զաղտնիքը:

Քունէն նոր արթնցողի մը պէս, Սարգիս սկսաւ կահազել:

- Գիտե՞ս, Մաւիկ, դուն լուր չունիս, բայց եկող շարթուն քեզ պիտի նըշանեն վարժապետին հետ:

Ան քանի մը հայհոյանքներ տուաւ եւ սկսաւ կարճրել զայրոյթէն:

- Մտի՛կ ըրէ՛, Մաւի՛կ, - ըսաւ Սարգիս, - եթէ դուն չտունես՝ քեզ բռնութեամբ անոր չեն կրնար տալ:

«Ես կը նախընտրեմ ինքզինքս խեղդել, քան այդ օձը առնել:

- Հիմա գնա՛: Ես նորէն կու գամ: Սարգիս գնաց գտնելու իր ընկերները, - Սեդրակն ու Առաքելը, խորհրդազօգուծեան համար:

- Պէտք է բան մը ընել, - ըսաւ Սարգիս:

- Ի՞նչ ընենք, Սարգիս: Բան մըն ալ չենք կրնար ընել, - ըսաւ Առաքել:

Սեդրակ լուռ էր, եւ դուրսը կախ, մտիկ կ'ընէր: Սարգիս գիտէր, որ իր ընկերներն ալ սրտանց կը սիրէին Մաւիկը, եւ երեքին ալ ցաւը միեւնոյնն էր:

Ան անմիջապէս վերադարձաւ Ղազարինց տունը: Մաւիկ մէկ անկիւնը նստած՝ հեղեղի պէս արցունք կը թափէր:

Սարգիս գնաց տնոր քով եւ ըսաւ.

- Մի՛ վախնար Մաւիկ, քեզ չեն կըրնար բռնի ուրիշի տալ:

Մեծ մայրը ըսաւ, սակայն.

- Սարգիս, խուրպան, Մաւիկը չեզաւ, Սիրանոյշը քեզ կու տամ:

Սարգիս, խնթի մը պէս ցնցուեցաւ, աչքերը կարճրեցան, եւ սկսաւ պոռալ ու կանչել:

- Այդպէս բան մի՛ ըսեր: Հիմա՛ ձեր ամբողջ ամանները կը ջարդեմ:

Եւ մէկէն, խորհր հողէ աման մը վերցուց, զարկաւ գետին, ջարդեց, եւ դուրս թռաւ:

Յաջորդ առաւօտ, Սարգիս գնաց Մաւիկը տեսնելու: Յանիկ ըսաւ որ հօրեղբայրը երկու անգամ ծեծելը էր պայն, եւ ստիպեր որ հաւանութիւն տայ նշանուելու եւ ամուսնանալու: Ան, սակայն, պատասխաններ էր որ, նոյնիսկ եթէ զինք սպաննեն, այդ մարդուն կին պիտի չըլլայ:

Սարգիս տեսաւ զայն եւ սրտապընդեց, որ չըլլայ թէ վախնայ: Բան մը պիտի ընեն:

- Ի՞նչ պիտի ընէք, Սարգիս: Ըսէ՛: Մըմնջեց ան արտասուազին:

- Քեզ պիտի փախցնենք:

- Որո՞ւ համար:

- «Ձեմ դիտեր»: Պատասխանեց Սարգիս, եւ գնաց Սեդրակն ու Առաքելը տեսնելու:

- Տղա՛ք մէկ միջոց միայն կայ Մաւիկը ապատելու: Փախցնե՛նք:

- Որո՞ւ համար: Հարցուց Սեդրակ:

- «Ես պատրաստ չեմ, տակաւին ամուսնութեան»: Պատասխանեց Սարգիս: «Կամ քեզ, կամ Առաքելին»:

Սեդրակ պատասխանեց, որ իր մեծ եղբայրը տակաւին չէր կարգուած, եւ հետեւաբար, ինք չէր կրնար անկէ առաջ ամուսնանալ: Առաքելին յարմար է:

Առաքել լուռ մը մտիկ կ'ընէր: Երբ իրեն հարցուեցաւ, ան պատասխանեց որ, եթէ իր ծնողքը ուզեն, ինք կ'ուզէ:

Սարգիս ու Սեդրակ անմիջապէս զացին մեծ մայրը տեսնելու: Ան պատասխանեց որ, եթէ Տօնէն, այսինքն Առաքելին մեծ հայրը ուզէ, ինք կ'ընդունի:

Տօնէն սակայն, հաւաքեց զանոնք իր առջեւ, ըսաւ.

- Տղա՛ք, կը խնդրեմ, կ'աղաչեմ: Եկէք այդ երախտայական բաներէն վազ անցէք, եւ պացէ՛ք վարժատուն բան սորվեցէք:

Սարգիս շյուտահաստեցաւ սակայն:

Գնաց գիւղին քաւանային մօտ, և պատմեց անոր ամբողջ եղելութիւնը, ապա, զնաց Մաւիկին՝ որ վարդապոյն չըջադպեստ մը հազած իրեն կը սպասէր:

- «Պատրաստ եմ»: Ըսաւ յուզումնախառն ժպիտով մը:

- «Մաւիկ» սկսաւ Մարգիտս պարտուած ձայնով մը, «Սեղրակը, Առաքելը եւ ես, չափչփեցինք եւ տեսանք որ, անկարելի է քեզ փախցնել: Սակայն Տէրտէրին յայտներ եմ ամէն ինչ: Եթէ դուն չուզես, ան նշանը չ'օրհնեմ»:

Մաւիկ լայով ըսաւ.

- Պատան սեւցուցեր է կոնակս ծածելէն:

Թաղորդ օրը, երկու անձանք մարդիկ դացին Մաւիկենց տունը:

- «Անտուա՛ծ վկայ, նշանտուքի համար եկան», բացաղանչեց Սեղրակ, ու վազեց Սարգիսին լուր տալու:

Սարգիտ, անձիջապէս զնաց, կամացուկ մը դուռը բացաւ, եւ կանդնեցաւ մէկ անկիւնը, մուրհին մէջ: Պանդկը զայն նշմարելով՝ մօտեցաւ անոր եւ ըսաւ.

- Պատան քիչ առաջ գէշ ծեծ մը արւաւ Մաւիկին, եւ ըսաւ որ անոր հողին իր դաշտինին ծայրին է:

- «Ապանե՛ս ալ՝ չե՛մ տոնեմ», պատասխանեց Մաւիկ քաջաբար:

Ուզընկանները՝ կերան, խմեցին, խօսակցեցան, եւ Պատան զնաց Տէրտէրին ետեւէն:

Աղջիկներն ու կիները անկիւն մը հաւաքուած, կը խօսակցէին եւ սիրտ կու տային Մաւիկին, որ բարձրաձայն կը հեկեկար:

«Օրհնեա՛ ի Տէր» ըսելով, ապա, նստեցան նորէն ուտելու եւ խմելու:

Ժամանակը եկաւ վերջապէս նշանտուքի: Մաւիկը քաշկռտելով մէջտեղ բերին:

- «Զե՛մ ուզեր, չե՛մ ուզեր, չե՛մ ուզեր», կը պոռար ան՝ լայէն:

Պատան սկսաւ ծեծել զայն դիւակաւորի մը պէս:

Տէր Հայրը ազդարարեց անոր որ

չզարնէ: Պատան նորէն զարկաւ:

- Զե՛մ ուզեր, չե՛մ ուզեր: Զե՛մ ուզեր:

Տէր Հայրը ոտքի կանգնեցաւ եւ հարցուց.

- «Մաւիկ, զաւակս, կը սիրե՞ս այս տղան», վարժապետը ցոյց տալով:

- «Ո՛չ», պատասխանեց եւ շարունակեց հեկեկալ:

Պատան վայրենիի մը հարուած տըւաւ անոր կոնակին: Տէրտէրը կրկնեց իր հարցումը:

- Մաւիկ, ինձ նայէ եւ պատասխանէ: Դուն այս աղտն կը սիրե՞ս:

Ան, առանց որեւէ պատասխան տալու շարունակեց իր լացը:

Պատան, սկսաւ պոռպոռալ եւ ապտակներ իջեցնել անոր երեսին:

Տէր Հայրը երբորդ անզամ կրկնեց իր հարցումը:

Մաւիկ, վերահաս հարուածներուն սարսափէն եւ ստացած ծեծէն զըրեթէ խելակորոյս՝ դուրսը երեք անգամ վեր ու վար շարժեց, եւ Տէր Հայրը նշանը օրհնեց եւ շարաթ մը վերջ պսակուեցան:

Ճ

Ամիս մը ետք, Մաւիկ գիւղ վերադարձաւ, վարժապետին հետ: Սարգիսի սրտին վրայ որոշ խաղաղութիւն մը իջաւ:

- «Մաւիկ, ի՞նչպէս, կը սիրե՞ս ամուսինդ», հարցուց օր մը Սարգիտ:

Բարեկութենէն կարմրած՝ պատասխանեց.

- Ա՛ն դեռ իմ ամուսինս չէ եղած եւ պիտի չըլլայ: Ամէն օր ինձ կը ստիպեն որ անոր կին ըլլամ, իսկ ես կը պատասխանեմ, որ բունի սուտով գիտ կարգեցիք եւ անկարելի է որ անոր կին ըլլամ: Պարոն վարժապետին ալ ըսեմ որ գինք չեմ սիրեր, եւ իրեն կին պիտի չըլլամ:

Սարգիտ ըսաւ.

- Մաւիկ, անոք քեզ հինգ կրակաւնոց ատրճանակով ծախեցին, եւ իրենք իրենց ատրճանակը տոխն, ալ քու գոր-

ծերուդ ինչո՞ւ կը խառնուին :



Տարին անցաւ, եկաւ Յուլիս : Խուճը մը մարդիկ փողոցը կանգնած կը խօսէին խորպաք երթալու մասին : Սարգիս իրենց փեսայ Մուսոյին ըսաւ որ, ինք ալ կ'ուզէ խորպաք երթալ :

- Տղայ լա՛օ, կը կարծես որ մենք Առաքելոց վանքը ուխտի՞ ք որ կ'երթանք, որ դո՛ւն ալ կ'ուզես հետերնիս գալք, ըսաւ Մուսոյ : Ախոր պանդխտութիւն կ'ըսեն, լա՛օ, պանդխտութիւն :

- Ե՛ս ալ պիտի գամ ձեզի հետ, Մուսոյ, ինչ որ ալ ըլլայ այդ երկար բարը :

- Եթէ պիտի գաս, ճամբու ծախս պէտք է ունենաս : Դրա՛մ :

- Ո՞րչափ դրամ :

- Առնուազն երկու սկի :

Սարգիս անմիջապէս տուն դնաց եւ յայտնեց մորն ու տնեցիներուն որ ինք խորպաք պիտի երթայ :

Նախ պոռագին : Ազա զարմացան այդ մտքին վրայ եւ աշխատեցան համոզել զայն, որ ինք տակաւին պզտիկ տղայ մըն է, եւ ո՛չ թէ պանդխտութեան երթալու մարդ : Սակայն, երբ տեսան որ Սարգիս վճռած է երթալ, բոլոր ազգականները տունը լեցուեցան, սկսան լալ ու ողբալ, եւ միեւնոյն ատեն անհրաժեշտ դուրսը դռնակը :

Մայրը սկսաւ դրամը կարելի հապուստներուն մէջ, լալէն, եւ խրատներ տալ :

- Լա՛օ, չըլլայ կորսնցնես դրամդ և ճամբան մնաս : Ինքզինքիդ հոգ տար եւ շուտով վերադարձիր :

Գիւերը թոնիր վառեցին, եւ սկըսան պաշարը պատրաստել : Մէկ կողմէն խմոր կը շաղէին, միւս կողմէ կուլայի : Կարծես սիրասունի մը դիակին վրայ էր որ կուլային բոլորը :

Մաւիկ՝ Սարգիսին ջով նստած,

միւսնորուն պէս կուլար :

- Մաւիկ ինչո՞ւ կուլաս : Մի՛ լար, ըսաւ Սարգիսը յուզումնաբառն :

- Սարգի՛ս, շատ չմնաս խորպաք, շո՛ւտ եկուր, ըսաւ ան հեծկլաւէն :

- Այո՛, Այո՛ : Ետեւ կու գամ :



Առաւօտեան ժամը եօթին՝ տունէն դուրս ելան : Լացն ու կոծը սաստկացաւ : Մօրը աչքերը լալէն ուներ էին : Մաւիկ յարմար առիթ մը գտաւ, Սարգիսը մէկ կողմ քաշեց, զոյգ մը դուլպայ տըլաւ անոր, եւ ըսաւ հեկեկալէն.

- Չմոռնա՛ս, Սարգիս : Ե՛նտ եկուր :

- Այո՛, այո՛, շուտ կու գամ :

Երկու անգամ համբուրեց Սարգիսին, բայց ան ամօթէն դուրսը կախեց :

- Սարգի՛ս, համբուրէ՛ զիս : Այս վերջին համբուրն է, ըսաւ Մաւիկ, եւ անոր հետ քալեց մինչեւ դիւղէն դուրս :

Երբ բաժնուեցան իրարմէ, Սարգիսը սկսաւ հեղեղի պէս արցունք թափել, եւ զգաց խորապէս, որ կը քալէր դէպի անգութ եւ անստուած ապագայ մը :



Ո՞ւր մնաց շուտով վերադառնալու իր խոստումը : Ի՞նչ սպասումներով ապրեցան Մաւիկն ու մայրը մինչեւ 1915-ի սեւ օրը, եւ ի՞նչպէս մարեցաւ անոնց հրազը :

Ու այօօր, կէս դար վերջ, Սարգիսը տակաւին կը շարունակէ իր մընահարումը ծխոտ ու մխոտ դործարանին մէջ, դառն քրտինքով իր ապրուստը կը ճարէ, եւ հասարակական ձեռնարկներուն իր պարտականութիւնը կատարած ատեն, կը զգայ հոգեւին, որ Մաւիկն ու մայրիկը անդենականին հզերքներէն քաղցրօրէն իրեն կը ժպտին :

Ս. Շ.

ՆՈՐ ԵՐԳԵՐ

## Ո Ր Պ Է Ս Զ Ի . . .



Գործ օրուան մէջ իսկ՝ մընացիր զըւարթ,  
Տըրմութիւնըդ խո՛ր չըյայտնեցիր դուն.  
Քուխ ամպին մէջ՝ շո՛ղ, ձըմբան մէջ իսկ՝ վա՛րդ,  
Գիւեըը լացի՛ր, ժըպեցար առտուն:

Եւ կեանք հայեցցիր Արեւէն անհաս,  
Ո՛չ թէ վայելի, հաճոյի համար,  
Այլ որպէսզի դուն ըսփոփանքն ըլլաս՝  
Մարդուն անտէրունչ, որքին դողահար:

Որպէսզի մըտնով խորհո՛ւրդը պարզես,  
Որպէսզի սըրտով սըփո՛ւս ջերմութիւն.  
Խոստումըդ պայծառ՝ բերես ի հանդէս,  
Քեզ սիրողներուն ընծայես ողջոյն:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

# Մեկսարտիք Ըծարրութիւն...

Գրեց՝ ԱՆԱՅՆՍ ԼԵՐԱՆ

Նախ չհասկցաւ: Ոչ պատճառը եւ ոչ ալ նպատակը: Մովորական համբոյր մըն էր, կնոջ մը կողմէ, իրեն՝ կնոջ մը ուղղուած, պարզ եւ անմեղ համբոյր մը, որ բնաւ, նոյնիսկ վայրկեանի մը համար, չէր կրնար հեռք թողուլ իր մտածումներուն վրայ: Ըմբռնելէն ետք՝ ուրիշ հանգամանք առաւ ասիկա: Դիմացինին շրթներուն ընդմէջէն հոսող դնահատանքի արտայայտութիւնը, որ հանգչեցաւ ճիւղի ճիւղ իր ճակատին մէջտեղը, թոյնի մը հակազդեցութիւնը գործեց ամբողջ մարմնին մէջ:

- Ինչո՞ւ համբուրեցիր, ըսաւ կեղծ արհամարհանքով:

Կինը ժպտեցաւ միայն: Երթներուն ծալքն ու աչքերուն արտայայտութիւնը այնպիսի տպաւորութիւն մը կը սփռէին, որուն առջեւ բառերուն տղկեցութիւնը կը չքանար բոլորովին:

- Ինչո՞ւ համբուրեցիր... կրկնեց այս անգամ բարկացած:

- Այնքան կը նմանինք իրարու, վերջապէս խօսեցաւ միւսը:

Տակաւին չէր նստած: Լուացքի տաշտին առջեւ կանգնած, սրունքները բաց, եւ լայն հագուստին փէշերը ծունկէն վեր սթաթած՝ կը կենար: Տաք ջուրէն ելած շոգին կաս կարմիր ըրած էր զէմքը: Գրտինքը կաթիլ կաթիլ կը ծորէր: Իր այդ անփոյթ եւ յոգնած գիրքին մէջ, թեւերը կախուած էին, իսկ ուտերը կարկինով գծուած կորութեան մը կը հաւատարէին: Տանտիրուհիին յարձակողական խօսքերէն վախած՝ արտայայտութիւնը կորսնցուցած էր իր բնականու-

թիւնը: Կը գործանար անոր անմիջական բարկութենէն: Մինչ ինք՝ մօր մը պէս, - ա՛յո, չէր սխալած ճիշդ մօր մը պէս, համբուրած էր զայն:

Ձարմանքը թանձրացաւ, մինչեւ որ աղչութիւն մը կազմուեցաւ զէմքին վրայ: Ուղեց նստիլ, ոտքերը միացնել իրարու: Վերջապէս բա՛ն մը, շարժո՛ւմ մը ընել. սակայն վախցաւ: Տանտիրուհիին աչքերէն եկած արհամարհանքը այնքան ծանր էր, որ անհարակութեան կը մասնէր զինք:

Դիմացինը կը գուարճանար անոր խեղճութենէն: Աչքերը պտըտցուց անոր խոշոր կուրծքերուն, լայնքին, ջուռակուտի իրանին, ուռած ոտքերուն, եւ ուռնդերը մեծցան, նայուածքը անսանական բան մը ստացաւ, եւ ակռաներուն մէջէն յողթական եղանակով մը, մրմընջեց:

- Ծի՛շո՞ սպասուհի ըլլալու համար ծնած ես, գիտե՞ս: Ըսաւ՝ եւ հեռացաւ քովէն:

Սպասուհին զիտեց անոր հաստառ քայլերով երթալը: Ձխորհեցաւ անդրազանաւ անոր ըսած խօսքերուն: Լսելը կամ չլսելը նոյն բաները թուեցան իրեն: Խոր գոհունակութիւն մը միայն զգաց: Վերջ ի վերջոյ ըսուելիքը ըսուած էր: Ռուճք մը պայթած էր, որ, տարօրինակ կերպով իր յուսացածին չափ ալ զօրաւոր չէր: Տանտիրուհին չէր նկատած որ իր ապուշ արտայայտութեան ընթացք տուող ի՛նչ սեւ մտածումներ յղացուած էին իր մտքին մէջ: Ապտակուի՛լը, որ թերեւս երեւակայա-

ծին ամենն թիթեան էր, օրականն զըրկը-կը-կ'ը, թէ նոյնիսկ զործէն վտարուե-լը:

Վերջապէս շունչ մը առաւ և նստեցաւ: Տաշտին մէջ հաւաքուած լուացքը իրեն կը սպասէր: Մինչև դաստակը հասնող Ոայլընէ կարմիր ձեռնոցները հանեց, որոնց անվարժ էին նախնական կեանքին վարժուած իր նախնական ձեռքերը, և թափով սկսաւ իր գործին:

Քանի մը վաղրկեան ետք արդէն ժըպիտ մը կար աչքերուն մէջ, իսկ չրթնե-րուն վրայէն եղանակի մը երանգները կը հոսէին:

Ճ

Ատողիկ կարինեան կը դիտէր ինքզինք ննջասենեակի հայելիէն և կը ջա-նար շարունակել իր կէս մնացած աբ-զուպարը: Այլևս արժանազորութիւնը չէր ձեռքերը շարժողը ոչ ու լաւ երեւ-նալու տենդը, այլ ներքին անկայուն վի-ճակ մը ծածկելու ստիպողութիւնն էր: Եարթի մը ի վեր սափրիչին չէր դա-ցած. մազերը չէին հնազանդիր ալիւս սանարի հարուածներուն: Ջղախացած՝ նետեց սանարը ձեռքէն և սկսաւ խո-զանակով քրքրել զանոնք, սակնովբայ ընել, ի վերջոյ ձեւ մը տալու համար անոնց: Յետոյ, յաւանատած, թողուց ամէն բան և մեղկացած արժանազոր-թեամբ ինքզինք նետեց մահակալին վը-րայ: Բայց զոն ալ հանգիստ չըբաւ. ժա-մացողը կը քայլէր: Ելաւ ընդոտ և ա-ճապարտնօք սկսաւ հագուել: Նախապէս որոշած էր հագուելիքը. սակայն ունե-ցածներուն այլազանութիւնը կը շուարե-ցընէր զինք: Կարմիրը, սե՛ւր, նարն-ջագո՞յնը, սրճագո՞յնը, թէ միւսները, որոնք բոլորը միասին գոյներու մասնա-զէտի մը համար կրնային նմոյշ ծառա-յել: Չատեց հաս մը. յետոյ յիշելով որ անիկա ամուսինին նախընտրածն էր, բնազդական վարժով անմիջապէս կախեց տեղը. ի վերջոյ նայուածքը հանգիստ առնելով վրայ: Հագաւ և դիտեց ինքզինք հայելիէն: Անոր հրապոյրին առջև մա-զերուն յամուսնութիւնը ոչ միայն շնը-կատեց, այլևս այդ միջոցին խորունկ

պահանջ մը զգաց իր գեղեցկութիւնը ուրիշի մը բերնէն լսելու. և եթէ ջովը ունենար այդպէս մէկը, ինք պատրաստ էր ամբողջ սրտով համբոյր մը տալու անոր: Համբոյրին ակնարկութիւնը ըս-պասուհիին խօսքերը նորէն յիշեցնել տը-լաւ իրեն: Ինչո՞ւ այդ յիմարը զիրար կը նմանինք ըսաւ, մրմնջեց: Անհոգ ժպիտ մը ունեցաւ, այնքան որ անհաստատի թուեցան այդ խօսքերը իրեն: Եարու-նակեց հագուել, սակայն կնոջ ըսածը, յետոյ ժպիտը, որ այնքան չըտուած խօսքեր կը պարունակէր, և ըստուածին համար ալ այնքան վստահութիւն կ'ար-տայայտէր, շլէջին զինք: «Մայրտառակ յիմարը», կրկնեց մտքէն: Անցուց կօշիկ-չիկները ոտքերուն, յետոյ մանեակը վի-զին, առաւ պայուսակը, ու այլևս կազմ ու պատրաստ էր. բայց չէր դիտեր թէ ինչու կը վարանէր մեկնելու: «Արդեօք իրա՞ւ կը նմանինք իրարու», մրմնջեց: Հայելիէն նորէն դիտեց ինքզինք. հա-սակն ու կառուցուածքը կրնային քսանե-րորդ դարու մարմնական նարտարապե-տութեան բոլոր առաւելութիւնները լը-րացնել: Յետոյ քալուածքը, որ եթէ Մարլին Մոնրոյիին նման չէր օրորու-ուեր, — և որուն համար մեծապէս ու-րախ էր ինք, որովհետեւ ի վերջոյ կրօ-նական կրթութիւն ստացած էր — բայց և այնպէս որոշ գլուխներ և ախորժակ-ներ օրորելու չափ կարողութիւն ունէր: Մազերուն գոյնը ինք միայն կը յիշէր, քանի որ ամուսնանալէն ի վեր գոնէ տասնըհինգ օրը անզամ մը անոնք երանգ կը փոխէին. բայց միշտ այնքան բծա-խընդորութեամբ կատարուած՝ որ ուրի-շին քնականը կրնար խնդրական դարձը-նել: Եւ այս ամէնքը կ'ընէր, ինչպէս ինք կ'ըսէր, ամուսինին փափաքը կատարած ըլլալու համար:

Ժամանակը կ'անջատուէր իրմէ և ինք պէտք էր որ մեկնէր:

— Գլտիկներուն ճաշը տալ շնո-նաս, ըսաւ, զարձեալ մօտենայով սպա-սուհիին: Ես ժամը հինգին պիտի դամ: Ու կնոջ պատասխանին շարասած՝ նկա-տեց անոր մերկ ձեռքերը:



- Ինչո՞ւ տուած ձեռնոցներս հանած ես, պոռայ յուսահատ բարկութեամբ:

- Այսպէս աւելի հանդիստ կընամ լուսլ, պատասխանեց կինը, ամշնալով յանդիմանութեանը համար:

«Ճի՛շդ սպասուհի ըլլալու համար ծնած ես, գիտե՞ս», նախադասութիւնը անցու միտքէն. բայց չուզեց ձայնը բարձրացնել, որովհետեւ նախ որ կնոջ ձեռքերուն տեսքը ինկապէս կը շարժէր իր դուժը, յետոյ այլեւս ա՛յնքան վրտասակ էր որ իրարու չէին նմաներ, վրէժ լուծելու որեւէ պատճառ չունէր:

- Լսի՛րը տանիքը պիտի փոխե այս անգամ. ըսաւ անսպարանքով, եւ երբ կը մտանար դրան՝ դուրս ելլելու համար, յանկարծ բան մը մտաչածի պէս դարձա՞ ետ եւ, բարեկամաբար, կարծես բան մը պատահած լըլլար, միայն պարզ հեաաջրքութեամբ մըն էր որ հարցուց.

- Իրաւ ըսէ, ինչո՞ւ ըսիր որ մենք իրարու կը նմանինք...:

Հա՞թ լուացող կինը նայեցաւ իրեն պալած աչքերով, նախ շանդրադարձաւ թէ ի՞նչ կ'ըսէ. յետոյ կէս մնացած թեղի մը պաշտպանութիւնը ընողի վստահութեամբ սկսաւ.

- Որովհետեւ այնքան կը նմանինք որ... ու չկրցաւ շարունակել.

- Յիմա՛ր, չե՞ս տեսներ մեր մարմիններուն տարբերութիւնը. գինիի տակաւ կը նմանիս...:

- Այնքան ոչ՞ որ եմ որ... ըսաւ զարմացած, ու սաքի ելաւ ստուգելու համար լսածը:

Միւսը քան քան ինզպայ:

- Յամենայնդէպս այդ նմանութեան մասին չէր խօսքս...:

- Հապա՞...:

- Մեր ընտանեկան կեանքերուն մասին էր...:

- Մեր տուներո՞ւն մասին:

- Ո՛չ:

- Մեր արդիւնակերպի՞ն մասին...:

- Այո՛:

- Կ'անդրադառնա՞ս թէ ինչ կ'ըսես.

- Այո՛:

- Ծուռ բացատրէ՛ ինքզինքդ, համբերութիւնս կը հասցնե՛ս... ի՞նչ յիմար բաներ կ'ըսե՛ս...:

- Ըսելիքս կարեւոր բան մը չէ, միայն... պիտի... կը ներէք համարձակութեանս... պիտի ուզէի ըսել թէ մեր ամուսինները կը նմանին իրարու... երկուքն ալ կարծես թէ... արդէն ճիշդ ատոր համար համբուրեցի... երկուքն ալ ուրիշ տեսակ մարդեր են... Համբուրած ատենս երիտասարդութիւնս համբուրել կարծեցի... կարծես թէ ուրիշ աշխարհի մէջ սպրող մարդեր են, մեր աշխարհին չեն պատկանի՛ր... արժանի չեն մեզի... մեղք չէ՞ այս գեղեցիկ մարմինիդ...:

- Ամուսինդ յարմար չէ՞ քեզի...:

- Ե՞ս թողած եմ ամուսինս...:

- Ի՞նչ ըսել կ'ուզես յիմար:

- Ըսել կ'ուզեմ որ մեղք չե՞ս, եթէ կեանքդ այս մարդուն հետ շարունակես...:

- Լռէ՛, անկիրթ...:

- Ե՞ս միայն ըսել ուզեցի որ...:

Բայց արդէն չլսեց: Դրան բացուիլը եւ զոցութիւլը երկրաշարժի մատնեց տունը:

Սպասուհին նորէն նստաւ լաթին:

Ճ

Հանրահառաքին վերի յարկը նստած կը դիտէր վարը մնացած մարդիկը, իրե՛րը, շարժումը, եւ կը մտածէր: Ի՞նչ էր ինք: Կի՞ն մը, այո՛. բայց ի՞նչ տեսակ կին, կիներու ո՞ր դասակարգէն: Ըստ երեւոյթին յիշէ է, որ վաճառական ամուսին ունեցողներուն ընտանիքին կը պատկանէր. կիներ, որոնք ընդհանրապէս սպասուհի կ'ունենան եւ իրենց դասակները անոր կը վստահին, յետոյ հանգչանքերուն մէջ առաջին կարգի աթոռներուն կը նստին եւ կրնան «Օրուան Թագուհի» տիպոսին արժանանալ: Յետոյ՝ իրենց ուղղուած ձօներ լսել, որովհետեւ տարին անգամ մը ճիշդ դքսորոցական տարեկերթի հանդէսին, կրնան հարիւր օսկիի նուերատուութիւն մը ը-

նել եւ ամէն պարահանդէսի հազար ոսկինոց հազուատ եւ կօշիկ հազուիւ: Վնչն աչք կինը այդպէս խօսեցաւ մըտածեց. արդեօք բանէ՞ մը կասկածեցաւ, արդեօք ամուսինն այդպէս ըսել տուաւ: Կասկածը ողորդի պէս կը կրծէր իր խղարուքիւնը: Պայուսակէն հանեց էշարփի մը, կապեց դիտուն եւ Կրէյթա կարալոյթներուն նմանոյ ակնոցները տնցուց աչքերուն: Գոնէ տօպէտ՝ մարդ պիտի չկարենար դինք դիրութեամբ ճանչնալ: Ամէն կայարանի՝ սիրտը դող կ'ելլէր, ծանօթ մը հանրակառք ելլէր...

- Տէ՛ր Ատուած, զո՛ւն ինձի օգնէ, մրմնջեց. ինչո՞ւ այս կինը այդպէս խօսեցաւ:

Առաջին անգամը չէր որ գլխու կապոցով եւ սեւ տկնոցներով կը ծպտուէր: Ու առաջին անգամը չէր, որ քաղաքին մէկ ծայրէն միւսը հանրակառքով կը ճամբորդէր: Ետքաթը երկու անգամ, ժամացոյցի ճշդութեամբ, Հետապնդողին դիրքին մէջ կարելի էր հանդիպել իրեն, միշտ նոյն դրամիչ արդուզարգովը գրնուած: Բայց առաջին անգամն էր որ ոչ թէ միայն գիտակցութիւնը կ'ուենեար, այլեւ անոր հետեւանք վախի եւ ամօթի զգացում մըն ալ, որ տակնուվրայ կ'ընէր դինք:

Այլեւս կը կարծէր թէ հանրակառքը պէտք եղած արագութեամբ չէր շարժեր ու մարդիկ ինքնակոչ դատաւորներ եղած՝ գինք կը դիտէին, կը լրտեսէին:

- Երանի ծանօթի մը հանդիպիմ եւ պատճառ ըլլայ որ ետ դառնամ, մտածեց: Յետոյ խորհեցաւ որ առաջին անգամն էր որ նման մտածում մը կ'ուենեար: Յնցում մը անցաւ մարմնին մէջ, եւ անդրադարձաւ թէ պէտք էր որ այլեւս յաջորդ կայարանին վար իջնէր: Կարելի չէր այս խողը շարունակել, ամուսնոյն եւ ծանօթներուն աչքին տակ, առանց ի վերջոյ մատնուելու: Յաջորդ կայարանը հասաւ: Հանրակառքը ընթացքը դանդաղեցուց, «հիմա պիտի կենայ» խորհեցաւ. ուզեց շարժիլ, ոտքի ելլել, սակայն ոտքերը չհնազանդեցան: Յաջորդ կայարանին կ'իջնեմ», խորհեցաւ: Յաջորդին ալ նոյնը պատահեցաւ: Վտանգալից վերջին անգամը թող ըլլայ, մտածեց. պէտք է որ այսօր երթամ եւ հաշիւը մաքրեմ. ըսեմ թէ ես ամուսնացած կին մըն եմ. երկու զաւակներու մայր եմ: Հայրս ազգային իշխանութեան անդամ է. ամուսինս շուկային մէջ ճանչցուած մարդ է. եւ ի վերջոյ օրէնքին դէմ է մեր ըրածը. խիղճս չի ներեր. ըրածս խաբարայութիւն է: Մահաւանդ որ ի՞նչ շահ ունիմ խաղալու մարդկութեան հետ. անոր հաստատած օրէնքներուն հետ, որոնց վրայ հազարաւոր տարիներու ընթացքին մարդկութիւնը այլեւս իր խիղճը չիմած է: Վերաւ ի՞նչ շահ ունիմ», խորհեցաւ... Հանրակառքը վերջին կայանը հասաւ ու ինք պէտք էր որ իջնէր... Ճամբան խորհեցաւ. ի՞նչ շահ ունիմ ես ասկէ: Իսկապէս, ինքն ալ կը դարձանար, թէ ինչպէս սկսած էր: Նախ քան տմուսնանալը միազին ծայրէն իսկ չէր անցուցած խաբել իր ապագայ ամուսինը: Խիղճը հանդարտ էր, չէր մտածած այդ մասին: Ամուսնութիւնը իրեն համար գերագոյն երջանկութիւնն էր որ իր կեանքը ապրած ազլիկ մը կրնար երեւակայել: Արդէն իր ամբողջ կեանքին տեսողութեան այդ եղած էր երազը: Ունենալ ամուսին մը, գեղեցիկ, հարուստ, որ շուրջը դառնար եւ ամենայնաին խօսակցութեան իսկ կարենար ընդմիջել իր գեղեցկութեան եւ շնորհալիութեան մասին խօսելու համար: Յետոյ թոյլ շտար որ ինք յոգնէր: Ամէն գիշեր պտոյտի ելլէին, աշխարհներ չըջնէին, այցելած երկիրներէն յիշատակներ հաւաքէին, եւ ինք ինքնաշարժերու մէջ օրերը անցընէր ու մարդիկ իր երջանկութիւնը բամբասէին: Այս էր ամուսնութիւնը. այսպէս լսած էր ծնողքէն գոնէ անուշաբանութիւն: Ասկէ աւելի գեղեցիկ բան կա՞ր կեանքին մէջ որուն մարդ կարենար հասնիլ:

Երբ ամուսնացաւ՝ շնկատեց թէ ամուսնոյն տարիքը իրենինն գրեթէ երկու անգամն է քանի որ ուրախացաւ:

Երբ ամուսնացաւ՝ շնկատեց թէ ամուսնոյն տարիքը իրենինն գրեթէ երկու անգամն է քանի որ ուրախացաւ:

ու հրճուեցաւ երբ ազգականները շնորհաւորեցին զինք, թէ ըստն տարեկանին արդէն կրցած է զլաւ ընտանիք պահող ամուսին մը գտնել: Ամէն օր նոր հագուստներ կը փոխէր, իր անձնական ինքնաշարժը ունէր. կեանքը երազ էր: Անկէ ուրիշ պահանջ չունէր արդէն: Յետոյ՝ քիչ ետք, երբ առաջին դաւա-կը ունեցաւ, զգաց թէ լաւ բան մը չէր ամուսնութիւնը. գոնէ նորութիւն մը չէր բերեր կեանքին մէջ: Ամուսինը գործով զբաղուած էր եւ իրեն հետ հազիւ ժամանակ կ'ունենար խօսելու: Զինք չէր գովեր. ընդհակառակն, երբեմն նոյնիսկ կը յանդիմանէր: «Մտադրէ քեզ չեն կրթած, կ'ըտէր. ամուսնութեան համար չէ՛ս պատրաստուած, կ'ըտէր. շփացած ես եւ կեանքը չես ըմբռներ, մտաւորակա՞մ հանձնքներէ չես հասկնար...»

Ու կ'ըտեր բաներ, որոնց մասին ինք բընաւ չէր մտածած, աւելի ճիշդ, պահանջը չէր զգացած մտածելու: Այլեւս ամուսինին ամէնէն աննշան ակնարկութիւնը, յանդիմանութիւն կը թուէր իրեն: Կրնար ըսել թէ ամուսնացած կ'ին մըն էր եւ չէր: Ուրիշներ երբ սիրոյ մասին կը խօսէին, ինք կը դարմանար, որովհետեւ չէր գիտեր թէ ինչ է սէրը. ոչ թէ սրբօրէն կ'ուզէր սիրել եւ չէր կրնար, այլ փափաքը չունէր սիրելու: Աւելի ճիշդը՝ սիրել չէր ամուսինին ճաշերը պատրաստելը, օրը քանի մը անգամ տունէն գործատեղի հեռաձայնելը, կամ ուրիշներու դիմաց պայն համբուրելը:

Երբ հանդիպած էր միւսին, սէր փնտռելու համար չէր: Ինքն ալ չէր գիտեր թէ ինչու՞ համար էր:

– Ի՞նչ գեղեցիկ էք, տիկին, ըսած էր, երբ առաջին անգամ դացած էր զովք ակուան դարմանելու: Շատ աղուոր բերան մը ունիք, այնքան պզտիկ, որ գործիքս չեմ կրնար խօթել ներս...:

– Իրա՞ւ, ըսած էր... շատ շնորհակալ եմ, շատ ազնիւ էք... ու խնայցած էր ուրախութենէն՝ անզուսպ:

Իրիկուան՝ պատմած էր զէպքը ա-

մուսնոյն ու յանդիմանուած իր անհեթեթեանը համար:

«Քարեքարտար» գեղեցիկ բերին մէջ գէշ ակուաններ ունէր: Ու իր գեղեցկութեան գովքը՝ բերնէն սկսելով տարածուած մարմնին բոլոր մասերուն, ունկնդրած էր ինչպէս ուրիշ մը պիտի ունկնդրէր Պէթհոլէնի սէնֆօսին: Ինք բաշխած էր այլեւս ինքզինք անոր: Կամաց կամաց, առանց զգալու, թէ ի՞նչ կ'ըլլայ, թէ ինչու՞ կ'ըլլայ, եւ թէ տակաւին մինչեւ ե՞րբ պէտք է որ ըլլայ, «Ա՛յս մինչեւ վե՛րջ պիտի ըլլայ, ըսաւ մէկէն աչքերը լայն բացած կնոջ համար: Ինչքան բերելով: Արդեօք ի՞նչ բանէ կասկածած է, խորհեցաւ. արդեօք ամուսինս խօսիլ տուած է, արդեօ՞ք...»:

«Պէտք է ետ դառնամ», խորհեցաւ. բայց քայլ մը աւելի յառաջ գնաց: Այլեւս հասած էր: Զգաց թէ սանդուխներէն ի՞նչպէս բարձրացաւ: Դուռը զարկած պահուն միտքը պարպուած էր արդէն իր ծանրութենէն: Այնպէս՝ ինչպէս պիտի ըլլար երբ կնոջ համարը դեռ տակնուվրայ ըրած չէր իր հոգին:

Անհաւասար շունչով սպասեց մինչեւ որ հիւանդապահուհին բացաւ դուռը, ու անհաւասար քայլերով հազիւ բարեւած, ինքզինք նետեց աշխատանոցէն ներս:

– Ուշացա՛ր, ըսաւ մարդը ժպտով մը, որուն իմաստը կամ արժէքը ինք չէր կրնար զնահատել:

– Ներողութի՛ւն, ատկա վերջին ուշացումս թող ըլլայ ըսաւ, սրտանց ներողութիւն խնդրողի նայուածքով:

Յետոյ շանդրադարձաւ թէ ի՞նչ եղաւ: Եղաւ բան մը, որուն մասին չէր մտածած նախքան ամուսնանալը: Հօրը տունը եղած ատեն, ատկա գժոխային մեղք մը համարած էր:

– Այսօր շատ լաւ տրամադրուած էիր, ըսաւ մարդը:

– Դո՛ւն ալ, պատասխանեց խորունկ դոհունակութեամբ:

Միտքին խմբէին իր եփած սուրճը

ու ծիսեցին մարդուն հրամցուցած սիկա-  
րէթը:

- Գիտե՛ս, միայն զեզի հետ կը ծը-  
խեմ ըսաւ...

- Միայն ե՛ս սիկարէթ հրամցնելու  
արուեստը գիտեմ, շարունակեց միւսը  
սնափառութեամբ:

Ինք ժպտեցաւ հրճուանքէն, անոր  
սիրելի երեւցած ըլլալուն համար:

Ժամը հինգին կը ժօտենար: Միա-  
սին իջան եւ դրան առջեւ բաժնուեցան:

- Զուշանա՛ս չորեքշաբթի, ըսաւ  
մարդը, ինքնավտան եղանակով մը:

- Անկարելի է որ ուշանամ, ցը՛... .



Ամէն մէկ զայլին հետ բան մը կը  
թողուր ետին: Կապ մը, որ հետզհետէ  
կը թուլնար՝ քակուելու համար: Բաւա-  
կան անդին, նոյնիսկ ինք իր մասին չէր  
կրնար ըսել թէ ուրիշ կու գար: Ծու-  
կայ ելած ըլլալու համար կարծես ելած  
էր տունէն: Կը գիտէր ցուցափեղկերը  
բան մը զնոյի հետաքրքրութեամբ: Ոչ  
մէկ յեշատակ մնացած էր ետին: Ոչ մէկ  
սպորում որ կարենար նոյնիսկ օրուան մը  
համար հարստացնել իր զգացական աշ-  
խարհը: Իր հուժեղ սշինչ տուած էր  
այդտեղ՝ այդ աշխատանքին մէջ: Կըր-  
նար, ամիսներով շայցելել. ո՛չ մէկ պա-  
կաս, ոչ մէկ պակաս զգալ: Բայց հա-  
կառակ ասոր տակաւին, ո՛չ մէկ չորեք-  
շաբթի եւ ուրբաթ փախուցած էր իր  
օրացոյցէն: Որովհետեւ միայն վերա-  
դարձներուն էր որ այդպէս կը խորհէր:

Յիշելով որ ամուսինը այդ օր բա-  
ցառարաբ կանուխ պիտի գար, զայլերը  
արագացուց. «Յեղճը, ըսաւ, ո՛վ գիտէ  
սրճան յոզնած է»: Պէտք էր որ լաւ  
բան մը պատրաստէր անոր ճաշին: Ա-  
մուսինին մասին մտածելը խղճի խայթ  
մը տուաւ սրտին, եւ գանեցաւ ինքզին-  
քէն: «Ինչո՞ւ կ'ընեմ այս բանը, ինչո՞ւ  
կ'ընեմ»: Յետոյ նորէն անդրադարձաւ  
սպասուհիին խօսքերուն: Սկիզբը մարմ-  
նական նմանութեան մասին կարծած էր  
ազնարկութիւնը: Որքան վստահ պէտք

էր ըլլար այդ կինը, որ այդպէս համոզ-  
ուած շեշտով արտայայտէր ինքզինք:  
Յանկարծ յիշեց թէ վերջերս հեռաձայ-  
նով անոր ներկայութեան ալ կը խօսէր:  
Ինք անոր բնաւ կարեւորութիւն չէր  
տուած. բայց հաւանաբար կինը կը լըր-  
տեսէր զիրենք: «Եթէ ամուսինիս ըսած  
ըլլայ», խորհեցաւ, եւ արիւնը սառեցաւ.  
Երակներուն մէջ: Ի՞նչպէս տուն պիտի  
երթամ, մտածեց: Ինչպէ՞ս ամուսինիս  
երեսը պիտի նայիմ»:

Զգացումներու խառնակոյտով մը  
բեռնաւորուած կը զալէր: Յիշեց իր  
մանկութիւնը, հայրը, մայրը, անոնց  
տուած դաստիարակութիւնը, որը թէեւ  
զոյութիւն չունէր, բայց եւ այնպէս լը-  
ռելիայն ալ կրնար բանի մը ծառայել,  
«դոնէ ուրիշներուն», խորհողածեց, անզ-  
րադաւանալով զոյրերուն: Յետոյ այնպէս  
կարծեց, որ զոյրերուն մէջէն ամէնէն  
գոթախոտը ինք եղած էր: «Բայց գոթախոտ  
ալ չեմ» շարունակեց զիչ վերջ: «Դժ-  
բախտ չեմ այլ գոթախոտացնող»: Յետոյ  
մէկէն մտածեց, որ եթէ ամուսինը իմա-  
ցած ըլլար եւ ամուսնալուծում պահան-  
ջէր, ի՞նչ պիտի ըլլար իր դիրքը: Իրեն  
համար ատիկա մահ էր: Ի՞նչ պիտի ըլ-  
լար իր վիճակը: Իր նիւթակալը. քանի  
որ հայրը այլեւս չէր կրնար զինք հո-  
ղալ: Յետոյ՝ շատ աւելի դիւրին բան  
էր խարելը քան թէ ուրիշներուն բերնէն  
իր ամուսնալուծուիլը լսելը:

Թաքսի մը կեցուց եւ նստեցաւ. այլ-  
եւս կարողութիւն չունէր զալելու:

Տուն վերադարձին, ամուսինը տա-  
կաւին չէր վերադարձած: Ոչ իսկ գա-  
ւակները վերադարձած էին: Սպասուհին  
սեղանը պատրաստած էր եւ տանիք ե-  
լած՝ լաթերը փոխելու: Վերջապէս չունչ  
մը առաւ: Սպասուհին անմիջապէս որ  
վերադառնար տանիքէն, զոյր ամասական  
տալով գայն ճամբու պիտի զնէր: Իսկ  
ամուսինն ալ ժամանակ մը եւս կրնար  
խտրել. գաւակներուն համար հողը չէր.  
անոնք բնաւ բան մը պիտի չկրնային  
հասկնալ: Վերջապէս ուզածը եղած էր,  
սչ ամուսնալուծում եւ ոչ ալ հանդիման

զրկում: Սեղանին վրայ դուրսդրանքով սպաս մը եւս աւելցուց, քանի որ ամուսինը կանոնապէս պիտի դարձնէր, եւ միասին պիտի ճաշէին: Մտնարանէն դէնիի շիշ մըն ալ հանեց: Այսօր տօնական երեւոյթ մը տամ սեղանին», մտածեց:

Ուրախ էր. ուրախութենէն շուրթած՝ շիշ դիտեց թէ ի՞նչ պէտք էր ընէր:

Ձաւակներուն դալուն դեռ կէս ժամ կար:

Բացաւ հեռաձայնը ամուսինին.

- Այո, սիրելի՛ս, էշխանական ճաշ մը պատրաստած եմ քեզի:

«Հիմա պիտի դամ», ըսաւ մարդը: Ուրախութենէն կ'երար:

Քանի մը վայրկեան ետք հեռաձայնը ուրիշ թիւի մը դարձուց:

- Ինչպէ՞ս ես, ըսաւ թրթռացող ձայնով: Շատ պիտի ուզէի հիմա քովդ ըլլալ:

- Ես ա՛լ, ըսաւ դիմացինը. դա՞մ:

- Ո՛հ, ոչ, անկարելի է... վա՛ղը, նորէն կը խօսինք: Տը՛...:

Քանի մը վայրկեան ետք վարէն լըսեց պզտիկներուն կանչն ու ամուսնոյն սուղոցը:

Եւ նուիրուած ժպիտով մը դնաց դուռը բանալու, մըմնջելով ինքնիրեն՝

- Ո՞ր մէկը...

ԱՆՍՅԻՍ ՀԵՐԱՆ



Գ  
Ո  
Վ  
Ե  
Ր  
Գ

Գարունն ամբողջ, իմ ազուոր, ինչպե՛ս կրցար, ա՛հ ինչպե՛ս,  
Այսօրն լման՝ զհտեղեղ աչքերուդ մէջ տա՛մ ու հեզ,  
Ուր թիթեռի մը նման կը թռվոյս պերճանա՛մ  
Բացուող գարնան առաջին երգը կայտարդ ու զինով:

Աչքերուդ մէջ, իմ ազուոր, կայ հով, կայ ծով ու երկինք,  
Կան զանգակներ ու ծափեր՝ ժամադրութեան մը գալիք,  
Ուր կը լսեմ ես հիմա, ես կը լսեմ յառ առ բառ՝  
Ձյօրինուած տաղերու անզուսպ խաղեր բազմալար:

Քայց այս որքա՛ն, իմ ազուոր, որքա՛ն գինի ու հաշիշ,  
Լոյսով ծեփուած աչքերուդ գօտիին մէջը թաւիշ,  
Ուր տրտմութեամբ մը անոյշ, իրիկնայի՛ն որպէս ցօզ,  
Կը լեռնան գազտնօրէն՝ սիրոյ արցունք, մէզ ու շող:

Ու տակաւին, իմ ազուոր, որքան բնօրէ՛շ կը հեւայ  
Սիրտըդ անմեղ ու խռով, սիրտըդ պզտի՛կ աղջկայ,  
Աչքերուն մէջը որուն, հասուն հասկի մը նման՝  
Կը բռնկի այս գիշեր անհուն երազը վազուան:

Հարէս

Ա. ԵՐԱԳԵՆՑ



# ԻՎայական Հարժու՜՛

## ԲԱԳԻՆԻ ՀԱՐՅԱՐԱՆԸ

### ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յանախ կը գրուի թէ վերջին կէս դարուն մարդկային ընկերու-  
թիւնը քաղաքական սահմանում ստացած է, եւ թէ գրողը չի կրնար անտե-  
սել այս իրողութիւնը: Գրող մը կրնա՞յ անգիտանալ, իր երկին մէջ, թէ  
*քաղաքականը* անխուսափելի ներկայութիւն մըն է մեր կեանքէն ներս ու  
կը պայմանաւորէ, թերթերու, ձայնասփռուի ու փրօփականտի այլ միջոց-  
ներով՝ իր ու իր հերոսին կամ մարդոց կարծիքները եւ յանախ դատումնե-  
րը: Աւելին՝ թէ իր բացարձակ հակադէմն տակ առած է մարդկութեան  
տնտեսական, ազգական ու մասամբ ալ քառոյսական ուժերը: Նոյն ճակա-  
տագրին ենթարկուած են գիտութիւնն ու հիւլէական ուժը, որոնք կը սս-  
պառնան մարդկութեան գոյութեանն իսկ՝ գոտ քաղաքական շահերու եմ-  
քակայ են:

Այս պայմաններուն տակ, ի՞նչ պիտի ըլլայ գրողին դիրքը: Մարդ-  
կութեան տագնապները ո՞ր շափով պիտի է անդրադարձ ունենան իր երկին  
մէջ: Իսկ իր կեանքի՞ն վրայ: - Բայց այդ ալ ուրիշ հարց է:

Արդ, ի՞նչ կը մտածեն Հայ գրողները այս մասին:

Ահա այս այժմէական հարցումին պատասխան մը գտնելու նպա-  
տակով է որ «Բագին»-ի խմբագրութիւնը որոշեց դիմել մեր մտաւորակա-  
նութեան: Ասիկա սկիզբ մըն է դեռ: Արդարեւ, այս էջերը պարբերաբար  
պիտի տրամադրուին այլ կենսական հարցերու շուրջ պրպտումներու, միշտ  
նպտտակ ունենալով Հայ միտքը արթուն ու այժմէական պահել, ու նաեւ  
հանրութեան ու գրողներուն միջեւ աւելի ամօրչական եւ մնայուն յարաբե-  
րութիւն մը ստեղծել:

## ՀԱՐՑԱՐԱՆ

- 1-- Քաղաքականությունը, իրրեւ եղելությունն ու նաեւ իրրեւ մեր քաղաքականության մէկ երեսը՝ ո՞ր չափով կը հետաքրքրէ ձեզ: Դուք գըրագէտը պատասխանատու կը նկատու՞ք աշխարհի քաղաքական տրդիկացութեան համար:
- 2-- Գրականությունն ու քաղաքականությունը գործունէութեան անչատ կալուածներ կը նկատու՞ք:
- 3-- Կարելի՞ է ներկայիս ամբողջովին ապաքաղաքական գրականություն մը մշակել: Կրնա՞յ գրագէտը ինքզինքնն ու իր գործը հեռու պահել աշխարհը հետաքրքրող քաղաքական հարցերէն: Պէ՞տք է գրագէտը ինքզինքն հեռու պահէ քաղաքականությունէն: Պէ՞տք է որ իր գործը հեռու պահէ քաղաքականությունէն ու անոր ազդեցութիւններէն:
- 4-- Պէ՞տք է արդեօք գրագէտը ինք անձնապէս քաղաքական գործում դեր մը կատարէ, թէ ոչ պէտք է քացարակապէս հեռու մնայ քաղաքական գործունէությունէ: Կա՞յ արդեօք այս երկուքին համադրութեան կարելիություն, միջին ճամբայ:
- 5-- Ինչու՞ կը տարրերի հայ գրագէտը եւրոպացի գրագէտէն: Կա՞յ արդեօք քացարակ դեր մը, կամ պարտականություն մը հայ գրագէտին համար, հայ ազգի քաղաքական պայքարին մէջ:
- 6-- Կարգ մը հայ գրագէտներ այն համոզումը ունին, որ եթէ կուսակցութեան մը անդամագրուին, կաշկանդած կ'ըլլան իրենց ազատությունը, որով չեն կրնար ծառայել իրենց կոչումին. ի՞նչ է ձեր կարծիքը:

«Բ»

?



Վ. ԳԵՈՐԳԵԱՆ

### ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱԾՈՒՆ

### ՎԵՐՋԻՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ

#### ՆՈՐԵՐՈՒ ՇՐՋԱՆԸ

Յետ-պատերազմեան գրողներու առաջին սերունդը Պոլիսը ձգելէ ետք՝ Հաստատուեցաւ Յունաստան, Ֆրանսա, Լիբանան, Ռումանիա եւ Եգիպտոս: Քիչ ատենէն անոնց միացան ուրիշներ ալ, օտար միջավայրերէ վերցուցած շատը՝ ակնցնելով իրենց զբիւն վրայ:

Գրական նոր ուժերու փթթումին նպաստող առաջին օրկանը եղաւ Պոսթըն, 1922-ին, Ռ. Դարբինեանի խմբադրութեամբ լոյս տեսած Հայրենիք Ամսագիրը: 1923-ին, Պուրէշի մէջ, Յ. Ճ. Սիւրուերի սկսաւ հրատարակել իր Նաւասարդը, որուն կազմուեցան հինգրու կարգին նորեր ալ:

Գահրէի մէջ, նոյն օրերուն, Գուրգէն Մխիթարեան հրատարակեց Նոր Շարժում ամսագիրը, որուն իրենց աշխատակցութիւնը բերին չրջանի եւ այլուր գտնուող գրողներ:

Նոյն վայրին մէջ 1926-ին, խումբ մը ուսուցիչներ հիմը դրին Հայ Վարժարան անուն մանկավարժական ամսաթերթի մը, որ օւնեցաւ ընդամէնը երկու տարուան կեանք:

Փարիզի մէջ, Ա. Զօպանեան, ընդհատումներով շարունակեց լոյս ընծայել Անահիտը:

Նորերը իրենց երիտասարդական գեղամտերուն թափ տալով՝ 1931-ին ձեռնարկեցին Մեմֆ պարբերականին հրատարակութեան, որուն շուրջ Հաւաքուեցան Ե. Նարզուհի, Ն. Պէշիկթաշ-

լեան, Վ. Շուշանեան, Ե. Շահնուր, Ն. Սարաֆեան, Ռ. Զարդարեան, Հ. Սարգիսեան, Փ. Միքայէլեան, Ոստանիկ, Ջ. Մ. Որբունի, Գ. Գեղարքունի, Յար. Յրէնկեան, Բ. Քոփալեան, Արշ. Տատրեան եւ Նախդեղեան գրող Ղ. Մեւիսեան:

1932-ին Ս. Վրացեան նոյն քաղաքին մէջ սկսաւ Վեմ պարբերականի հրատարակութեան ու տուաւ 24 թիւ:

1926-ին Յ. Պօզոսեան հիմնեց Արաք գածը:

Երկու տարի, - 1922-1924, Պերլի-նի մէջ լոյս տեսաւ արեւելահայ գրողի մը, Ս. Յակոբեանի խմբադրութեամբ Արեգ ամսագիրը, որ գաղղկացաւ հրատարակչին Հայաստան մեկնումով:

1929-ին Հ. Բալուեան Փարիզի մէջ սկսաւ հրատարակել իր Զուարթ-նոցը, որ ծաւալի փոփոխութեամբ ու ժամանակաւոր ընդհատումէ մը ետք՝ դեռ կը շարունակուի իրրեւ ամսաթերթի:

1936-1940, լրիւ հինգ տարի, Մ. եւ Մ. Պարսամեան Եղբարք, տուին կեանքի Արուստ ամսագիրը:

Աթէնքի մէջ, Գ. Կառվարենց կարճ ժամանակ մը հրատարակեց Արեւալ ամսագիրը:

Պէյրուսի մէջ 1929-ին քանի մը ամիսներ, հրատարակուեցաւ մեր կողմէ Զահալիր գրական շաբաթաթերթը:

Աւելի ուշ, Հալէպի մէջ, երեւցան Սեւան պարբերականի երկու թիւերը եւ Երազենցի կանքիդ ամսաթերթը:

Յիշատակուած այս թերթերուն շարքին, այլուր եղան նման ձեռնարկներ եւս, որոնցմէ մատի վրայ համընդհանր սակայն կրցան հետք մը ձգել:

Հաղիւ տեղաւորուած իրենց նոր միջավայրերուն մէջ, անհատ ազգայիններու եւ քաղաքական հոսանքներու կողմէ սկսան հրատարակուիլ օրաթերթեր, նըպատակ ունենալով մեր բազմութիւններուն մէջ վառ պահել քաղաքական անջուղարձերու զուգահեռ ազգային ոգին:

Արդէն իսկ զոյուսթիւն ունեցող օրաթերթերէն Յուսարբրի, Արեւի, Պայտարի, Հայրենիքի, Ասպարէզի շարքին լոյս տեսան Փարիզի մէջ՝ Յասազ, Յունաստանի մէջ՝ Նոր Օր, Պէյրութի մէջ՝ Փրովիկ, Ազգակ, Իրանի մէջ՝ Ալիք, Պուլկարիոյ մէջ՝ Հայաստան եւ Հրազդան, Պուրէշի մէջ՝ Նոր Արշալոյս, ասելի ուշ լոյս տեսան Արմենիա, Ազատ Օր, Արեւելք, Գոյամարտ եւ այլն: Անոնք դարձան արձագանգող ազգային, դրական, քաղաքական մարդերու վրայ տեղի ունեցող անցուզարձերու եւ աշխատեցան մեր զանգուածներուն մէջ վառ պահել ազգային ոգին, սէրը հանդէպ մեր հայրենիքին եւ մշակոյթին:

Գրական եւ քաղաքական քաղաքականութեամբ թերթերու կողքին լոյս տեսան ատողջապահական-բժշկական բովանդակութեամբ ամսագրեր եւս:

Առեն մը Տոբթ. Լեւոն Գրիգորեան Փարիզի մէջ հրատարակեց Բուժամբիւր, 48 թիւ, Տոբթ. Միհրան Քէլիչեան՝ Առողջ Կեանքը, երկու տարի: Գարձեալ լոյս քաղաքին մէջ, 1934-էն այս կողմ, մեր իրականութեան մէջ քաջատիկ երեւոյթ ըլլալով, Նարդուհի կը շարունակէ իր Հայ Բայժը:

Գրականութեան նուիրուած ձեռնարկներ եղան Բ. Նուրիկեանի Հայ Գիր պարբերականն ու Վ. Վահեանի Աճիւն, երկուքն ալ դադարած ներկայիս:

Իրենց պաշտօնաթերթերը ունեցան շարք մը Հայրենակցական Միութիւններ, Հայ Օգնութեան Միութիւնը, որուն նախաձեռնած Սիրտ ամսագիրը

կանոնաւորապէս ու առաւելարար դրական բովանդակութեամբ՝ լոյս կը տեսնէ Պոսթընի մէջ, տարիներէ ի վեր:

Հրատարակուած շատ մը ամսագրերէն նեկայիս իրենց զոյուսթիւնը կը պահեն միայն Հ. Ամսագիրը, Սիրտ եւ Հայ Բայժ: Աւելի նորերու մասին կը խօսինք հետագային:

Նոր միջավայրերու մէջ հայութեան կեանքը քառասուն տարիներու ընթացքին եղաւ պայքարի եւ որոնումներու շարան մը:

Ուր որ դասին մեր հայրենակիցները աշխատեցան ունենալ իրենց զարոյցները, եկեղեցին, բնակարանները եւ հաւաքավայրերը:

Հոն ուր մեր քանակը հասաւ պատկառելի թիւի մը, ստեղծուեցան Հայրենակցական Միութիւններ, Հայ Կարմիր Ուսի, առանց խօսելու քաղաքական կազմակերպութեանց մասին, ու այս բոլորը՝ զօրացնելու համար մեր դիմադրական ճիգերը:

Ամէն ինչ հուրին ու սուրին տուող մեր զանգուածները շուտով ստեղծեցին իրենց համար սեփական տնտեսութիւն:

Մշակութային մարդին վրայ անոնց բոլոր ձեռնարկները եւ ճիգերը ունեցան մէկ նպատակ. պանել ազգային մեր դիմազիծը:

Ուր կար դրիւ շարժելու ընդունակ մէկը, դրուեցաւ հիմը լրագրի մը: Ու հայ թերթը դարձաւ իր հերթին մեր բազմութիւններուն մէջ հաւատքը խորացնող գործոն մը:

Ձոհուցութիւններով լոյս տեսող այս թերթերը եւ ամսագիրները կը մընան նոր վկայութիւն՝ հանդէպ ցեղին մեր մտաւորականութեան տածած անխառն սիրոյն:

Մտաւոր անցեալին կապուած դառն յիշատակներով, աշխատուեցաւ շուտանալ ինչ որ մեր բազմութիւններուն մէջ պիտի խորացնէր ապրելու անոնց կամքը: Ուստի տօնուեցան մեր հին եւ նոր բոլոր կարեւոր տօները: Անոնց վրայ աւելցան Մայիս 28 եւ ցեղային մեր հը-

պարտութեան խարխիս՝ շարք մը նոր հերոսամարտեր:

Ազրիլ Ձառմ ողբերգութեան մեր մէկ միջինն ու կէս նահատակներուն յիշատակը, սոխատեւոյզ դարձնել անոնց կըտակը քաղաքական մեր անտեղիտալի պահանջներուն հանգանակ:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՖՈՒԿՆՈՐԻՆ

ԱՆՈՒՆՈՎ

Որպէսզի չկորսուէին տեղահանուած մեր ժողովուրդին բնավայրէ բարբառները, ասոյթները, երգերը, հեքիաթները, ֆոլքլորը մէկ բառով, հաւաքելով հրատարակութեան տրուեցան առանձին հատորներ:

Այս նպատակով լոյս տեսան Կեանքի, Եղեախոյ, Ծապին Գարահիսարի, Տարօնի, Կարնոյ, Այնթապի, Ջէյթուսի, Թոմարզայի, Պարտիզակի, Յնտըճազի, Հաճընի, Կուտինայի եւ այլ վայրերու պատմութիւնները:

Պատրաստ՝ պատե՛հ առիթի կը սպասեն ուրիշներ եւս, կորուսա՛ց փրկելու համար թանկագին մասունքներ՝

Նուիրական այս նախաձեռնութիւնները պիտի մնային կիսատ, եթէ չզբորուէր Մեծ Եղեռնի պատմութիւնը:

Այդ ճիգին լծուեցան 1919-էն սկըսած անոնք, որոնք մաս դարձած էին աքսորի կարաւաններուն, կամ մօտէն ծանօթացեր էին մահուան ուղիներէ քաղաք մեր խնայակներուն սրտանմլիկ պատմութիւններուն:

Այս մտրդին մէջ յիշատակութեան արժանի գործեր մնացին Գ. Ծ. Վրդ. Պալաքեանի երկհատոր Հայկական Գողգոթան, Ա. Անտոնեանի՝ Այն սեւ օրերուն, Մ. Շամտանճեանի՝ Հայ մտքին եարկը Եղեռնին, Վահրամ Տատրեանի՝ Իւլպի անպատը, Կարապետ Գարիկեանի՝ Եղեռնագատուը, Արմէն-Անոյշի՝ Այրուած քաղաքի մը պատմութիւնը եւ Հայրենիք Անագորի մէջ լոյս տեսած իր Յուշերը, Արամ Մահակեանի՝ Դիցազնական Ուրփան, Տաքթ. Կարոյեանի՝

Մեծ Եղեռնի նահատակ խաչ բժիշկները, Թէոդիկի՝ Յուշարձան Ապրիլ 11-ին, Ներսէս Վրդ. Բախտիկեանի Հակոբութեամբ Հայկական ջարդերու նուիրուած տասնէ աւելի դրօշակներ ու մեծղի զոյգ հատորները հանգուցեալ Յ. Նազյեան Արք.ի՝ Հայկական ջարդեր անունով, հրատարակուած նախապէս Փրանսերէն ու Հետապային թարգմանուած հայերէնի, Մկրտիչ Էմէրեանի՝ Ախարի և Պատերազմի կրակներուն վէշ գործը, անոնց մոռնալու Կարնոյ մէջ իր աչքերը փակող փրոֆ. Տ. Կ. Լիւլէճեանի յետմահու հրատարակուած Հասկաբազը, ուր նկարագրուած են Պարբերդի բանտին մէջ գործուած թրջական խժժութիւններէն ու մահուան ճամբու վրայ այլ զահանդարին անցքերէ դրուագներ:

ԳՐԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՎՐԱՅ

Ազրիլեան Եղեռնին դժ տուինք բացի Արեւմտահայ եւ Արեւելահայ շարք մը կարկառուն մտաւորականներէ, մեր ամէնէն արուեստագէտ գրողները, — Զօհրազ, Վարուժան, Միամանթօ, Զարդարեան, Հրանդ, Երուսան, Ա. Յարութիւնեան, Թլկատիցի, Տ. Չէօկիւրեան, Ռ. Սեւակ, Գ. Բարսեղեան եւ ուրիշներ:

Սպանդակներ զրոզներէն ոմանք արգէն լքած էին գրիչը. ինչպէս Տ. Կամարական, Ռ. Որբերեան, Լ. Բաշուրեան, Մ. Զերազ:

Իրենց կապերը չխողջ Տ. Զրաքեան, Յ. Սէթեան, Յ. Մըմրեան, Մ. Կիւրճեան նոր գրեթէ ոչինչ տուին:

Մ. Շամտանճեան, Վ. Թէքէեան, Ե. Միսաքեան, Լ. Շաթրեան, Ե. Յոսեան, Յ. Ասպետ սպառնցին իրենց ուժերը մեծ մասամբ թերթերու սիւնակներուն վրայ:

Նախապատերազմեան քննադատի իր խարազանով դարձեալ պատնէշին վրայ էր Յ. Օշակեան, որ եղաւ ամէնէն բեղուն գրողներէն մին:

Ս. Պարթեւեան տուաւ քանի մը նոր պատմութեանքներ եւ կրկու միջակ թատե-

բախող, — Անմահ բոցը եւ Ձայն մը հրմանց:

Ե. Օսեան իր վաստակը թողուց թերթերու մէջ: Իբր հատոր տուաւ Միջնորդ Տէր Պայան բարացուցական տպարաներով, բայց իր իզմատ ազայով իսկ չկրցաւ Ծապլվարի Փանչունիմ գերազանցող նոր տիպար մը տալ մեզի:

Դեռն Եանթ, Համազգային Փայլունճեան ճեմարանի տեսչութեան պատասխանատու աթոռին վրայ, եւ հակուսակ յառաջացած տարիքին, տուաւ կարգ մը զատազիրքերու հետ Գերականութեան հատորներու շարք մը, եւ գրականութեան մասին որոշ ուսումնասիրութիւններ:

Թատերական երկու նոր գործերէ գատ, — Օշին Պայլ եւ Ինկած բերդի Իշխանուհին, զրեց զեղեցիկ վէպ մը եւս, Հոգիները ծարաւի են: Անկախ զուտ զբերական այս գործերէն տուաւ քաղաքական խորքով իր Մեր անկախութիւնը եւ Ի՞նչ է ազգութիւնը, ժողովուրդ եւ մըտաւորականութիւն, Անվար, զնկավար եւ իմքնավար կրթութիւն խորագրով ուսումնասիրութիւններ, որոնք երեւցան իր ամբողջական երկերուն մէջ:

Կ. Զարեան 1921-ին Պոլսոյ մէջ հրատարակեց Օրերի պակը, հետագային տուաւ նոր գործ մը, — Երեւի երգեր, Ռուբէնի յուշերէն վերջնելով զրեց Տատրագոմի հարսը, հուսկ ստորագրեց իր գլուխ-գործոցը՝ Նալը յերան վրայ: Հատորով լոյս տեսած այս գործերէն գատ Հայրենիք ամսագրին մէջ զրեց շարք մը ուղագրաւ գրութիւններ — Բանկո՛ւպը եւ Մամուրի սպորները, Անցորդը եւ իր ճամբան, Երկիրներ եւ ատուածներ, եւ այլն:

Ա. Չօպանեան Անահիտի զուգահեռ տուաւ խնամուած նոր երկասիրութիւններ՝ Հայրենեմբառ քարաստանը, Նահապետ Քուչակի դիւանը եւ երկու թատերական շնչատ գործեր. յիսնամեայ յորելեանին առթիւ լոյս տեսաւ հաւա-

քածոն իր ամբողջական քերթուածներուն:

Ե. Տէր Անգրէասեան զո՛հացաւ Յըրանց ՎէրՓէյի գլուխ-գործոցին՝ Մուսա լերան քառասուն օրերու թարգմանութեամբ: Յառաջի մէջ զրեց հայերէն լեզուի շուրջ կարգ մը հետաքրքրական պատասխաններ, որոնք գուրգուրոտ ձեռքի մը կը կարօտին կորուստէ փրկուելու համար:

Արմաշական հոգեւորականներէն Թորգոմ Արք. Գուշակեան երկու կարեւոր մենագրութիւններով — Երլմեան Հայրիկ եւ Եղիշէ Պատ. Դուրեան, Գարեգին Արք. Խաչատուրեան Տրագիզոնի Աշխարհի լոյսն ի Հայս (երկու հատոր), Եղակաքումներ, Նարեկի, Եզնիկի եւ Նոր կտակարանի աշխարհարար թարգմանութեամբ, Ինքնագիր զեղեցիկ գործով մը, Տարօնաշունչ, ու զանազան գրքոյկներով, Բարդէն Կաթ. Կիւլէսերեան, Նարոյեան Պատրիարք, Տէրան Արք. Մուշկամբարեան, Օրմանեան սըրբազան, Գարեգին Կաթ. Յովսէփեան, Հ. Ա. Ղազիկեան, Հ. Վ. Հացունի, Հ. Մ. Տ. Մովսէսեան, Ինչպէս եւ ուրիշներ, բերին իրենց նպաստը Սփիւռքի դրական մեր ճիգերուն:

Ըստ առաջնոյն Հանդէս Անտօբայ, Բագմալէպ եւ Սիոն շարունակեցին լոյս տեսնել: Անոնց վրայ հետագային աւելցաւ Անթիլիասի կաթողիկոսութեան պաշտօնաթերթը՝ Հասկ:

Գրական նախասիրութիւններով դուն ուրեք լոյս տեսան կարճատեւ ուրիշ թերթեր եւս:

Գրական շարժումին մէջ պատուոյ իրենց տեղը ունեցան Փարիզի Յառաջը, որուն շուրջ հաւաքուեցան երիտասարդ ուժեր, Յուսաբեր եւ Հայրենիք, որոշ բժանդարութեամբ խորացուցին սէրը նորերու մէջ ու միահամուռ ճիգերով պարկ տուին մեր մշակոյթի ծաղկումին:

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԷՐՆԷՍԹ ՀԷՄԻՆԿՈՒԷՅ

ԿԵԱՆՔԸ – ՇԱՐԱՆԸ ԱՐԿԱՆՆԵՐՈՒՆ – ԿԱՆՈՆԸ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ – ԻՐ ԳՈՐ-  
ԹԱԾ ԱԶԿԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ – ԿՐԱԾ ԱԶԿԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ – ՈՃԸ ԵՒ  
ԼԵՋՈՒՆ – ԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ – ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ  
ԿԱՐԾԻՔՆԵՐԸ – ԻՐ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Դեռ երիտասարդ, խորապէս ցնցը-  
ւած ճոսայթայի մէջ իր կողքին պայ-  
թած ուսմբէն, պատերազմէն, հարիւր  
հազարաւոր մահերէն, աւերումներէն,  
անիմաստ եւ զուր կործանումներէն, ու-  
չընչացումներէն, հազիւ դատած իր խան-  
դարուած առողջութիւնը, է. Հէմինկ-  
ուէյ, Շէրվուտ Անտէրսընէն յանձնա-  
բարական գրութիւն մը ձեռքը, Փարիզ  
կուզար ու ամէնէն առաջ կը բարեկէր Փա-  
րիզի երիտասարդ ամերիկացի գրագէտ-  
ներուն առաջնորդ, գուրգուրացող, եւ  
երբեմն կերակրողը եղող Փէրթրիւտ  
Սթէյնի տան դուռը:

Իր սերնդակիցներն ու բարեկամներն  
են Փէրթրիւտ Սթէյն, կզրա Փառնետ  
Տեմանուն բանաստեղծը, Փապլո Փիլա-  
սո, Փ. Սքաթ Ֆիցկերաւա, Հանրի Մա-  
թիս, Շէրվուտ Անտէրսըն, Ճոն Տոս  
Փասոս, Ճէյմս Ճոյս, Ուիլիէմ Պոքընըր:

Սերունդ մը, որ հողեկան խարխի-  
ները կորսնցուցած, նորի եւ արժէքաւոր-  
րէ փնտռողներն ելած, իր հողիին մէջ  
տեղի ունեցող խորատկումներուն ազ-  
մուկը ծածկելու համար ինքզինք տը-  
ւած էր ալքոլին, հեղնանքին, կարծրա-  
ցումի, գէթ երեւութապէս կարծրացու-  
մի հորովոյթի մը, եւ որուն Փէրթրիւտ  
Սթէյն առաւ աշնջան ճշգրիտ որակու-  
մը «Կարաւած Սերուեդ»:

Ամէն ինչ կը փլչէր պատերազմէն  
դուրս եկող սերունդին զիմաց, սերուն-  
դին հողիին մէջ: Մնած նախորդ դա-  
րուն, ամբակու խորխիւններով դարուն  
մէջ, խորտակումներով հարուստ 20-րդ  
դարուն մէջ կորսուածներ էին անոնք,  
ու նոր ճամբաներ կը փնտռէին, կարե-  
նալ վերապրելու համար իրենց հողիին  
մէջ գէթ, արժանի՝ մարդու, գրագէտի,  
մտաւորականի կոչումին, նոյն ատեն  
սակայն այս աշխարհին մաս կտրող,  
ստեղծող ամբողջ տեղաւորած աւերակ-  
ներով լի առօրեային մէջ:

Մէկը նկարչական վրձինով, միւրը  
բանաստեղծական տողերով, ուրիշ մը  
վիպակներով, վէպերով, կը փնտռէին  
ճամբան, կը գծէին ճամբան «Գորսուած  
սերունդ»ի բոլոր անդամներուն համար,  
եւ յետնորդներուն համար:

Իրոք հանճարներուն նման, Հէ-  
մինկուէյ բնագործն զգացող, տեսնող  
էր եւ անզուսպ, անկարգապահ միաժա-  
մանակ: Բարերար ազդեցութեանց տակ  
ինկած էր սակայն եւ արաչօրէն կ'օգտը-  
ւէր: Իր առաջին գրուածքներէն մէկը  
երբ կը կարդայ Փէրթրիւտ Սթէյնի, ան  
կ'ըսէ՝ «Ճատ նկարագրութիւն կայ ասոր  
մէջ, եւ ոչ յաջող նկարագրութիւն: Վե-  
րսկսէ, կեդրոնացիր, խոսցիր»: Հիմ-  
նական կանոններ զրագէտի մը համար,

երբ կարեւորութիւն կու տայ խորհուրդ  
դին ու կամքը ունի հետեւելու անոր:  
Հէմինկուէյ ունէր այդ կամքը:

«Գրեւը սորվեցաւ այնպէս ինչպէս  
Երկրաչափութիւն կը սորվին, կը գրէր  
Մալքում Քոկլէյ. առանց դասազբէ-  
իւ ուսումնասիրութեանց առընթեր հը-  
նարելով կանոնները»:

Հէմինկուէյ շատով ճանչցուեցաւ  
որպէս հաւատարմ Փարիզ ապրող նոր  
սերունդի գրագէտներուն: Էյրա Փառնտ  
կ'ըսէր բարեկամի մը. «Անպիտանին բը-  
նազդները ճշգրիտ են»: Սքաթ Ֆիցկե-  
րայա կը գրէր հրատարակիչ Մաքսուէլ  
Փէրքինսի՝ «Կը գրեմ քեզի, խօսելու  
համար երիտասարդ գրողի մը մասին,  
որ էրնէսթ Հէմինկուէյ կը կոչուի ու  
Փարիզ կ'ապրի... Կը գրէ «Թրանզաթ-  
լանթիզ Բըլիու»ի մէջ եւ փայլուն ապա-  
զայ մը ունի: Պիտի հետեւիմ իր վերել-  
քին, այս որպէ՛ն սկսած: Իրական ար-  
ժէքն է ան»:

Իր գրուածքները կ'ենթարկէր էզրա  
Փառնտի եւ Ժէրթրիւտ Սթէյնի քննար-  
կումին, քննադատութեանց: Էզրա  
Փառնտ կը կարգար անոր գրածներուն  
մեծ մասը եւ ետ կը վերադարձնէր, կա-  
պոյտ մատիտով սրբազուտ, ածական-  
ներուն մեծ մասը ջնջուած: Ժէրթրիւտ  
Սթէյն կը կարգար ընդհանուր քննար-  
կումը. սակայն իր արտայայտած մտա-  
ծումները փնտոող էին, եւ երբեք չէին  
խնայեր:

Հետազային ինքն իսկ կ'ըսէր իր ու-  
սուցիչներուն մասին՝ «Էզրան իրաւացի  
էր եւ ուղիղ՝ 50 առ հարիւր համեմա-  
տութեամբ, իր կատարած ցուցմունքնե-  
րուն մէջ. եւ երբ կը սխալէր, այնքան  
կը սխալէր, որ այլեւս կասկած չէր մը-  
նար մէջը իր սխալ ըլլալուն մասին:  
Ժէրթրիւտ Սթէյն՝ միշտ ուղիղ էր:  
«Շնորհակալ եմ Ժ. Սթէյնին այն ամէն  
բանին համար, որ սորվեցայ իրմէ, բա-  
նորուն վերացական կապակցութեան մա-  
սին, ու կը յայտնեմ իմ հաւատարմու-  
թիւնս Էզրա Փառնտին, որպէս բանաս-  
տեղծի եւ հաւատարիմ բարեկամի...»:

Պրոպէրէն սորված էր ճշգրտութեւ-  
նը, ճշգրիտ բառը ճիշդ տեղին գործա-  
ծելը: Ամէն անգամ որ անցնէր Լիւք-  
սամպուրիի պարտէզէն, կը բարեկէր  
Պրոպէրի արձանին:

Ժէրթրիւտ Սթէյնն է սակայն, որ  
սորվեցուցած է իրեն բառերու կշռութիւն  
ու պարզ կրկնումին թողած ազդեցու-  
թիւնը, ընթերցողը շարժման մէջ մըտ-  
ցընելու ուժը: Իր նախադասութեանց  
մէջ սակայն կայ յուշական ուժգնութիւն  
մը, որ չի գար իր ուսուցիչներէն եւ կը  
բացահայտի Հէմինկուէյը ընդօրինակող-  
ներուն մօտ: Մէկ հատիկ է Հէմինկուէ-  
յի ոճը, Հէմինկուէյի լեզուն:

Երբ «Սթար» թերթին կողմէ կը  
վարձուի որպէս թղթակից, իրեն կը  
տրուին հետեւեալ հրահանգները, գրե-  
լակիրպին համար. «Գործածէ ուժեղ  
անվերջն մը: Եղիւր գրական եւ ոչ թէ  
բացասական... Խուսափէ ածականներու  
գործածութիւնէն, մասնաւորաբար հն-  
յալիսալ, շէնդ, մեծ, սքանչելի եւ նման  
արտառոց ածականներէն. բնաւ մի գոր-  
ծածեր հինցած ժողովրդաբարբառ»:  
1910-ին Հէմինկուէյ կ'ըսէր երիտասարդ  
լրագրողի մը, թէ ատոնք լաւագոյն կա-  
նոնները եղած էին իրեն համար, եւ թէ  
երբեք մոռցած չէր զանոնք: «Բիւլ մը  
տաղանդ ունեցող տեւէ մէկը, որ ճըշ-  
գըրտօրէն կը զգայ եւ ճշգրտօրէն կը  
գրէ այն նիւթին մասին, որ կ'ուզէ ար-  
տայայտել, անպայման կը յաջողի, եթէ  
հետեւի այդ կանոններուն»:

Ինք յարատեւ աշխատանքով, ինք-  
նասրբազրութեամբ ձեռք բերած էր իր  
ոճի ուժգնութիւնը, լեզուի գեղեցկու-  
թիւնը, ճերկար ու դժուարին վարժու-  
թիւններէ ետք, մարդուեցայ եւ յաջթե-  
ցի Կի տը Մոփասսնին. երկու անգամ  
հաւասար մնացի Սթենտալի հետ. ոչ  
ոք սակայն պիտի յաջողի զիս մտցնել  
պայքարի կրկնը Թոլսթոյի հետ, բացի  
եթէ յիմարանամ, կամ հետզհետէ աւելի  
լաւ գործեր արտադրեմ: Բառերը իրն  
են եւ անհամեստութիւն պէտք չէ հա-  
մարել ըսուածը, այլ գիտակցութիւնը

տարիներով թափուած աշխատանքին ու ձեռք բերուած արդիւնքին: Արդիւնքը վաւերացուցաւ Նոպէիեան մրցանակը տրուած ժամանակ, երբ հետեւեալ ձեւով կը ընդունուէին մրցանակի յատկացման պատճառները՝ «Իրնէսթ Նէմինկուէյին, իր ուժեղ վարպետութեան համար, որ նոր ոճ մը ստեղծեց արդէ դժարականութեան մէջ, ինչպէս վերջերս կրկին երեւան եկաւ. «Տիր օլտ մէմ էմտ սիր սի» գրեով»:

Ինչ ալ ըլլան իր արժանիքները, կամ թիրուծիւնները, որպէս մտածող մը, յամենայն դէպս ինք կը մնայ, ձէյմըս ձոյսին հետ, ամենալաւ տիրապետող անգլերէն լեզուին, արդի գրականութեան մէջ: Ան գործողութեան ենթարկեց լեզուն. կարեց, նետեց անականներն ու յուշարար այն բառերը, որոնք ընթերցողին կ'ըսեն թէ ինչպէ՞ս պէտք է զգայ ինք: Փոխարինեց զանոնք կարճ, միայնակ բառերով: Իր պատկերները անպակի ձեւով հիւսեց իրարու, որ փոխանակ ընթերցողը հետեւելու գործողութեան, գործողութիւնն է, որ կը խուժէ ընթերցողին վրայ:

Համալսարան չէր գացած, սակայն լաւագոյն ուսուցիչները ունեցած էր որպէս լեզուի ուսուցիչ՝ Մարք Թուէյն, Հըբըլպըրի Թին եւ Ժէրթրիա Սթէյն:

Կը դիմէր ամենասովորական մարդոց ամենասովորական խօսակցութեանց, սակայն փայլուն ու բարձր ոճով խօսակցութիւններ գրի առած է, որոնք միշտ աւելին կը պարունակեն իրենց մէջ, քան լակոնական ձեւով ըսուածը:

Հէմինկուէյ կրնար հաւանաբար շատ աւելի դիւրին ձեւով գրել, շատ աւելի շուտ ժողովրդականանալ եւ հարստանալ. սակայն չ ինչպէս ինք ըսած է Լիլիան Բոսի, «Մարդիկ կը կարծեն թէ տգէտ, վիժած մըն եմ, որ գաղափար չունի տասը տղար արժող բառերուն մասին: Ծանօթ եմ այդ տասը տղարնոց բառերուն. սակայն կան աւելի հին, աւելի լաւ բառեր»:

Շատ չէր սիրեր խօսիլ ինքն իր մա-

սին, իր գրականութեան մասին, կամ գրական իր ըմբռնումներուն մասին: Սակայն զանազան թղթակիցներ, յաջողած են երբեմն կորզել իրմէ իր մտածումները, հակառակ իր համոզումին, թէ «Ինչո՞քան լաւ ըլլայ գրագէտ մը, այնքան քիչ կը խօսի իր գրածներուն մասին»:

«Երբ դիմեց մը, կամ պատմութիւն մը գրելու վրայ եմ, առաւօտները կը գրեմ, ամէն առաւօտ, առաջին լոյսի երեւումէն անմիջապէս ետք, որքան որ կարելի է շուտով: Քեզ խանգարող մէկը չկայ: Օղբ գով է, կամ պաղ. կու գաս գործիդ ու կը տաքնաս, քանի կը գրես: Կը կարգաս ինչ որ գրած ես ու կանգ առած՝ երբ դեռ դիտես յետոյ պատահելիքը, կը շարունակես անկէ. կը գըրես, մինչեւ հասնիս տեղ մը, ուր դեռ ըսելիք ունիս, դեռ գիտես յաջորդ պատահելիքը: Հոդ կանգ կ'առնես եւ կը փորձես շարունակութիւնը ապրիլ ներշնչութեամբ, մինչեւ յաջորդ առաւօտ: Ըսենք՝ սկսած ես գրել առտուայ վեցին, կը շարունակես գրել մինչեւ կէսօր, կամ աւելի առաջ կանգ կ'առնես: Երբ կանգ կ'առնես, դատարկուած ես բաւական մը, սակայն ոչ ամբողջովին. կը զգաս այնպէս, ինչպէս երբ սիրած կնոջ հետ նոր աւարտած ես սիրային բուռն գեղումները...»:

Հէմինկուէյ գրամեքենայ կը գործածէր գրելու համար: Վերջին տարիները սակայն վերադարձած էր մատիտին, եւ ստեղի կը գրէր, Ափրիկէի մէջ ունեցած օգնականին արկածէն մնացած մէջքի ցաւին պատճառով: Շատ արագ կը գրէր խօսակցութիւնները, երբեմն այդ արագութեան հասնելու համար, կը ստիպուէր կրկին դիմել գրամեքենային: «Առաւօտուն կ'արթննամ, եւ ուղեղս կը սկսի նախադասութիւններ կազմել, կառուցել, պէտք է շուտ մը ազատիմ անոնցմէ, ըսեմ զանոնք, գրի առնեմ»:

Իր մտասեւեռումը ճշմարիտը դըտնել ու ճշմարտօրէն տայն էր: «Իրագէտին դիմաց դրուած հարցը չի փոխուիր, միշտ նոյնն է, կ'ըսէր. ինչպէ՞ս ընել որ

ճշմարտանման գրէ եւ դտնելէ ետք ճշմարտութիւնը, այնպէս մը արտացոլացնէ զայն, որ ընթերցողին անձնական փորձառութեան մէկ մասը կազմէ ան»:

Ճշմարտութիւնները սակայն մէկէ աւելի են, մէկէ աւելի հարցերու համար: Երբեմն նոյնիսկ նոյն հարցին համար նորանոր ճշմարտութիւններ երեւան կու գան, կամ ճշմարտութեան մութին մէջ մնացած նորանոր երեւները կը պարծառանան գրադէտին դրչին տակ: Վարական գրադէտին համար, իր ամէն մէկ դիրքը նոր սրղընաւորութիւն մը պէտք է ըլլայ, ուր դարձեալ պիտի փորձէ հասնիլ անհասանելիին: Միշտ պէտք է փորձէ բան մը, որ բնաւ փորձուած չէ մինչ այլ, կամ որ փորձուած է ուրիշներու կողմէ, սակայն ձախողած: Այն ատեն, երբեմն, եթէ բախտը ունենայ, պիտի ՅԱՁՈՂԻ՛ն, Ինչքան պարզ բան մը պիտի ըլլար դրականութիւնը, եթէ ան նշանակէ՞ ուրիշ ձեւով մը դերձ այն, ինչ որ ուրիշներ այնքան լաւ գրած են...»:

Կայ անշուշտ Հէմինկուէյեան փիլիսոփայութիւն մը: Ոչ ձեւական փիլիսոփայութիւն մը, արտաքինով փիլիսոփայականը, այլ կեանքէ՛ն, ներքին խորունկ աչքերէն եկող փիլիսոփայութիւնը: Հակառակ իր ունեցած արհամարհանքին դէպի բնագոյնական սխտեմները, իրականին մէջ ինքն ալ բնագոյնական փնտառութիւն մէջ էր: Յարատեւ գրննող մըն էր հաւատքներու, եւ արժեքներու տալանտներու, ինչ որ արեւմտեան թաղաքակրթութեան կեդրոնական եւ հիմնական տալանտն է:

Ինչպէս այնքան ճիշդ կը սահմանէր, Հէմինկուէյի մասին իր գրած յօդուածով, Լ. Գարմէն, «Դարը ուր սպարեցաւ եւ ստեղծագործեց Հէմինկուէյ, եղաւ դէպքերու ցնցող յաջողականութեամբ, գիրար ժխտող դաշափարներու եւ շահերու խառնարան մը, ուր ոտնակոխ ինկան բոլոր տկարները եւ կուրծքէն դաշունահարուելով դիտապաստ ինկաւ: 19-րդ դարու վիպապաշտութիւնը»:

Հէմինկուէյ ու իր սերունդի միւս

նորկայացուցիչները, առաջինները եղան դիմաւորող, միշտ Լ. Գարմէնի բառերով, «Դարուն նկարագրէն բխող բըրտութեան օտեղծած անորոշութեան եւ վախի համատարած հոգեվիճակը, ուր անհատը, զողահար, հեւ ի հեւ վազող մը, փորձեց քաղել առաւելագոյնը կեանքէն: Մարդը դարձաւ հաճոյքներու մաքսանենդ մը՝ սրտատրոփ եւ սպրեցաւ կեանքը՝ փչրանքներովը առիւծի բաժնին»:

Այդ պայմաններուն մէջ անխուսափելի էր «Կորսուած սերունդ»ի գրադէտներուն մօտ, խորունկ յոռետեսութիւն մը, ինչ կը վերաբերի մարդկութեան վիճակին եւ սոսոյիկեան մօտեցում մը՝ կեանքի ողորդութեանց:

Քսաներորդ դարը, ուր իր աչքերը կը բանար Հէմինկուէյ, Ֆոսայթայի ուսմբի պայթումին վերապրելէն ետք, հիւանդանոցի մը մէջ, այլեւս կը մերժէր վերացական բաներու փիլիսոփայութիւնը: Եւրոպական ճակատներուն վրայ չորս տարի շարունակ պայթող ուսմբերը բզկտած էին վերացականը: Վերապրողները շօշափելի բաներու փիլիսոփայութեան մը ծարաւը ունէին: Գարը պատրաստ էր զգայնութեանց հագեբանութեան մը համար, կոպտօրէն դրուած իրականութեան համար, զգայատիրութեան յորձանքին համար, որ կ'ողողէ Հէմինկուէյի էջերը:

Առաջին դպանութիւնը որ անխուսափելիօրէն պիտի ունենար վերապրող երիտասարդ դրողը, լեզուի ու դաղափարներու կրկնակի դաւաճանութեան զգայնութիւնն էր: «Կորսուած սերունդ»ին առաջին կորսնցուցածը իր հաւատքը եղաւ բառերուն հանդէպ, մեծ մեծ բառերուն հանդէպ: Տեղակալ Հանրի, «Է փաքուիլ քու արմգը գրքին մէջ կ'ըսէ՛՝ «...Միշտ ալ շփոթի մատնուած եմ սրբազան, յաղթապանծ, զոհարբում բառերէն... ոչ մէկ սրբազան բան չտեսայ. այն ինչ որ փառապանծ էր՝ եւ ոչ մէկ փառք չունէր իր մէջ. իսկ զոհարբումները՝ ...Շիքակոյի սպանալա-



նոցին կը նմանէին, այն տարբերութեամբ միայն, որ միտէն բան մը չէին շիներ, կը թաղէին միայն...»։ Մեծ բառերը կեղծիք էին, եւ «Կեանքը ինքը, պարզ անհամ կատակ մըն էր», ինչպէս կ'ըսէր նոյն դիրքին մէջ, մահամերձ Գաթիկն։

Համաշխարհային առաջին, կամ երկրորդ պատերազմին ուղղակի մասնակից չըլլած սերունդ մը դժուար պիտի ըմբռնէ ասորումը, որ Հէմինկուէյի սեւրունդին էր, որ ներկայիս Եւրոպայի երիտասարդութեանն է։ Հէմինկուէյի համար, մարդկութիւնը, գանձակներն գոյութիւն մը կ'ապրէր, այսոք նաևու մը վրայ։ Եւ ոչ մէկ յոյս կար դրսիտի, կամ կորով բերող հաւատքի մը՝ դէպի Աստուած։ Ոչնչութիւն էր եղածը, զոյսութիւն ունեցածը, ունայնութիւնը (Թաքմ Մակլալիմ, Յուլիս 14, 1961)։

Ըստ Հէմինկուէյի, կեանքը միջանկեալ, անցողակի բան մըն էր, ոչնչութիւնէն ոչնչութիւն տանող։ Մակայն ճիշդ ատոր համար ալ, ճամբու ընթացքին բնիկք բան մը կար, դեր մը կար կատարելիք։ Ոչ թէ որովհետեւ տիեզերական օրէնքներ կան որոնց պէտք է հպատակիլ, ոչ իսկ տիեզերական բարոյական չարփանիչ մը կ'ընդունի։ Կան օսկայն զանազան խումբերու յատուկ, կեանքէն գոյացած, իւրայատուկ բարոյական չարփանիչները, որոնց համաձայն պէտք է շարժիլ. մարդիկին բարոյական կանոնները, զինուորին բարոյականը, եւ այլն։ Հէմինկուէյ որ կը մերժէր հերոսը ու հերոսի պաշտամունքը ընդհանուր ատումով, հնարեց կանոնական հերոսը։ Կանոնը իր համար այն էր, ինչով որ փոխարինած է ինք Աստուած։

Հէմինկուէյի հերոսը, կանոնական հերոսը, զիչ մը մեծամիտ է, զիչ մը տարտամ, սակայն հակաճ ունի, փորձութեան բույլէն պէտք եղած վարուելակերպը, ըստ իր պատկանած խումբի ըմբռնումներուն վարուելակերպը, պէտք եղած քաջութիւնը։ Յիմարտիկը կ'ապրէ իր կեանքը, մեր դատումները իր մասին պիտի հիմնուին սակայն ցլամար-

տիկներու ձօս տիրապետող կանոններուն, բարոյական ըմբռնումներուն վերայ, նայած թէ ինչպէս կը վարուի ան, համեմատած այդ կանոններուն։

Կեանքը կը վերածուի խաղի մը, ուր կատարուելիք բաներ կան, որոշ ոճով մը, ՅԱՆՈՒՆ ՈՃԻՆ։ Նման կեանքի մը մէջ սակայն, վեհութիւնը, մեծութիւնը տեսանելի չէ, տեսանելի կը դառնայ միմիայն մահուան վտանդին դիմաց։ Տոսալթայէն ետք, Հէմինկուէյի ձօս մահը արժանաւորապէս դիմաւորելու մտածումը մտահալածանք մըն է այլեւս։ Մարդոց նկարագիրը հոն, անոր դիմաց կրնայ չարիւհիլ։ Պատերազմը, սպանական քաղաքացիական կռիւնները եւ ցլամարտը տուին իր հերոսներուն առիթը, կարելիութիւնը՝ դիմադրուելու մահը ոչ որպէս հերոս, ոչ որպէս բացարձիկ հակ մը, այլ մարդ մը, որ կեանքին խաղը կը խաղայ հաւատարմօրէն թրեւն վերաբերող կանոններուն։

Իր մարմնի արտաքին փայլին տակ, Հէմինկուէյ միշտ ալ մեծցուցած է ներքին անձկութիւն մը, մշտական հարցականներ՝ ճակատագրի մասին, թէ եւ իր հերոսները միշտ կ'ըսեն, կը մտածեն, թէ «չ'արժեք այդ մասին մտածել»։

Իր հերոսները չեն մտածեր պատահելիքին վրայ. իրենք բան մը չեն առաջացներ, իրենց է որ բան մը կը պատահի։ Հէմինկուէյեան հերոսը տեսակ մը հանդիսատես է ինքն իր կեանքին, իրեն պատահածներուն, եւ կ'ընդունի իր ճակատագիրը այնպէս ինչպէս կու գայ։ Ձգած է կեանքը բարտին, սակայն չի փախչի վտանգներէն, կ'ապրէ ըստ կանոնին, կը կանգնի կորովի, առանց դժբամալուխի վերածելու այդ կորովը, համարելով զայն բնական, մարդկային, միակ ազատօրէն ընդունուած վարուելակերպը, որ կարելի է ու պէտք է ունենալ կեանքին մէջ։

Ուղիղ է սակայն Թաքմ Մակլալիմը շխատակցին դիտողութիւնը, թէ «Բախտի բնագոյնական ըմբռնումին մէջ դժուարութիւնը այն է, որ շատ նեղ են իր

սահմանները կարհնալ ընդգրկելու համար իրական ողորդական ճակատագիր մը: Յոնական եւ էլիզապէթեան ողբերգութեանց մէջ, հերոսները գիտեն իրենց սպառող ճակատագրին ահաւորութիւնը, կ'ըմբռնեն եւ ըստ այնմ կը քաշին զէպի հոն. գիտակցօրէն չեն փախչիր իրենց ճակատագրէն: Հէմինկուէյի հերոսները չեն ըմբռներ իրենց պատահածը. անհամ կատակներ են որ կը պատահին իրենց... ընթերցողը իր կարգին, կը արտմի՝ առանց սրբանալու, կը համակերպի՝ առանց հաշտուելու մարդկային ճակատագրին հետ»:

Եթէ այդպէս է Հէմինկուէյի գրքերուն մէջ, այդպէս է որովհետեւ զամէն ինչ գիտուած է մարդու մը կողմէ, որ կարծես նոյն օրը պիտի մեռնի եւ գիտէ թէ պիտի մեռնի»:

Մանր նիւթերով չէ գրադած: Քաղաքականութեամբ չէ գրադած, չէ սիրած քաղաքականութիւնը: Առած է ընկերութիւնը իր փոթորիկուն վիճակին մէջ, առանց փնտռելու պատճառը, առանց մտածելու ճարի մասին: Գրած է ժամանակի ու քաղաքներու մասին, կեանքի ու մահուան մասին, ընկերային անհանգիստ վիճակներու մասին, որպէս բնական աղէտ, որպէս գետերու յորդում, դաշտերու ողողում:

Անհատը այդ ընկերութեան մէջ է, այդ փոթորիկը կ'ը կրէ, անկախ իր կամքէն: Ինքզինք կրնայ ազատել աղէտէն, վստահելով միայն ինքն իր ուժերուն: Իր կամքէն կախուած է միմիայն իր կեցուածքին վայելչութիւնը, բոլոր փոթորիկներուն դէմ, բոլոր հարուածներուն դէմ, մանաւանդ մահուան դէմ: Եթէ չկարենայ ինքզինք ազատել, պարտաւոր է մահը գիմարել պաղարիւնութեամբ, քաշուութեամբ:

Շատ քիչ գրած է սիրոյ եւ կանանց մասին, եւ բնդհանրապէս իրեն յատուկ աննականութեամբ: Իր գրականութեան մէջ կան միայն էգեր եւ կամ քնաչըրջիկներ. բացառութիւն կը կազմէ միայն

Լէյտի Պրէթ Ալլէն, «Ճտրուէլ թու Արմըզի հերոսուհին, համակրելի էգ մը»:

Իր կեանքին մէջ ալ, հակառակ իր շորս ամուսնութիւններուն, երբեք չէ փնտռած, չէ ամուսնացած՝ այն տիպի կանանց հետ, որ նկարագրած է: Մալքոմ Գոմպէ կ'ըսէ իր մասին՝ «Բոմանթիք մըն է. կը սիրահարուի այնպէս, ինչպէս հեղաշահան ծառ մը վար կ'իյնայ թուփերու վրայ: Միտամանակ կայ իր մէջ մաքրակրօն գիծ մը, որ կ'արդիւնէ իրեն Քոֆքէյ Փայքիներու սիրարանող մը ըլլալը: Երբ կը սիրահարուի, կ'ուզէ ամուսնանալ եւ ամուսնացած մընալ. եւ ամուսնութեան մը վերջաւորութիւնը կը համարէ անմահական պարտութիւն մը»:

Առաջին կնոջ հետ ամուսնացած էր 1921-ին. անկէ ունեցած է մանչ դաւակ մը, ծնն Հէմինկուէյ: Երկրորդ կնոջ հետ ամուսնացած է 1927-ին. անկէ ունեցած է երկու մանչ՝ Փաշրիք եւ Կրէկորի: Սպանիոյ քաղաքացիական կռիւններէն հետք, իր երկրորդ կնոջմէն ամուսնալուծուելով, 1940-ին ամուսնացաւ Մարթա Կէլլըրնի հետ, որուն հանդիպած էր Մատրիտի մէջ: Մարթայի գրել շարունակելը ու տեսակ մը իր հետ մրցակցութեան ելլելն է որ զինք շատ նեղած էր, եւ վճռած էր որ եթէ կրկին ամուսնանայ, իր կինը պէտք չէ որ նոյն ատեն գրագիտուի մը ըլլայ: Եւ իր շորորդը կինը, Մէրի, թէեւ գրագիտուի էր, սակայն իր հետ ամուսնանալէ հտք վերջ տուաւ գրականութեան:

Ոչ իր կեանքը, ոչ ալ իր գրականութիւնը յատկանշական կամ արժէքաւոր են կանացի սէրով: Ամերիկացի զՐազէտ, իր նիւթերը սակայն միշտ հղան միջազգային:

Յէյցի, Էլիքի եւ Չէյթս Չոյսի հետ առաջին ձեւաւորողներէն մին եղաւ արդի գրականութեան: Խառնուածքով աւելի մօտ էր միջազգային, թափառող մտաւորականութեան փաղանդին, Մալրոններուն, Քամիւներուն, Քէօլէրնի-

րուն, չորոնք քսաներորդ զարու գիտակցութեան եւ խղճին բոլոր ճակատամարտներուն առաջին դժերէն հաղորդադրութիւններ կը դրկէին մարդկութեան»:

Պիտի դիմանա՞յ իր գրականութիւնը ժամանակին: Բազմաթիւ տուեալներ կան «այո՛» պատասխանելու համար այս հարցումին: Իր կարծ, կամ փոքր վէպերը, կամ պատմութիւնները՝ «Տեղը սրն ալսո թայգ», «Ֆարուէլ քու արմը», «Տեղը օլտ մէն էմտ սեղ սի» ունին գը-

լուխ գործոցներուն ներքին անխուսափելիութիւնը: Ներկայացուած են այնքան բնական, այնքան ճշգրիտ, որ ոչ ոք կրնայ մտածել թէ այլ կերպ կրնային ըլլալ: Նոյն ատեն, տիեզերական են անոնց նիւթերը՝ մարդիկ բախումի մէջ բնութեան հետ, տիեզերքի խորհուրդին հետ:

Իր լաւազոյն գրքերը կանգնած են այն հազուադէպ բարձրութեան վերայ, ուր գրականութիւնը փորձառութիւն մը կը դառնայ:

Բ. Փ.

### ԱՂԲԻԻՐՆԵՐ

«Մարդու մը կեանքը ու մահը» Ալֆրէտ Արնոլդի եւ Փիքքը Համիլ, Երևանի Հեմինգուէյի նուիրում յօդուածը, «Թայմ» մակագիւնի 14 Յուլիս 1961-ի թիւին մէջ:

Լ. Գարուէնի Է. Հեմինգուէյի մասին գրած յօդուածը «Ազգակ» օրաթերթի 18 եւ 19 Օգոստոս 1961-ի թիւերուն մէջ:

«Փարի Մաշ»ի մէջ Ժի. Էմ. Էս-ի յօդուածը, նուիրում Հեմինգուէյի, 1961 Յուլիսին, ամր մահուան առթիւ:



Վ. ՕՇԱԿԱՆ

**ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ**

**ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Ամերիկային վերջ, կը դառնանք վերջին անգամ մը հին ու մաշած Եւրոպային, երկու հուսկու, կենսունակ երիտասարդներու միջև բռնուած, բանտուած ու մտածկոտ: Մե՞ր — անշուշտ ոչ, եթէ չլլանանք հիւլէական սուսքերու շառայլէն ու նայինք անոր մտքի շողարձակումին, աւելի պայծառ քան ինչ որ Միպերիոյ կամ Յաղաղականի մէջ կը փորձուի: Մակայն ապազան կամ Ամերիկացիին է կամ Համայնավարին, եթէ չըլլայ ան դեղին ցեղինը: Ոչ թէ միայն որովհետև զաւակները աւելի նոր են ու հետեւաբար մօտ կեանքին, այլ որովհետև կարճ է յիշողութիւննին (տասը տարուայ մէջ մոռցուեցաւ Սթալինը), ամէն բան նոր պիտի սորվին, ժամանակ ունին սխալ դործելու, ապրիլն ու մեռնիլը նոյն արկածախնդրութեան մասին են, որ պայքար կը կոչուի:

Եւրոպան սակայն, ալ ոչ պատրանք ունի ոչ ալ հաւատք: Պատերազմի արհաւիրքը նոր բան չէր Եւրոպայի համար, բայց այս վերջինը որ 20 միլիոն կեանք խլեց, իր սաստկութեամբ, իր ստեղծած ատելութեան հուրով ու մառաւանջ մարդկային կեանքի արժէզրկումով՝ աննախընթաց ապրում էր: Եւրոպացին, որ զեռ կը հաւատար իր ոգեկան առաքելութեան, որ ասկաւին վրոտահուրէն ունէր իր մշակութային արժէքներուն վրայ ու վերէն կը նայէր Ամերիկայի ու Ռուսիոյ — այդ եւրոպացին, ազնուագոյն նմոյշը 25 դարերու քաղաքակրթական ճիշդին, այդ մարդը

չկայ այլևս (\*): Հասարակաց Շուկայ, տնտեսական արտակարգ բարդաւանում, արուեստի մեծ նուաճումներ, նոյնիսկ հիւլէական քանի մը բուսմէ՝ չեն կրնար Եւրոպական արդի մտաւորականութեան ոչ մեղապարտ խիղճը լռեցնել, ոչ ալ բանարարուած իսէայներուն տեղը նորեր հայթայթել: Գերմանական, անգլիական ու մանաւանդ Ֆրանսական երիտասարդ մտաւորականութիւնը թունաւորուած է վերջին պատերազմին շրջապագերծուած ժխտումի, ատելութեան ու քայքայումի մոլուցքէն: Մահ ու կործանում միայն չէնքերն ու կմախքները չէ որ կը փլին: Ու եթէ նոյնիսկ գոյութենապաշտ փրիտոփայութիւնը չըլլար՝ մահը ամենօրեայ ապրումի պիտի վերածուէր մեր քաղաքակրթութեան արկածներու ու հիւլէական բնաջնջումի ըստանալիքին ներկայութեան: Այս կացութեան սյուծառ գիտակցութիւնը, անիմաստ կեանք մը շարունակելու մէջ յամենալու յամառութիւնը՝ կը կազմեն Եւրոպական արդի մտայնութեան արժէքը ու հաւանաբար վէրքը: Որպէսզի կարենանք իր ամբողջ թափով ներկայացընել այս վեհակը դրականութեան մէջ, պէտք է զատենք այն բաժինը որ մասամբ զեռ դուրս կը մնայ Եւրոպական զգայնութիւնէն: Նախ կը զբաղինք Անգլիայով:

(\*) Ժան Բոլ Սարթր, մրանց Ֆանտոմ-ի Հէ Տոնէ տը Լա Թէր գրքին յառաջարկին «մէջ եւրոպան մեռած ու ետզուած կը յայտարարէ»:

Ըմբոսացումը անվայել, սնվատաշան արարք մըն է Անդրիոյ մէջ: Գայթակղութիւն մըն է: Ամօթ է: Ստրուկներու յատուկ հոգեմանութիւն է: Այս ողին կը տիրէր մինչեւ վերջին պատերազմը: Դասակարգային նուաստացուցիչ խորութիւններ, արքայական ընտանիքի ու մանաւանդ անոր պահակներու սղորմելի Փօլջօրի շուրջ եղերեղական ծեր կոյսերու ու մեռելաթաղային լըջուկներու նախարարներու գուրգուրանքը, զինուորական ռզկերիչ քայլերդներ, կտրգապահութեան անաւոր կիրք մը որ մարդիկ կը վերածէ ակամայ դեռասաններու զօրապունդի մը եւայլն — այս բոլորը ոչ միայն անդարձ մեկնած կայրութեան մը կարօտն ու պատրանքը ներկայ Քը դարձնէին, կը յաւերժացընէին՝ այլ միջին Անգլիացիին հոգեբանութեան մաս կը կազմէին: Անհրաժեշտ էր, ի դին ամէն զոհողութեան ու նոյնիսկ վատութեան՝ մաքուր խիղճ ունենալ: Պատշաճութիւնը կը փրկէր բարոյականը՝ զայն նահատակելով:

Սակայն վերջին տասնամեակին շատ բան փոխուեցաւ, նորոգուեցաւ: Ձախակողմեան մտածողութիւն, եւրոպական ու մանաւանդ ամերիկեան կենցաղի ազդեցութիւն, տնտեսական մրցակցութիւն, ընկերային պայքար՝ խախտեցին հազարամեայ ինքնարաւուրութիւնը տիրող կարգերուն, երեւան հանեցին Անգլիոյ ընկերային բարոյականին կեղծ մէկ երեսը: Նոր մտաւորականութիւն մը պոռթկաց, ցած խաւերէն դուրս նետուեցաւ, դատուեցաւ թէ՛ իր դասակարգէն եւ թէ՛ ալ տիրող դասակարգէն:

Ու երբ դատուի, մտաւորականը կը հակադրուի: Հիմնականը այն եղաւ որ մտաւորականը մտաւ իր բուն տիպէքթիքին մէջ (այս իմաստով է որ մտաւորականութիւնը, հոգեւորականութիւնը կամ թէքնիկէնները, առանձին դասակարգ մը, ճակատագիր մը, նոյնիսկ ազգ մըն են բոլորովին անկախ իրենց միջավայրէն ու ազգէն) եղաւ երկտասարդ թատերագիրը որ կըրցաւ հայտնել, իր

ծնողքին, իր թագուհիին ու կատակերգական ըրտահրուն, կըրցաւ արհամարհել իր մշակոյթի բարոյականը: Ու այս՝ առանց դէր ու բարի պուրժուաները դայթակղեցնելու պատանեկան ու դիւրին հաճոյքին: Այլ՝ լըջօրէն, երգիծանք ու պաշտօնարարանութիւն, ասելութիւն ու մարդկայնութիւն միտանող զարգացնելով: Նոյաւ երկտասարդը վիպտան, որուն հերոսը կը նետուէր նոյն քաղքնի ըմբռնումներուն դէմ, Անգլիոյ կատողցուցիչ փիւրթիթանիզմին դէմ, յանուն զիչ մը աղատութեան ու յարգանքի: Էլ լըջօրէն էր որ կը կատարելադրուէր: Անշուշտ պաշտօնական շրջանակները ծածկեցին իրենց զմծիծաղը որովհետեւ շատ քաղաքավար էին, սերունդը կոշկեցին էնկրի Եանկ Մէյն (Ընդվլաճ Երիտասարդներ) բայց չկըրցան թուժ յարգարել անոր առջին (\*): Եարժամը քաղեց:

Ամերիկայի Պիթսբիքսթըն մինչեւ Անգլիոյ «Ընդվլաճ Երիտասարդները», ընկերային կարգերու քայքայումէն արձագանգող նոյն ճիչն էր, շեշտի տարբերութեամբ մը: Մինչ Ամերիկացիք, ձէք Գէրուաքի առաջնորդութեամբ ու անոր «Ճամբաներու Երկայնքով» (Օն տը Ռօս) վէպը իբր Սուրբ Գիրք՝ նոր էսթէթիքի մը փնտառութիւն կը մեկնէին, Անգլիացիք, ձօն Օղպոնի «Ճառ նայէ Բարկացած» (Լուֆ Պէֆ ին էնկըր) թատերախաղի ողիէն վարակուած ընկերային թարախն էր որ կը պարպէին իրենց էջերուն վրայ: Անշուշտ կար եւ նոր ոճի մը ծարաւը, նոր ժամանակներու ու կենցաղի յարմար ըղուտ, հեռագրական ու ցաւցնող կերպ մը արտայայտութեան:

(\*)Յիշու տարի առաջ, թայտգը գրական յանդուածը քաղաքիկ թիւ նուիրեց անգլիական գրականութեան, ք Անգլիական երեսակայութիւնը անունով: Յատկանշական էր որ բոլորովին կ'անգլիանար արիւթ, երկտասարդ գրողներու գոյութիւնը: Պատճառը յստակ է — թայտգը պաշտօնական առանդապահ ու տիրող կարգերու մտայնութեան պատգամախօսն էր ու չէր կրնար նորը ճիւղին խառնել:

Պատերազմէն ի վեր, Անգլիա թատերական վերածնունդ մը կ'ապրէ: Անընթացն ութ տարի անուններ կը հնչեն բեմերէն: Արդէն իր բնական կեանքին մէջ, Անգլիացիները դերասանական բան մը անել, դեր մը կը խաղայ ամէն վայրկեան աւելի շնչտուած ձեւով քան ուրիշ ազգեր:

Հիմա որ քիչ մը ազատութիւն ստացած է այդ դարերու ճնշումն ու կարօտն է որ, հաւանաբար, կ'ազատագրուի ու ձեւ կ'առնէ: Չեւ մը որ ձեւի կործանումն իսկ է: Օգտորնի հերոսը, որ ամբողջ սերունդի հերոսներուն վրայ կը ծփայ որպէս նախատիպար, ոչ համակրելի է եւ ոչ ալ զղուելի, բայց պայթուցիկ այնքան կիրք, սերունդներու զսպուած այնքան պոթիկում կը պարունակէ, այնպէս որ հեթանոս ընդվզումով կը հեղեղէ ընկերութեան բոլոր սրբութիւնները, որ, ըմբատացումն իր կարգին կը դադրի արժէք ունենալէ, որովհետեւ շի մնար արուեստի անշահախնդիր մակարդակին վրայ: Մենք Հայերս հաւանաբար դեռ հարկեր տարի մը պիտի ուսանենք մինչեւ որ նման խող մը ներկայացուի մեր բեմերէն, երբ ալ դադարած ըլլանք բեմը բարոյականի դպրոցը նկատելէ:

Օգտորնն էր որ ընկերութեան առաջին այլանդակ պատկերը տուաւ, նման այն հայելիներուն որոնք անճանաչելի կը դարձնեն մէջը նայողը: Այս պարագային, այդ այլանդակ պատկերն իսկ էր իրականը: Իրեն յաջորդները այդ այլանդակութիւնը շնչտեցին, մերկացնելով իրականութիւնը իր համազգեստէն: Իրականութենէն վերջ, եկաւ մարդը ու իր միամիտ, ուրաւ հաւատքը: Ի՞նչ մնաց — այդ հարցումին պատասխանը կարելի չէ արուեստագէտին համար: Բարոյախոսն ու կրօնականն են որ կը զբաղին խարկանքներու ու կարկասներու պատրաստութեամբ:

Աննախընթաց երեւոյթ էր Անգլիոյ համար — ինքնաբու, յուսահատօրէն տափակ ու օգտապաշտ միջին Անգլիացին՝ ու իր դէմ կայնած յառաջապահ թատրոնը...: Բիւիլըր, Սիմբըրն, Ուէս-

զըր, Ուիթթինկ, Արսըն — բոլորն ալ մտաւարապէս նոյն եղերական տեսիլքէն կը վկային: Բիւիլըրի հերոսները, ըլլայ «Տնտեսը» (Տը Բէրքէյթըր) ըլլայ «Մեքենական Սպասեակը» (Տը Տամպ Ուէյթըր) խաղերուն մէջ կը խօսին առանց զիրար հասկնալու, առանց նշանակալի ու տրամաբանական արարք մը ընելու, երկար լուսթիւններու մէջ կը սուգուին, իրար երկար կը նային... մինչ խենթեցնող ճնշում մը կը պրկէ մթնոլորտը: «Մեքենական Սպասեակը» մէջ երկու վարձկան օճաղործներ լըքուած խոհանոցի մը մէջ դարանակալ կը սպասեն իրենց զոհին զոր չեն ճանչնար: Սիմբըրնի Մէկ Ուղղութեամբ ձօնակը (Ուայն Ուէյ Բէտտուում) խաղին մէջ կրկին նոյն անհեթեթ խօսակցութեան կը հանդիպինք ու կը դիտենք թէ ինչպէս հերոսը ծանրութիւն կը ստեղծէ մեքենայի մը շէնտըլի Ալէլուիան երգել կը սորվեցընէ...: Ուէսզըրի մօտեցումը աւելի էրապաշտ է, ու Տիգ մը կայ կեանքի ողորդական էութեան պիտակցութիւնը արթնցնել բանուորական խաղերու մէջ:

Բայց իր հերոսներն ալ, ըլլայ իր «Արմատներ» (Ռութ) կամ «Ռոհանոցը» (տը Բիլըն) խաղին մէջ կը տաւապին մարդէ մարդ հարդրականութեան անկարելիութենէն:

Այս է վկայութեան թատրոնը: Ուրիշ անուն մըն ալ ունի — Ապսիլարի թատրոնը, որ կը հակադրուի արդէ թատերական արուեստի երկրորդ ուղղութեան, այսինքն՝ ընկերային թատրոնին: Անգլիոյ մէջ այս ապսիլարը դժուար թէ հող դնէ: Բիւիլըրի առաջին խաղը, «Տարեդարձի Խնճոյքը» (Տը Պըրթուէյ Բարթի) քննադատներու ծաղրէն մեռաւ... երեք օր դիմանալէ ետք: Բիւիլըր թէլէվիզիոնի մէջ սկսաւ ներկայացընել ու յաջողեցաւ: Անգլիոյ աւանդապահ նկարագրերը — միայն 1958-ին էր որ կոտավարութիւնը արտօնեց միասնականութեան շուրջ դրուած թատերախաղերու ներկայացումը: Բայց Անգլիացիք արկածախնդիր մարդիկ են որտե՛ն

խորհն ու գաղտնի յարգանք մը զգայու են յանդուզն միտքերու, մանաւանդ խառնուածքներու հանդէպ: Իննթըր ու Ուէսըրը հրեայ ծագում ունին ու համեստ խաւերու մարդիկ են: Միայն սա կարելի է ըսել, որ արդի Ապսիւրտի թատրոնը կը զուգարդիպի այնպիսի շրջանի մը երբ Անգլիոյ թէ ընկերային կազմակերպութիւնը թէ ալ սպասյին նկարագիրը մեծ յեզաւընումներու երկունքին մէջ են ու կրնան նոր ու գաղտնի ուժեր հրեան գալ:

Յառաջապահ թատրոնին քով կայ հինն ալ անշուշտ: Թէրէնս Ռէթիկըն, Պրէնսըն Պէհըն հին ձեւով նոր գրողներ են, սակայն չունին ոչ այն վայրագ ու բիրտ ուժը ոչ ալ մարդկայնութիւնը որոնք կը յատկանշեն միւսները: Զունին մանաւանդ եւրոպական վարակիչ մթնոլորտը իրենց կոնսկին: Իեռ կան թատերադիրներ ինչպէս Քրիսթօֆըր Յրայ, որոնք ոտանաւոր թատրոն կը դրին: Գայթալուած Ղիդրով այս դարուն մէջ, ուր պետական ու քաղաքացիական անմեղ օրէնքներ կը սպառնան միօրինակութեան բարիքներուն մէջ սպաննել մարդէակին ինքնատարութեան իրաւունքը՝ դեռ կը գտնուին մարդիկ որոնք կը նախընտրեն միւս մայիլէն քայլի, ատանց որեւէ հովանաւորութեան՝ քան թէ ենթարկուի միջին, աստիակ ու յորանջող երանութեան զոր կը խոտանան սինեմայի աֆիշներն ու վիճակահանութեան տոմսակները: Այդ մարդոցմէ են թատերագիրներ, Դուրսի Մարիլիկ (Անգլիացիք բառ մը անին որ շատ լաւ կը յատկանշուի՝ Տը Աուքսայլըր): Ազատագրումի, անուազն փախուստի այլ ճամբաներ ալ կան տակաւին, ինչպէս ճարտնական Ջէնը, ամերիկեան ձագը, էզօթէրիք գիտութիւնները ուիսքին ու մարիօտաւանն, հօպօն (որ սկզբունքային դատարկապարան է) միւնիւս Լէժիօն Էթրանժէրը (երբ դեռ գոյութիւն ունէր): Օղպօրնի, Ուէսըրրի ու Պէհընի ընկերվարական կուսակցութեան պատկանիլը՝ թէ՛ այդ մտայնութեան մէկ ուրիշ հրեան է եւ թէ՛ ալ նոր ժամանակներու արուեստի

յեզափոխութեան յատկանշական երեւոյթներէն մին: Կան քննադատներ որոնք արդի թատրոնի ու Շէյքսպիրեան շրջանի թատրոնի միջեւ հանգիստութիւն մը կը գտնեն: Նո՛յն բեմական պարզութիւնը, նո՛յն իմաստասիրական մտահոգութիւնը, նոյն մոլուցքը, վայրագութիւնը ու նո՛յն քնարերգութիւնը: Ներկայ երիտասարդ թատերագիրներուն մեծ մասը բեմական անմիջական փորձառութիւն ալ ունի - եղած են երկրորդական գերերու մէջ, զբաղած են բեմայարգարումով եւ այլն: Նոյնն էր պարագան Շէյքսպիրի ու իր ժամանակակիցներուն: Ընկերվարութիւն ու Հրէութիւն, Շէյքսպիրեան մը շահութային իրականութեան վերադարձ ու Ապսիւրտ-ի թատրոն - այս ցիր ու ցան երեւոյթները անշուշտ համադրութեան թաղուն մակարդակ մը ունին ուր հաւանաբար կ'իմաստաւորուին որպէս գիտակից ճրագրի մը հանգրուանը (Միտնի 12 Իմաստունները...) կամ ալ չկայ այդ միտքը ու միայն մեր անիմաստ պոյնթիւնն է, այսինքն մեր ժամանակներու քայքայիչ, մարդակեր ուժը, կեդրոնախոյս բայց դժուարութեամբ զսպուած անձկութիւնը, Փիզիք ու մանաւանդ քնազանցական՝ որ Եւրոպայէն վերջ Անգլիան ալ կը թօփ վարակած ըլլայ:

Այս է թատրոնը: Լքուած հանքի մը մէջէն յանկարծ նոր երակ մը երեւան եկած է: Որքա՞ն պիտի տեսէ: Ոչ ոք կրնայ ըսել: Աշխարհի ամէնէն պահպանողական երկրին մէջ արուեստի այսքան յառաջդիմական շարժում մը՝ դէպի մեծ ցնցումներ կ'առաջնորդէ: Լաւ նշան է այս ինքնին: Այնքան քանդուելիք կայ Անգլիոյ մէջ... ու անկասկած պոլլոսօզըրը Եւրոպան պիտի ըլլայ կրկին, Յըրանսայէն եկած մղումը: Արդարեւ, ցարդ այդ եղած է երթեւեկի ուղղութիւնը Մանչին վրայէն ու հիմա որ Անգլիան կամաց կամաց Եւրոպայի կը վերածուի, կարելի չէ՞ յուսալ որ անգլիական քիչ մը նոր, կոյս արիւնի ներարկում օգտակար ազդեցութիւն կրնայ ունենալ ծամաբանութիւն հեւաստաւ մտարշաւին վրայ:

Վէպը հասկանալի անդիտական սեռ մըն է, ու մեծագոյն վարպետները հոն է որ ծնած են: Աւանդութիւն դարձած է այլեւս, որ իր մեծագոյն յանցանքն է: Ինչ որ արդեւ չէ չեղաւ անշուշտ որ գործածութիւնը ընդվզած Յրիտասարդներու կողմէ ցատուսի թափ մը ներարկելու, պատեհազմէն ետք:

Քինկզլի էյմիս-ի Բախտաւոր Ճիւ վէպը (Լաքի Ճիւ), ձօն Ուէյնի Անապահեցի վարերը (Հարի օն Տաւն), ձօն Պրէյնի նշանաւոր Վերէն Անեակ մը (է Բոնա էթ տը Թօր) վէպը, Այրիս Մուրտօքի Թանգին Տակը (Անտըր տը Նէթ) վէպը, Ալլըն Սիլիթոյի Շարաթ Գիշեր ու Կիրակի Աստու (Մաթրրոնէյ Նայթ էնսթանտէյ Մօնիքնի) հատորը, Քօլին Ուիլսոնի Երկերը - այս բոլոր վէպերու հերոսները խելացի, արկածախրճիք, քիչ մը անխիղճ երիտասարդներ են, երբեմն արուեստազէտ բայց միշտ ազգատ, համակրելի ու անտանելիօրէն: Անդիտացի՝ որոնք շնն սեղմուիք իրենց ճակատագրական դասակարգին մէջ ու կը փորձեն փոխել: Այսինքն հոսանքն ի վեր կը թիվարեն, կ'ուզեն ընկերային աստիճանները բարձրանալ, յարգ ու պատիւ վայելելու համար: Կը սիրեն ու կը ստեն, ուրիշներու տուները կը բնակին, կը գայթակղեցնեն բայց ծայր աստիճան ամչկոտ են... չարաչար երիտասարդ մարդիկ՝ որոնք կը փորձեն գլուխներն ջուրէն վեր պահել երկրի մը մէջ որ, ըստ իրենց, տուն մնացած ու մոռցուած հիւրերիք տղեղ ազդիկներու, ժամանակավրէյզ կատակերգական ազնուականութեան մը ու միջին տարիքի, լուռ, յամառ ու տոկուն մարդերու ըստպատան սրահին կը վերածուի տակաւ: Անդիտացի ժողովուրդին այդքան ինքնաբաւ, ինքնավստահ, խիղճը հանդարտ ու քիչ մը հեգնական հողերանութիւնը, արդի շուարած ու խարխուլ աշխարհին մէջ ա՛յդքան միակտուր, պէթօն-ստոմէ սուպրոմութիւն ու լաւատեսութիւն, ըլլալ այդ իմացական, ըլլալ հասարակական կեանքին մէջ՝ անբարոյականութեան երանք մը ունի... Հերոսը կը

նետուի այս կեանքին դէմ, ի գին ամէն բանի կ'ուզէ վերերէն սենեակ մը ունենալ, ազնուականութեան ու հզօրներու շուքին տաքնալ, մարդ սեպուիլ, վայելելի էր կեանքը: Ծօ կէմարն, է իճաւ էթ տը Թօրի հերոսը ի վերջոյ կը յաջողի հասնել բլուրի գագաթի սպարանքը, մեծ բաթրօսին աղջիկը առնելով, անագութ, անկենդան հակի մը վերածուած հիմա, ու ա՛յլ չնայելով ետին, բլուրին ստորտը ուր գոհած էր իր սիրտն ու պատիւը, զինք սիրող կինն ու ծնողը, իր ընկերներն ու մարդկայնութիւնը: Լաքի Ճիւ, էյմիսի վէպին հերոսը, քաղաքապետական մատենադարանի համեստ պաշտօնէն շլացած ազնուականի մը կնկան խոստացած նիւթական ու ըզգայնական սպառազմով՝ գրեթէ կը քայքայէ իր ընտանեկան կեանքը: Ծօն Ուէյնի Հարի օն Տաւնի հերոսը համարաբանական վկայականը կը ծայլէ մէկդի կը ունէ ու կը սկսի պատուհան մաքրել ու ամէն տեսակ գործերու մէջ իյնալ ու ելլել, ամէն բաւէ մարդու հետ խելիք ունենալ, պարզապէս որովհետեւ ապահով ու պատուաւոր անկէն մը կը փնտոնէ աշխարհի երեսին (\*): Աւելի հողերանական է Մուրտօքի վէպը, որուն հերոսը, Ճէյք՝ երիտասարդ գրադէտ մը, կը քաշկոտուի Լոնտոնի մէջ, պայքարի ու արկածի ցանցի մը մէջ բռնուած հաճելի ու եղերական նոյն ատեն: Սիլիթօն սակայն, կը տարբերի մասամբ - բանուոր դասակարգի ծնունդ ու ներկայացուցիչ, անոր ըմբոստութիւնը ձեւական է: Իր առաջին վէպը, Շարաթ Գիշեր ու Կիրակի Աստու, հրատարակուած 1958-ին, կը յատկանշուի իր մերկ, առողջ ու

(\*) Ծօն Ուէյնի այս վէպը, հրատարակուած 1953-ին, սկիզբ դրաս վէպի նոր դպրոցին որ կոբուեցաւ մը Մուրտօք (Շարժում): Ընկերային կարգերու երգեմանք, հզօր ու հաճելի իրապաշտութիւն, առոյգ օն մը ու ինքզնուի տրամագրութիւնը՝ իր հերոսը նախասիպար րիշն էյմիսի, Մուրտօքի ու ատիլի վերջը Պրէյնի վէպերուն: Վերջերս ռուսերէնի ալ Յարգամանեցաւ ու հրատարակուեցաւ: Խորհրդային Միութեան մէջ, իբր Թերթօն ու իբր գիրք:



իրապատութեամբ, ու սովորական, կրթութեամբ քայքայուած բնական զարծաւորներ գրական հերոսի պատուին կ'արժանանան, Տիգրանի ի վեր առաջին անգամ ըլլալով անգլիական գրականութեան մէջ: Աւելի իմացապաշտ է Քոլին Ուելլսընի վէպը (Տը Աստիսայտը) «Բուրսի Մարդը», բայց նոյն բարեխառնութեան կը պատկանի:

Անգլիական վէպը կը թուի պարզ կէտ, ընկերային, քիչ մը պատուիրական ճակատագրի զոտուպարտուած ըլլալ: Ժամանց, հեղինակը, իրապաշտ ախորժակներ, երբեմն քարոզ - բայց դերթէ ոչ մէկ թէքնիք փնտառու ձոյսէն ի վեր, ոչ մէկ նոր Էքսպրիմ: Ընդհանրապէս շարժում մը կայ դէպի ետ, Ուելլսընի վէպին գտնական ու հոգեբանական ըմբռնումը:

Բանաստեղծի մը մասին առհասարակ դժուար է կարծիք յայտնել, մանաւանդ երբ նոր ու երիտասարդ է ու զգացական սենեակներու բնակիչ: Աւելի դժուար է սերունդի մասին, Կը մնայ տալ մշակութային պէկլիաւումը:

Անգլիական սանթրիանթրոպիզմը հանրածանօթ է իրրեւ զուսպ, սունական՝ բազմատուած Միջերկրականեան երկիրներու հեղուկ; շատախոս ու գերասանական զգացականութեան: Նոյնը եւ ինչուին համար - իր Անկլո-Մաքսոն միավանկ, կարծր բայերով, ուժեղ բազմայններով (որոնք չունին Լուտին լեզուներու կոկիկ, ճկուն եւ ընտելացած խառնուածքը, այնքան յարմար վերլուծական ու համարական աշխատանքին, զգացումի ու մտածումի պոզիտիւններու երկայնքին) անգլիերէնը դիւրութեամբ, հրճուանքով կը շարկէ ճակատամարտին մտուցքը կամ դաշտնի սպարտէն թարմ, կիսամերկ մարմինն սարսուռը: Արդի բանաստեղծութեան մէջ այս արժանիքն է որ կը շահագործուի: Նոր բանաստեղծներ դարձած են ծաղիկ ու սէք խաղցնելէ, դարձած են դէպի բառը - բառ՝ որպէս պրիսմակ, ուր կը խտանայ իրականութեան ճառագայթը ու կը

պայթի կրկին բանաստեղծի դանկին քառուղիին կեդրոնը: Ծօն Ուելլսն, Տը Քրիսթի՛՛՛՛՛՛ Քալօրթըրի վերջին թիւին մէջ կ'ըսէր, թէ բանաստեղծութիւնը ներկայիս ետ դարձած է դէպի իր սկզբնական պաշտօնին, այսինքն կը ծառայէ ստեղծելու նախաքաղաքակրթական մարդու կախարդական դիւթանքը, մաժին:

Բայց դարձնենք այսօրին էջերը, ետ մեր օրերուն: Խմբանկարին կեդրոնը, կարմրած քիթով ու երբեմն՝ կը կայնի արտակարգ տիպար մը - Տիգրան Թոմըս: Մեռած է 1953-ին, բայց յետպատերազմեան հոգեբանութեան մէջ է իր տեղը, էթէ պէտք ըլլայ անպայման տեղ մը դեռ տեղի այս խորապէս ենթակայական քերթողը: Իր գլխաւոր դործը, Անտրք Միլք Վալտ, մահէն մէկ տարի առաջ միայն աւարտած՝ արդէն նոր ժամանակներու օգիտով վարակուած էր: Գրքուած ռատիոյի համար, բեմական առաջին ներկայացման կ'արժանանար 1956-ին, մեծ յաջողութիւն արձանագրելով (\*):

Թոմըս արուեստի ոչ մէկ էքսպրիմի կը հաւատար, հաւանաբար, ու իմաստասիրական հարցեր, ընկերային երեւոյթներ անհամեմատօրէն նուազ կենսանան էին՝ քան իր երկրին հերոսին՝ զինով ու կոյր ձկնորսին մենախօսութիւնը, նստած սրճարանի պատուհանին, մինչ զիւրին դունազեղ, ինքնատիպ բընակիչները, ճոթիկուած, հովուերգական ու զուարճալի՝ իր շուրջ կը հիւսէին, կը պրկէին իրենց կեանքի ցանցը, պատկերներու եւ տիպարներու այնպիսի խակ պտուղի զարնանային թարմու-

\* Թոմըս կայտնի երկրէն է (Անգլիոյ Ուելլսընի նախագր) ուր զետեղած է իր ձկնորսական գիւղը: Իր ժամանակին, իսպիւն ներկայացումը մեծ երջիւնքին էր Թատերական աշխարհին մէջ - յիսուն հոգի ու բեմին վրայ ինը տարրեր տեսարանին մէջ իրականութիւն ու երազ համընթաց զարգացումով...: Չայնթոն Թատերախաղ կոչուած էր զայն Թոմըս հաւանաբար անոր ցուցար որ միայն ամբողջական զգացումով կարծիք է զայն գնահատել:

թեամբ մը, գոյնեբոս ու Հակադրութիւններու պատաստելն վրայ թափելով ճշմարտ, յաւիտենականորէն ճշմարտ մարդոց տագնապններու, տրտում ու անկարելի կեանքերու քաղցր-լեզի Համը, բանաստեղծական պոթիկումի այնպիսի կայծկլտուն, անդիմադրելի Հեղեղով մը՝ որ միտք, զգայարանք ու զգացում հարթած կը մոյրբն դադտադողի, ծիծաղելի բանդազուչանքներու բաւիղներու ուրրտներուն մէջէն, քունէն նոր արթնացող դիւղին նեղիկ ճամբաներէն, իրականութեան ու երացի Հանդիպումին, եղբրականին ու կատակերգականին սահմաններուն, ենթադրատակցութեան ու արթնութեան Հորիզոնին, այսինքն Հոն ուր կը նետուի արուեստի կախարդանքը: Տիրն թոմըս, Ամերիկացի վիպասան թոմըս Վոլֆի նման, շատ կանուխ մեռաւ (39 տարեկանին), առանց կարենալ իր Հեւքին ամբողջ շունչը գործածելու, սակայն կը մնայ Հսկայ բանաստեղծը յետպատերազմեան, այսինքն աւելի վստանք մը իր սերունդին քան օգուտ, ինչպէս էր պարագան էլիթթին:

Կարելի չէ լրիւ Փորձելու սալ այն կենսունակ քաղադրութեան որ Անգլիոյ մշակութային կեանքը կը կոչուի: Ընթերցանութիւնը կերթ է Անգլիոյ մէջ: Օրական երեսուն միլիոն թերթ կը սպասեն... (1): Անշուշտ թերթ կարգալը, մանաւանդ ժողովրդական օրաթերթը, ճաշակի վկայական չէ: Սակայն նոյն ատեն գիրքներու տղապրութիւնն ալ արտակարգ է - 1961-ին, ամսական միլիոն հաշուով երկու հազար անուն գիրք Հըրտտարակուած է; ու անգլիական գիրքը Եւրոպայի ամէնէն ատան է (2): Կըրթութիւնը, մանկապարտէզէն մինչեւ համալսարան բոլորովին ձրի է, ինչպէս եւ առողջապահական բոլոր միջոցները, առկայն երկտասարդութեան հարիւրին եօթը միայն համալսարան կը յանաթէ:

(1) Յր Պրիթիշ Իրէս-Սէնթրի Օֆիս օֆ Խն-ձօրմէլըն - Լոնտոն, 1961.  
 (2) Յր Սթէյնսմըն Երը Պուք, Լոնտոն, 1961.

(86,915 հոգի), Հակառակ որ համալսարանական ուսանողութեան երեք քառորդը պետական կամ այլ նպաստ կը ստանայ (3): Անգլիացիք մտաւորականին զուտ իմացական առաջինութիւններուն մեծ արժէք չեն տար, այլ կը փնտռեն գլխաւորաբար նկարագրային առաջինութիւններ: Ասոր համար է, Հաւանաբար, որ անգլիացի մտաւորականները այնքան համեստ են ու նոյնքան կարող՝ որքան եւրոպական որեւէ մտքի մտք: Ու մանաւանդ՝ նոյնքան գիտակից իրենց մտաւորականի պատասխանատուութիւններուն: Անգլիոյ գլխաւոր գրական ամսաթերթերէն Լանտըն Մէկըզին, իր այս տարուայ Փետրուարի թիւով Հետաքրքրական անէլքի մը Հրատարակած էր: Անգլիոյ 26 ակաճաւոր բանաստեղծներուն հարցարան մը ուղղած էր ուր, ի շարք այլ հարցումներու, Հետեւալին պատասխանը կը պահանջէր - Կը կարծէ՞ք թէ բանաստեղծութիւնը աւելի ազդու պիտի ըլլար, այսինքն աւելի մեծ թուով մարդիկ աւելի խոր կերպով պիտի Հետաքրքրէր՝ եթէ մեր ժամանակներու ընկերային, քաղաքական ու այլ խնդիրներով զբաղէր: Կէսէն աւելի դըրական պատասխան տուած էին: Ու տակաւին բանաստեղծ ըսուածը Հապէս ետակդրոն անձ է...:

Նորութենէ խրտչող, իմացական արկածախնդրութեան անաստ՝ կ թէ աւելի Հազորդ՝ քնազգական մղումներու պահպանողական իմաստութեան, վերացականէ աւելի գործնական ճշմարտութիւններու եւ գեղեցկութիւններու արթնցած, դժուար խանդավառուող, լուրջ՝ բայց լըշուքեան այնպիսի որակով որ կենսական շահերու գերակշռութեան գիտակցութիւնն է միայն, անհատը ծփալով հաւաքական խառնուածքի մակերեսին ու երբեմն կատակելով՝ թէ իր անգլիացիութիւնը շեշտելու եւ թէ ալ իր ինքնութիւնը ու անկախութիւնը բոլորովին չկորսնցնելու ծածուկ դրուստով՝ որ

(3) Նոյն Տեղը:

տակաւ նոյնքան բնագրական բնոյթ կ'առնէ - ա՛յս է անգլիացին արգեօք: Ընդհանրացումները գիւրբին ու վասն-զուտոր դատումներ են: Սակայն եթէ կա՛յ ազգային նկարագիրը ըստուած բան մը, հաւանաբար ատով պէտք է բացատրել Անգլիացիներուն ընթերցասիրութիւնը, երաժշտասիրութիւնը (Լոնտոն աշխարհի երաժշտական կեանքի կեդրոնն է, բայց Անգլիացիք միայն ունկնդրելի կը սիրեն, իրտին վրայ ընկողմանած, վերացած բայց զգոյշ, մանաւանդ քաղաքավար) քննադատութեան, պատմա-

գիտութեան կամ բանասիրութեան մասին հեղինակաւոր գիրք գրելու հաւասարակշռուած մուտքը, իմացական կեանքին կուշա, պատկառելի, Պիկ Պէնի վրայ չափուած դիպքը:

Այս ամբողջը փոխուելու վրայ է, զանազ բայց ապահով կերպով, ինչպէս իրենք կ'ըսեն: Փորձանքն ու բարիքը Եւրոպայէն է որ կու գան: Այսինքն նրան-

(4)

Վ. Օ.

### ՈՒՒԼԻԸՄ ՖՈՒՔՆԸՐ

Պարզ, ժուժկալ եւ ամբոյններէ տեւաբար խուսափող գրագէտը՝ Ուիլիլմ Ֆոլքնըր իր մահկանացուն կնքեց Յուլիս 6-ի օրը, 64 տարեկանին:

Ամերիկեան գրական երկնակամարին ամենէն լուսաշող աստղերէն եղաւ 1949-ի Նոպելեան այս մրցանակաւորը և, Նիւ-Յորքըր Լանդէսին վկայութեամբ՝ «Ամերիկեան գրական կալուածին միակ տիրական իստեարը, միակ անմրցելի»:

Յաջօրդ թիւով պիտի անդրադառնանք այս մեծ գրողի կեանքին ու ստեղծագործութեան:

«Բ.»

Վ. ՀԷՐՑՈՒՆ

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԽԵՂԱԹԻԻՐՈՒՄՆԵՐԸ**

Յ. Թումանյանի Հասարակական գործունեության եւ ուսական օրիանքախոսքի լուրջ ուղղորդումը է դարձրել նամանակահատվածի Հայկական ՍՍԻ. Գիտությունների Ակադեմիայի Մ. Արեղեանի անուան Գրականության Ինստիտուտի Հրատարակած Հայ Գրականությունի մեծագույն երկրորդ հատորը (Երևան, 1954) ուր հատորի խմբագրերից Ա. Ասատրեանը գրում է

«Մեծ բանաստեղծի գրական ու Հասարակական գործունեության մէջ եւ նրա ստեղծագործական կեանքում շատ ակնառու տեղ է գրաւում այն Հարցը, թէ ինչ մեծ ու բախտորոշ նշանակություն ունի ուս ժողովուրդը Հայ ժողովրդի պատմական բախտի Համար, եւ ուս կուլտուրան ու գրականությունը՝ Հայ կուլտուրայի ու գրականության պարզացման Համար»:

Ըստ Հեղինակի, Թումանյանի Համոզմունքն է եղել որ «Հայաստանն ու Հայ ժողովուրդը փրկութեան մի յուսա-

լի յենարան, միայն մի բարեկամական ձեռք ունեն իրենց պարզած՝ ուս ժողովուրդը» (\*): Հեղինակը իրաւունք ունի իր ուղած մեկնաբանութիւնները անելու, ընթերցողները կարող են ընդունել կամ ոչ: Բայց իր վերոյիշեալ մեկնաբանութիւնները հիմնաւորելու համար Պրն. Ասատրեանը, Հակասակ իր Գիտական Ակադեմիայի պատմունքին, Հարկ է նկատել որոշ փաստաթղթերի բնոյթը խեղաթիւրելու: Այսպէս, օրինակ առանց յիշատակելու աղբիւրը, որը Թիֆլիսի «Հորիզոն»ի մէջ 1914 թուին Թումանյանի Հրատարակած մէկ յոդուածն է, որի մէջ «Մեծնայն Հայոց բանաստեղծը» ուսական զէնքի միջոցով Տաճկահայաստանի ազատագրման եւ նրա «ազատ ազգերի» ներդաշնակութեան մէջ տեղ գրաւելու մասին իր Համոզմունքն է արտայայտում, Պրն. Ասատրեանը հետեւեալ մէջբերումն է տնում - տալիս ենք թէ այդ քաղաւածքը եւ թէ ընաչիքը:—

**ՔԱՂՈՒԱԾՔԸ**

«Ռուսաստանն է վնասում հայ ազգի հիմ, արիւնստ խնդիրը, ապառքում է նրա ապագան եւ առաջնորդում նրան զէպի ազգերի եղբայրութիւնը» (\*):

(\*) Հայ Գրականութիւն, Երկրորդ, Կատոր, (Երևան, 1954) էջ 335:

**ԲՆԱԳԻՐԸ**

«Եւ էսպէս, էս երբորդ պատերազմը աւանդական խորհրդաւոր երբորդ գարկն է: Երբորդ գարկն է վնասում խնդիրը: Երբորդ գարկն է հիւսիսի հսկան, Մեծ Ռուսաստանը վնասում է հայ ազգի հիմ, արիւնստ խնդիրը, ապառքում է նրա ապագան ու առաջնորդում նրան զէպի ԱՅԱՏ ազգերի եղբայրութիւնը» (\*\*):

(\*) Ցես, Հայ Գրականութիւն գիրք Երկրորդ (Երևան, 1954) էջ 335:

(\*\*) «Հորիզոն» 1914 թ. Հոկտ. 31, «Բազմա» Թիւ 7 էջ 60:

Ինչպէս տեսնում էք Պրն. Ասատըրեանը մեծ զգուշութեամբ հանել է Թումանեանի գրած «ազատ» բառը, որը ինքնին մի շատ աննշան փոքրիկ բառ է, միմիայն չորս տառերից բաղկացած, բայց որի յապաւումով ամբողջապէս փոխուել են թէ՛ նախադասութեան իմաստը եւ թէ՛ Թումանեանի գաղափարները:

Մենք չենք կարծում որ Պրն. Ասատըրեանը յիշողութեամբ է վերարտադրել Թումանեանի այս հատուածը, քանի որ նա յարգել է նոյնիսկ Թումանեանի կէտադրութիւնը: Նոյնպէս չենք հատում որ պարզ պատահականութեան, զիպուածի արդիւնք է եղածը, քանի որ հեղինակը կրճատել է նոյն պարբերութեան եւ նոյն նախադասութեան առաջին մասերը եւս, որոնք Անդրանիկի, հայ կամաւորների, Ֆէտայիների եւ Տաճկահայաստանի ազատութեան վերաբերող յիշատակութիւններ են: Ինչպէս երևում է փաստաթղթերից որոշ բառերի, յատկանշական բառերի յապաւումները անհրաժեշտութիւններ են Ասատրեանի համար «յանուն պատմութեան օրէնքների անսխալականութեան»:

Բայց անցնենք:

1917 թուի Մարտ 7-ին բանաստեղծ Թումանեանը իր «Հնչյունի Ազատութիւնը» յոդուածում սղջունում է Ռուսաստանի Փետրուարեան Յեղափոխութիւնը «...Դուրս եկաւ որ ռուսական փեշը (վառարանը) որին նա կպած էր էնքա՛ն տարի, Պրոմէթէոսի ժայռն է եղել և էնքան տարի ինքն իր մէջ անելով ու մըխալով նա (ռուս ժողովուրդը, Վ. Հ.) հսկայական ուժ է հաւաքել, միանգամից վեր կենալու եւ հսկայական զարկերով փրկելու իր երկիրը»: Ապա Թումանեանը կոչ է անում ստար հանդիսանալ Փետրուարեան Յեղափոխութեան եւ նրա առաջադրած ծրագիրներին: Նամանականդ որ հայ ժողովուրդը մեծ յոյսեր էր կապել այդ յեղափոխութեան հետ, որի ղեկավար զէմքերից Միլիկովը Փետրուար 3-ին, յայտարարել էր.

«Չնայած անթիւ ու անեղ աղիւսիւններին, աղէտներին, հայ ժողովուրդի սրտում կենդանի է մնացել իր փրկութեան պայծառ հաւատը... Պէտք է մեծ օգնութեան գանձ հայութեան, այն հայութեան որ աներբ ու աներկբայ պարգիլ է մեզ Ռուսաստանին իր սիրտը, իր հաւատն ու յոյսը: Զպիտի խաբուեն նրա այդ յոյսերը եւ հաւատը, մեծ պարտաւոր ենք սրտանց վերաբերելու դէպի տանջող հայութիւնը: Պէտք է հաւատանք եւ կամենանք, որ ազատագրութիւնը կարգապէս հայ ժողովուրդը, ստանալով այն ինչ էր իր ազգային բաղձանքը, այսինքն իր ազգային ատենոմիան (ինքնավարութիւնը)» (8):

Թումանեանի փետրուարեան «Բուրժուական Յեղափոխութեան» իբրեւ պաշտպան գալը եւս անցանկալի լինելով այդ յեղափոխութիւնը խորտակող Հոկտեմբերի ժառանգորդներին, խորհրդահայ քննադատները այդ եւս յարմար են նկատել ժողովրդեան զամբիւղը նետելու:

1918-ի Մայիս 28-ին, Սարգսարաղներէի, Բաշ-Աբարաններէ եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերի եւ արեան ու որբերի ճանձեւ քառսից յարութիւն առաւ Հայաստանը իբրեւ անկախ պետութիւն: Թումանեանը ողջունում է այդ անկախութիւնը իբրեւ հայութեան դարաւոր երկունքի եւ բաղձանքի մարմնացում: 1918-ին, Երեւան պտնուող իր մի բարեկամին նա գրում է այդ առթիւ.

«Եւ քող ձեր երիտասարդ կեանքի վրայ բացուի այն երջանիկ արշալոյսը, որ մեր ճախրդներին երիտասարդութիւնը երազեց իր փոքրիկալի ու մութ գիշերին»:

1919-ին իր 50-ամեայ յոբելեանի առթիւ նա գրում է այդ ազատ Հայաստանի մասին, սակայն իր դուստրը այդ գրութիւնն էլ է կրճատել.

(8) Տես Վ. Տերեան, Երկերի Ժողովածու, Հատոր Գ, (Երեւան, 1925 էջ 242):

ԲՆԱԳԻՐԸ

ԿՐՃԱՏՈՒԱԾԸ

«Մինչեւ այժմ մեր գրականութիւնը հարագատ հող չի ունեցել իր ստի տակ, մեծ մասով գաղութային գրականութիւն է եղել: Բանաստեղծի սուր ետրագատ ու իրական հողի վրայ պիտի լինի, երանից յետոյ միայն կարող է բարձրանալ, քէկուզ գլուխը մինչեւ երկինք հասնի: *Հայոց ապագայ գեղեցիկ գրականութեան զարգացման գրաւակահը ազատ Հայաստանն է, ազատ, հարազատ հողը, ժողովուրդը է՞ դ ազատ Հայաստանն էլ կտայ, մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն...*»:

(Տես «Պատանի» Գրական-Գեղարուեստական Կարգադրութիւն, Թի-լիս, 1919 թ.):

1919 թուի Փետրուար 20-ին, Կովկասում, հակառակ տիրող թո՛ւ ու բո՛ւ չին տեղի է ունենում «Մեծնայն Հայոց բանաստեղծ»ի ծննդեան 50-ամեակի տօնակատարութիւնը: Այդ առթիւ, ի պատասխան Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան շնորհատրական հեռագրի, Յովհ. Քումանեանը 1919 Մարտ 8 թուակիր հեռագրով պատասխանում է Թի-լիսից.

«Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան նախագահութեան սիրանորդ Ա. Մատիսեանին».

«Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան, անդրանիկ գրական ոգոյնն ու բարեմադրութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուք:

«Էս բոլոր զգացումները ես բացատրում եմ ոչ քէ իմ գրական գործերի արժեքով, այլ մեր ազգային ոգու անպարտելի հզօրութեամբ».

«Մեր ազգային անպարտելի ոգուն չեն կարող յագթել ո՛չ հիւանդութիւն, ո՛չ հալածանք, ո՛չ տառապանք: Դա միշտ մնում է կենդանի եւ քեւտարուած մեծութեան եւ գեղեցկութեան տննչրով:

«Էս անգամ էլ, առապելական փեմիօք նման պիտի յառնի օջախների մա-

Բանաստեղծի սուր հարագատ ու իրական հողի վրայ պիտի լինի, դրանից յետոյ միայն կարող է բարձրանալ, քէկուզ գլուխը երկինք հասնի:

(Տես՝ Ն. Քումանեան Յ. Քումանեանի մասին 1919 թ.):

Խորհրդից, նոր կեանքի ու աւելի տաշանդաւոր բանաստեղծների գուարթ երգերով»:

«Ես միայն մէկ ազօք ունեմ նրա համար, որ հայ ժողովուրդը կենդանի մնայ ֆիզիքալէ մնացածը ձեռք կը բերի ինքը, ինքը որ կանգնած է աշխարհների մէջտեղը, Հայաստանի երկնահաս բարձրավանդակին, երկինքին էնքան մօտիկ, իր խնուս օրակարը դէմ տուած աշխարհի բոլոր վաթորիկներին՝ պայծառ հայուս է դէպի իր մեծ ու լուսաւոր ապագան:

«Իմ հոգին լիքն է նրա հզօրութեան շնչով եւ նրա ապագայի անսահման հաւատով:

«Եւ քեզ է՞ մեծ հոգին ու է՞ անսասան հաւատը, զօրավիգ լինեն նրա կառավարութեանը, քրպէսգի կարողանայ ծանր նգնածամից հանի ժողովրդին ու տանի յաղթանակներից ամենամեծն ու ամենագեղեցիկը այն է եզրայրական սիրով տիրի հարեւան ժողովրդների սրբութիւն, Հայաստանի երջանկութեան համար»:

Յ. Քումանեան

Այժմ զննեց թէ ի՞նչ է եղել Քումանեանի գիրքը Հայաստանի Հանրապետութեան հանդէպ՝ ըստ համայնավար

պատմագրութեան.

«1918 թուականին, երբ ինպիսիա- լիստական գաւթիչներին յաջողում է Անդրկովկասը ժամանակաւորապէս ան- չատել Ռուսաստանից իրենց գործակալ մեծշնչիկներին, դաշնակների ու մուսա- վաքականների հետ միասին ստեղծել ազգամիջեան արիւնայեղ ընդհարում- ներ, Թումանեանն իր գայրոյթն է ար- տայայտում այդ արիւնոտ ֆաղափա- նութեան հանդէպ, անդրկովկասեան ժո- դովրդների փրկութիւնը կապելով նա- րաստեղծ ապիտակեան իշխանութեան ա- գատագրական միսիայի հետ» (11):

«Եստեղով անգլո-ամերիկեան իմպե- րիալիստների գործակալ Անդրկովկաս- եան հանրապետութիւնների մասին, Յովհ. Թումանեանն ընդգծում է նրանց հակաժողովրդական բնոյթը...» (12):

Այս յայտարարութիւնները հաս- տատող Թումանեանի կողմից գրաւոր փաստերի գոյութիւն չունենալը, Պրն. Ղազարեանը դեմէ՞ք թէ ինչո՞վ է փոր- ձում փոխարինել - բանաստեղծի Հա- յատանի Հանրապետութեան ուղղած վերոյիշեալ հեռագրի բնագիրը եւ բը- նոյթը փոխելով - ...որով պատմական մի փաստաթուղթի շտեմտած զեղծարար- ութեան է դիմում նա, վերցնելով Հա- յատանի Հանրապետութեան կառավա- րութեան ուղղած Թումանեանի այդ հե- ոագրի պարունակութիւնը («Մշակ» թերթ, թիւ 54, Մարտ 11, 1919) հե- տեւեալ աղետաման, ձեւափոխութեան է ենթարկում այն. վերածելով նախ եւ ա- ուջ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ուղղուած այդ պատ- զամբ իբր թէ թերթի մէջ գրուած մի յօդուածի... նայն կառավարութեան դէմ ուղղուած: Ընթերցողը ինք կարող է համեմատել այդ երկու գրութիւնները.

«Հակադրուելով շովինիստական աղ-

մրկարարներին, Թումանեանը դրսեւ- ըում է իր ժողովրդի ազգային ոգու ան- պարտելի ուժը, ուրուագծում նրա տ- պագայի պայծառ հեռանկարները, տես- նում այն պահը, երբ յօդս կը ցնդեն քա- լոր շովինիստների ջանքերը, երբ ֆենիֆ- սի մամն կը յառնի մոխիրների միջից: «Հայ ժողովրդի հզօր ոգին չեն կարող ընկնել - ասում էր նա - ո՛չ սով, ո՛չ հիւանդութիւն, ո՛չ հալածանք, ո՛չ տա- րապակ: Միշտ մնում է կենդանի եւ թեւաւորուած մեծութեան ու գեղեցկու- թեան տենչերով... Իր խռուս ցակատը դէմ տուած աշխարհի բոլոր փոքարիկ- ներին՝ պայծառ նայում է դէպի մեծ ու լուսաւոր ապագան:

«Իմ հոգին լիքն է նրա հոգու հզօ- րութեան շնչով եւ նրա մեծ ապագայի անսասան հաւատով» (13):

Նման գիտակից զեղծարարութիւն- ներ եւ անպարարութիւններ ներշնչի չեն, ըստ մեր ունեցած գրութուական բա- րոյական ըմբռնումների», ոչ Յովհ. Ղազարեանին եւ ոչ էլ վերջինիս պատ- կանած Սովետ. Հայաստանի Գիտական Ակադեմիային:

Բայց շարունակենք: 1919 թուին, Ղարաբաղի մէջ հայե- րի դէմ տեղի ունեցած բռնութիւնների եւ ջարդերի դէմ բողոքելու համար հըս- կայ մի միջինգ զումարուեց Թիֆլիսի մէջ, մօտ 10,000 հայերի մասնակցու- թեամբ: Հաւաքոյթին նախագահեց եւ խօսեց Յովհաննէս Թումանեանը, ջը- ւէարկելով մի բանաձեւ, ներկաների դայրոյթը յայտնելով անդէն կանանց եւ երեխաների նկատմամբ տեղի ունեցող վայրագութեանց հեղինակների դէմ եւ պահանջելով որ 300,000 հայութիւն ու- նեցող Ղարաբաղը արուի Հայաստանին, համաձայն հարեւրին 90 տոկոս կազմող բնակչութեան անդրդրուելի կամքին (14):

Թումանեանի այս ելույթի մասին եւս

(11) Յովհ. Ղազարեան, Սովետահայ Գրա- կանութեան Պատմութիւն հատոր Ա., (Երևան, 1961) էջ 16:

(12) Յովհ. Ղազարեան, Հայ Պօէզիան, (Ե- րևան 1958) էջ 20-21:

(13) Նոյն տեղը, էջ 21:

(14) Տես, «Վերածնունդ» շաբաթաթերթ, Գ. տարի (1919 Փարիզ) Թիւ 20, Օգոստոս 7:

լուս են խորհրդահայ պատմաբանները, այս մէկը զոնէ Հասկնայի պատճառներով, լուս է նամանաւանդ Մ. Աղայեանը Հայ եւ Աղբրեզմակայն ժողովրդների գարաւոր բարեկամութեան հեղինակը, նորից Հասկանայի պատճառներով:

Նրանք նոյնպէս լուս են Հայաստանի Անկախութեան փոխառութեան առթիւ Յոգնատոս 1, 1920 թիֆլիսում լոյս տեսած միօրեայ թերթի մէջ բազմաթիւ Հայ եւ օտար նշանաւոր գրողների եւ գործիչների կարգին (Գ. Դեմիրճեան, Ստ. Մալխասեան, Ս. Լիւիցեան, Ռ. Ուան-Ալլատ, Էւայն) Յովհաննէս Թումանեանի գրած յօդուածի մասին եւս, որի մէջ նա ամենայնուայն էլ կարծիքն է յայտնում Հայաստանի Հանրապետութեան եւ Անկախութեան գաղափարների մասին. նա գրում է.

«Մեր սերունդը էն սերունդն էր որ երկէ ազատ Հայաստան էր երազում:

Ազատ Հայաստան էին երազում, առւսանայը, տանկանայը, պարսկահայը եւ բոլոր հետաւոր գաղափարները:

«Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խակերը, առանց սեռի եւ հասակի խտրութեան:

Ի՞նչ ասես, որ չէր տայ գրեթէ ամէն մի հայ, միայն թէ աչքով տեսնէր

ազատ Հայաստանը»:

Ու յանկարծ...

«Արդէն իրականութիւն է երեկուայ մեր երազը, Ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչուած ինքնուրոյն հանրապետութիւն, նա իր եռազայն դրօշակով կանգնած է միւս պետութիւնների շարքում» (15):

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, 1921 թուի Դեկտ. 18-ին, Թումանեանը թիֆլիսից Լենինին եւ Հայաստանի Յեղկոմին նոյնիմաստ երկու նամակներ է ուղարկում: Թումանեանի կենսագիրները խորհրդային Հայաստանում (ղլրանց մէջ պատմաբան Նաեւ Թումանեանի գուստը Նուարդ Թումանեանը) կեղծեւ, շարափոխել եւ խարդախել են այդ նամակի թէ բովանդակութիւնը եւ թէ նպատակը:

Նամակի բնագիրը եւ լուսանկարը բարեբախտաբար փրկուել են պատմութեան համար ոտայինեան մողոքի զոհեր Եղիշէ Չարեհեցի, Ակսել Բակունցի եւ Եղիա Չուբարի խմբագրութեամբ երևանում 1932 թուականին հրատարակուած Հոկտեմբեր-նոյեմբեր Տարեգրքի մէջ (էջ 128-131) որ այժմ շատ հազուադէպ է. ահա այդ նամակը.

ԲՆԱԳԻՐԸ

«Դաշնակից պետութիւնների ազան ու յարիտեան յանցաւոր քաղաքականութիւնը, հայ ղեկավար շրջանների անկախութիւնն ու քաղաքական անհետատեւութիւնը եւ հայ բրբակամ վայրենի ու անզուպ քշմամութիւնը Հայաստանը հասցրին օրհասականի դուրը:

Ամենից լիւսած ու յուսահատուած հայ ժողովուրդը իր հայեացքը դարձրեց դարձեալ դէպի Ռուսաստանը:

Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախուած, ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից՝ այլեւ ապահովել ՆՐԱ ԱՆԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՂԵՔԸ, խաղաղ վերջացնել հայկական արիւնտ ինդիրը, հայ ժողովրդին հաշ-

ԽԵՂԱԹԻԻՐՈՒԱԾԸ

«Ամենից լիւսած ու յուսահատուած հայ ժողովուրդը իր հայեացքը դարձրեց դարձեալ դէպի Ռուսաստանը: Եւ եկաւ նա, նոր Ռուսաստանը:

Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախուած, ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից այլեւ ապահովել նրա անկախ քաղաքական կեանքը խաղաղ վերջացնել հայկական արիւնտ

(15) Տես Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւն» Ա. տիպ. էջ 379 Միօրեայ Թերթի բնագիր նմոյք գտնուած է Համազգայինի գրական արխիւում:



տեցնել մահմեդական հարեւանների հետ եւ արդար աշխատանքի նախապահով առաջնորդել դէպի նոր կեանք:

Փոքր ժողովուրդները, յիրաւի զըրկըւած բանուորներ են ագահ ու անխիղճ իմպերիալիստական հզօր պետութիւնների նախապահներին:

Նոր Ռուսաստանը, որ գալիս է ներանց հանի էդ ստրկական վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկութեան պատմութեան մէջ եւ երանի, վերջապէս, ստեղծուէր մի ուժ որին հաւատար ամէն մի ժողովուրդ ու մարդ:

Խորապէս ցանկանում եմ, որ Ռուսաստանը շուտով ազատուի անցողակի շրջանի դժուարութիւններից ու դեֆեկտներից եւ ժողովուրդների նրա հետ կապուեն ոչ թէ վախով, այլ սիրով:

Էս գրացմունքում էլ՝ Հայաստան մուտք գործելու հէնց առաջին ցրից՝ առաջին հերթին՝ Հայաստանի Ռեւոլյուցիոնար Կոմիտէին եւ ուզում եմ հրաւիրել երկու կարեւոր հանգամանքի վրայ:

Առաջինը սա է.

*Անցեալներում, հայ-թուրքական դժբախտ ընդհարումների ժամանակ, Դաշնակցութիւնն է գլխաւոր դերը խաղացել, վերջերս էլ նա է եղել կառավարական կոսակցութիւնը: Էդ պատճառով էլ հայ ժողովրդի լայն շրջանները յարած են Դաշնակցութեանը:*

Յեզաշրջումից յետոյ, շատ մարդիկ, որ անձնական հաշիւներ ունեն իրար դէմ, էդ հանգամանքից աատ միւք կարող են առնել դաւեր լարելու. եւ իրենց հաշիւները մտքորտ անձնական բշտամիների հետ:

Հայաստանի Ռեւոլյուցիոնար Կոմիտէի պարզ գիտեցողութիւնը, որ նրանք մայնքան հեշտ դաշնակցական են եղել երէկ, ինչքան հեշտ կոմունիստ են դարձել էսօր՝ լուրջ նըշանակութիւն չպիտի տայ նրանց դաշնակցական լինելու հանգամանքին եւ ընթացք չպիտի տայ էդ դաւերին, որ կարող են ծաւալուել եւ դառնալ համատարած չարիք:

*Երկրորդը.*

*Յեզաշրջումի հետեւանում երկիւղ է*

*յունգիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական հարեւանների հետ եւ արդար աշխատանքի նախապահով առաջնորդել դէպի նոր կեանք:*

Փոքր ժողովուրդները, յիրաւի զըրկըւած բանուորներ են ագահ եւ անխիղճ իմպերիալիստական հզօր պետութիւնների նախապահի վրայ:

Նոր Ռուսաստանը, որ գալիս է ներանց հանի՝ էդ վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկութեան պատմութեան մէջ:



*Ինչպէս տեսնում էք հիմնովին մասնատել են թումանեանի նամակը:*

*Նամակը այստեղ վերջացնելով... առանց նոյնիսկ կախման կէտեր դնելու յայտատուած մասերի համար, խորհրդահայ պատմագիրները հարկ են տեսել նոյն նամակի վրայ թումանեանի լեզուին հետեւելով ԱԻԵԼԱՅՆԵԼ Հետեւեալ պարբերութիւնը որը ոչ լուսանկարուած նամակի եւ ոչ էլ տպուած բնագրի մէջ կայ.*

*«Հիմի ամէն մի մարդ հանգիստ կ'ենի իր տանը և կ'իմանայ, որ էլ՝ կոտորածի վտանգ չկայ եւ մի լայն կալտարական կեանքի կը սկսուի»: (Տես նըւարդ թումանեան Յովհաննէս Թումանեան, Երեւան, 1939 թ. էջ 150):*

*Նոյն այս գեղծուած նամակը առանց վերջին անկցուած կարկտանին, նոյնպէս լոյս են տեսել Յովհ. Թումանեանի Հայաստան հրատարակուած Երկերի ժողովածուի հատոր Ե, (1945 Երեւան) էջ 452-453 եւ Հայաստանի Ակադեմիայի հրատարակած Առկնտեայ Գրականութեան Տարեգրութեան (1957, Երեւան) էջ 41:*

*Միայն թէ այժմ նպատակայարմար են դիտել աւելացնելու առաջին պարբերութիւնը.*

*«Դաշնակից պետութիւնների ազաճ ու յաւիտեան յանդատը քաղաքականութիւնը, հայ զեկավար շրջանների անկա-*

տարածուիլ հայ մտաւորականութեան վրայ, որի մի մասը նախօրոյ կառավարութեան օրով ծառայութեան մէջ էր: Նոր դրութեան անբարոյութեան հանդէպ տարածուած երկիրը կարող է քայքայել ու ցրել մեր առանց էն էլ փոքր մը տաւորականութիւնը եւ առաջ քերել անցանկալի հետեւանքներ:

Հայաստանի Ռեւիւզը պէտք է պարզի մթնոլորտը եւ մարդկանց հանի էդ շուար ու շփոթ դրութիւնը՝ ցանկացողներին հրաւիրելով ազատ ծառայելու իրենց ժողովրդին:

Ամենքի սրտից ասած կը լինեմ, եթէ ասեմ թէ՛ սպասում ենք էդ կոչին:

Նոր, ազատ Ռուսաստանն էլ որ գալիս է հայտնեցնի հային ու թարթին, էտեան մեծ ու փրկարար մի գործ անելու, անշուշտ ինքն էլ հաշտ աչքով կը նայի հայ մտաւորականութեանը, կ'ընդունի նրա մեծ կարեւորութիւնը եւ ուշադրութիւն կը դարձնի հայ ժողովրդի բանաստեղծի հաշտարար միջամտութեան վրայ»:



*բողոքիւնն ու քաղաքական անհեռատեսութիւնը եւ Հայ-թրքական վայրենի ու անզուսպ թշնամութիւնը Հայաստանը հասցրին օրհասականի դուռը»:*

*Ինչպէս յայտնի է թէ Քումանեանի յորդորները եւ թէ Լըզրան-Դրո-Տէր-տէրեան համաձայնագիրը, որով համայնավարները խոտանուած էին հայածանցներ եւ բռնութիւններ շատեղծել Հայաստանում, ի դերեւ են անցնում եւ ապարդիւն համարում: Դասակարգային պայքարի սկզբունքներով արբեցած եւ քաղաքացիական կռիւը կամ ժաջրադրածումները անհրաժեշտ համարող որոշ Հայ համայնավար ղեկավարներ, իրենց բռնութիւններով եւ մեծ սխալներով պատճառ հանդիսացան Փետրուարեան ժողովրդական տարերային ապստամբութեան օրը վերջ տուեց խորհրդային իշ-*

*խանութեան: Նրանց օգնութեան հասաւ 11-րդ կարմիր բանակը, սկսուեց քաղաքացիական կռիւ որը տեւեց երեք ամիս: Հայաստանի Փրկութեան կոմիտէի կոչերը Լենինին, Օրջանիկիձէին վերջ տալու արիւնքամ Հայ ժողովրդին պարտադրուած այս նոր պատերազմին եւ խաղաղ կերպով համաձայնելու, մնացին անլսելի: 1921 թուի Մարտ 19-ին Քիֆ-լիսից Երեւան ժամանեց Յովհաննէս Թումանեան որ եկել էր «մի խումբ Հայ մտաւորականներին» կողմից հաշտեցնելու ապստամբներին եւ խորհրդային իշխանութեանց: Այդ օրերին իր տղաներից Համլիկ Թումանեանը եւս ապստամբներին հետ էր Հայաստանի Փրկութեան կոմիտէի գլխաւորապէս: Հինգ օր շարունակ Յովհաննէս Քալաքոնուս ուղեկցութեամբ պետական հաստատութիւնները այցելելով, ժողովրդի հետ շփման մէջ մտնելով Քումանեան 1921 թուի Մարտ 24-ին, հետեւեալ հետագիրն է յղում համայնավար լիազօր Օրջանիկիձէին.*

*«Շարժումը սկսուել է գիւղացիութեան մէջ, զանազան շրջաններում, տարածուել մինչեւ Երեւան եւ իր ետեւից բաշել է մտաւորականութիւնը: Ստեղծուել է հետեւեալ դրութիւնը. զենքը ձեռքերին միմիանց դէմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանուորներն ու աշխատաւոր գիւղացիները, միւս կողմից կոմունիստների զինուած խմբերը: Մեզ մօտ Քիֆլիսում կազմուած համոզումը, Հայաստանի դէպքերի մասին չի համապատասխանում իրականութեան:*

*«Միազմանակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, որ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակն աւելի անմիտ կռիւ չէ վարել:*

*«Այդ պատճառով զերմօրէն իրենցում եմ Ձեր հեղինակաւոր միջամտութիւնը, որպէսզի շուտափայտ կերպով վերջ տրուի ոչ ոքի համար պէտք չեղած այս արիւնահեղութեան: Անհրաժեշտ եմ համարում աւելացնել, որ յեղաշրջումից յետոյ ձերքակալուած կոմունիստներից*

և ոչ մի ռազմագերի այստեղ գնդակահարուած չէ:

«Նման հազարդարուօրին ամուսնում եմ եւ ռազմականատու գտնուող ընկեր կոմունիստներին: Եթէ պահանջուեմ լըրաքացոյիչ տեղիկութիւններ խնդրում եմ կանչել ինձ ռապիոյի մօտ»:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Դժբախտարար Թումանեանի հաշտարար այս քայլը միում է աւանց արդիւնքի, շարժանանալով նոյնիսկ պատասխանի: Բոլշևիկները այդ կեցուածքը աւելի ծանրակշիռ հանգամանք է ստանում այժմ երբ խորհրդահայ պատմագրութիւնը երեւան է հանում մի մանրամասնութիւն որը անցեալում ժխտել էին քանկոս - այն որ Թումանեանը Համայնապար լիազոր Սըջանիկիճէի կողմից եւ պաշտօնական հանգամանքով էր Հայաստան եկել (16): Որով, Թումանեանի հաշտարար առաքելութեան ձախողութիւնը խորհրդային Հայաստանի պատմագիրները վերագրում են Հայաստանի Փրկութեան Կոմիտէին՝ իբր թէ «Ս. Վրացեանը Յովհաննէս Թումանեանին տնային բանտարկութեան է ենթարկում եւ արգելում շփուել ժողովրդի հետ» (17):

Մենք չենք հաւատում այս յայտարարութեան եւ դրա պատմական վաւերականութիւնը ստիպուած ենք ամբողջովին կասկածի աւարկայ դարձնելու, որովհետեւ եթէ նման մի քայլ աւանդին էր Հայաստանի Փրկութեան Կոմիտէին ինչ պատճառ ունէր խորհրդային պատմագրութիւնը այդ դէպքի մասին լուսութիւն պահելու ամբողջ քառասուն տարիներ: Ինչո՞ւ ոչ բանաստեղծը եւ ոչ էլ բանաստեղծի երեք զաւակները (որոնք Երեւան էին գտնուում) այդ դէպքի մասին չեն անդրադարձել - դրան չի

անդրադարձել նոյնիսկ Նուարդ Թումանեանը (էջ 152): Յետոյ եթէ Թումանեանի հաշտարար առաքելութեան, համայնապարների հետ հայ արիւնքամ ժողովրդի մշած պայքարը խաղաղ կերպով լուծելուն դէմ լինէր Հայաստանի Փրկութեան Կոմիտէին ինչո՞ւ պիտի թոյլ տար եւ ընդունէր Թումանեանին Երեւանում... Երան բանտարկելու համար...

Եւ նամանաւանդ ինչպէ՞ս կարող ենք հաշտուել այն հակասութեան հետ թէ «Սերգեօ Օրջնիկիճէի ցանձնարարութեամբ թիֆլիսից Հայաստան է գալիս հայ մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, որը աշխատաւարների մէջ ըզգալի աշխատանք է տանում դաջնակցական աւանդուրան լիկվիդացեալու համար» (18), երբ նոյն էջի վրայ նոյն հեղինակը գրում է թէ նա «տնային բանտարկութեան էր ենթարկուել եւ արգելուած էր մրամ շփուել ժողովրդի հետ»:

Այո, Թումանեանը ունեցել է ևս սակամ վարձագիծ (չա յայտ է գալիս իր ուսուական ցարիզի, փհարուարեան Խուսափանի եւ Եր Խուսափանի հանդէպ որդեգրած դիրքից) բայց Թումանեանը երբէք չի հաւատացել համայնապարութեան եւ չի ունեցել համայնապար վարքագիծ: Չի ունեցել, որովհետեւ նրան խորթ էին զառակարգային մի հայութեան, շերտաւորուած եւ քաժանձունքների ենթարկուած մի հայութեան գաղափարը: Թէ՛ իր զործով եւ թէ՛ իր վարքագիծով՝ նա միշտ էլ հանդէս է եկել իբրեւ Ամենայն Հայոց Բանաստեղծ: Նա դէմ չէ եղել Հայաստանի Հանրապետութեան, նա դէմ չէ եղել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ ոչ էլ ասել է Դաշնակցութիւնը: Թումանեան ինքը լուսագոյն կերպով է նկարագրել իր վերաբերմունքը համայնապարութեան հանդէպ 1921 թուի Մարտին, երբ ուսուական բանակը գրաւում է թիֆլիսը, երբ Վրաստանը խորհրդայնացում է: Համար

(16) «Կոմունիստ» Յերթ (ռուսերէն) Յուլիս 13, 1957:

(17) Տես Մ. Աղայան, Հայ եւ Արքեպիսկոպոս Ժողովուրդների Դարասր Բարեկամութեանը (Երեւան, 1961) էջ 279:

(18) Նոյն տես էջ 279:

զային թամատան մի պաշտօնական հիւրասիրութեան ժամանակ իբրև սեղանապետ՝ հետեւեալ առակով է ներկայացրելում համայնավարներին, ըստ հին բուլղարի քննադատ Փոլոս Մակիդցեանի:

«Լինում է չի լինում մի թաղաւոր: Ետտ վատն է լինում: Ժողովուրդն սկըսում է աղօթել, որ Աստուած դրա հոգին առնի: Թաղաւորը վեր է ընկնում մեռնում: Թախտի վրայ սրա ժառանգն է նստում հօրից առաւել չտր ու ղաժան: Ժողովուրդը դարձեալ սկսում է աղօթել, որ Աստուած սրանից էլ ազատի: Աս էլ է վեր ընկնում ու մեռնում: Գահ է բարձրանում սրա ժառանգը եւ չարութեամբ ու խտուրթեամբ ղերազանցում է հօրը, էլ ինչ մնաց թէ պապին:

«Ժողովուրդն այտեղ խելքի է գալիս եւ աղօթում, որ Աստուած սրան երկար կեանք տայ, խորհելով որ սրանից յետոյ եկողը սրանից «բէշբէթար» (վատթար) պիտի լինի (19):»

Մենք ուրախ ենք որ ներկայ Հայաստանի մէջ հազարաւոր հասորներով հայ հեղինակների զործերն են տպագրւում: Մենք ուրախ ենք այնտեղ լոյս տեսնող տասնեակ եւ հարիւրաւոր դրական ուսումնասիրութիւնների համար: Իսկ մենք մերժում ենք ինքնազային Հայաստանի պատմագիրների եւ կենսագիրների կատարած զեղծարարութիւնները, աղճատումները, վերագրումները: Մերժում ենք ոչ թէ որովհետեւ «հակահայաստանեան» ենք, «հայրենասիրական զգացումներից դատարկուած հոգիներ ենք» այլ որովհետեւ հաւատում ենք հայ գրականութեան անխաթար մնալուն: Ինչ ենք զեղծարարութեանց, լինի դա համայնավար Չարենցի, Տէրեանի, դաշնակցական Սիմոնթոյի, Վարուժանի

կամ Ամենայն Հայոց բանաստեղծի զործերի մէջ:

Համայնավարները ազատ են իրենց մարքսիստական մեկնարանութեան ենթարկելու որեւէ պործ - բայց իրաւունք չունեն յանուն այդ մեկնարանութեան շարափոխել փաստաթղթեր, պատմական ղէպքեր: Մենք միայն ցաւ ենք զգում որ առանց հրատարակելու թումանեանի հրատարակագրական ամբողջական վաստակը, առանց հրատարակելու թումանեանի հասարակական բնոյթ կրող բնութեան նամակները, խորհրդահայ պատմագրութիւնը, Հայաստանի Գիտական Ակադեմիան խեղաթիւրել եւ զեղծել են նրա ցարդ հրատարակումների բնոյթն ու պարունակութիւնը, ոչ միայն կրճատումներով այլ յաւելումներով:

Խորհրդային պատմագրութիւնը խելաթիւրելով, չարափոխելով փաստաթղթերի եւ ղէպքերի լիզուն եւ բնոյթը վնասում է նախ եւ առաջ իր քարոզած գլխական մարքսիզմի հիմք կազմող պատմութեան, վնասում է հայ գրականութեան գլխական ուսումնասիրութեան, եւ նամանաւանդ կասկածելի է դարձնում ինքնազային Հայաստանի գրական քննադատների եւ արդի պատմութեամբ գրողներին թէ պարկեշտութիւնը եւ թէ վաստակը:

Վ. Հ

ՎՐԻՊԱԿ

Բազինի 7-րդ թիւի Վ. Հերնանի ա. յօդուածին մէջ Գրուգ Արիգը պիտի ըլլայ Գրուգներեզ, իսկ խաբարին մէջ «պատմագիրներու»՝ պիտի ըլլայ պատմագիրները:

(19) «Նոր Ուրիս Ծանօտ», Ելի. 2-3, 1929 թ. էջ 200, (Երեւան):

**ՉԱԻԷՆ ԽՏՇԵԱՆ**

**ՍՈՎԻԵՏԱՀԱՅ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Քանի որ դարձ, ջիղի, նիւթի, արագութեան եւ անսպասելի գարն է, ուր մարդիկ կը մերկանան իրենց մարմիններէն եւ հողիներէն. մարդ եւ մեքենայ կը ձուլուին, եւ իրենց վերջին արկածախնդրութիւնը կը մնայ նոյնիսկ գուրս դալ այն հողէն որ ծնունդ է տըւած իրենց:

Այս բոլորին կողքին, եւ այս բոլորը հակասող՝ կայ երեւոյթ մը, որ երբեք չէ եղած այնքան զօրուոր, որքան քանակորդ գարուն: Գեղարուեստն է այդ, որուն մարդիկ կաււած կը մնան: Արդեօք մարդկային հասարակութիւնն է որ մեքենային յոգնութիւնը կ'ուզէ փառատել արուեստի խաղաղութեան մէջ:

Այս երեւոյթը շատ աւելի ցայտուն կը դառնայ, երբ փոխադրուինք մեզ Ժամանակներու գերազանցապէս նիւթուպաշտ երկիրներէն ներս, ինչ որ սովորական երկիրներն են, ուր արուեստագէտներու թիւը կը հասնի բարձրագոյն աստիճանի մը: Մեզ հետաքրքրողը պէտք է ըլլայ մեր հայրենիքը, որով անցնինք իր սահմաններէն ներս: Հայ հանճարը, իր փոքր հողին վրայ տուաւ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւող միջազգային մեծ դէմքեր:

Գիտական աշխարհի մէջ տուաւ աստղագէտ Համբարձումեան մը: Երբ Փարիզի մամուլը կը խօսի հրթիռներու նոր տեսութեան մը մասին, կ'ըսէ յաճախ. «Այս անգամ Վիլքորը Համբարձումեանը չէ որ կը խօսի»:

Տուաւ Ալիխանեան եղբայրները ճապարակային էներժիք գիտութեան մէջ: Միկոյեան մը՝ տնտեսագիտութեան մէջ, երաժշտութեան մէջ՝ Արամ Պաշտուրեան մը: Բայց երբ կարգը կու գայ դեղարուեստին, շորս հարիւրէ աւելի նկարիչներ եւ քանդակագործներ կը մնան թաղուած իրենց սահմաններէն ներս. ոչ մէկուն շունչը կը հասնի միջազգային ամպիրին, ուր սակայն հասած են արտասահմանի արեւակեցիներ: Ի՞նչ է գաղտնիքը որ տասնեակ տարիներ վերջին եւ մուրճ շարժող սերունդի մը ազգակը կը խեղդուի կողորդներու մէջ: չէ՞ որ նոյն սերունդի գաւակներն են անոնք ալ: չէ՞ որ մշակոյթը առաւելապէս կարելի է մշակել հայրենական հողի վերայ: Իրենց տնտեսական պայմանները, որոնք յաճախ խեղդած են արուեստը արուեստագէտին մէջ: Ո՛չ: Անոնք առաւելաբար ենթակայ են խնամքի եւ գուրգուրանքի:

Անենք նոյն ժողովուրդին միւս հատուածը որ գրկուած է իր հողին գուրգուրանքէն, եւ թիւով կը կազմէ հազիւ մէկ երրորդը միւսին: Համեմատութիւնը աւելի կը պակսի, երբ նկատի ունենանք արուեստի նոյն ճիւղը մշակողներուն թիւը: Բայց հոս կը պատահի տարօրինակ երեւոյթ մը. այդ փոքր հատուածի փոքր խմբակին մէջէն կը կանգնին դէմքեր, միջազգային դէմքերու կողքին:

Մեր բոլորին ծանօթ փարիզարեան

Գառնիկ Ջուլումեան (Գառզու), որմէ նկար մը կարելի է ունենալ, միայն իր ցուցահանդէսներուն բացման առաջին ընդհանրուն, կամ տարի մը առաջ ապրսպրել, ինչպէս ըսած են յաճախ քաղաքին թերթերը: Իր անունը անցած է արդէն «Անսխալութեան» մէջ:

Ժան Սէմէրեան (Ժանսեմ) զույգ ոչ այնքան ծանօթ բոլորիս, բայց այնքան արուեստի ունակներն մէջ որ Փարիզն է, կը դառնայ զազաթներէն մին, եւ մի զարմանալ, երբ ըսենք թէ իր նկարները աւելի կ'արժեն քան վերը յիշուած նկարիչին: Իր անհատական ոճը կազմողը իր ազգային շէնն է:

Շիլլեան, իտալարնակ, որ իր ոճով նոր դպրոց մը բացաւ ներկայ նկարչութեան մէջ, դասական մօտեցումով եւ արդիական վերարտադրութեամբ՝ նորութիւն մը եղաւ բոլորին համար:

1956-ին, Փարիզի իր մէկ ցուցահանդէսը ցոյց տուաւ թէ իր նկարները կ'արժեն մինչեւ ինիսուն հազար լիբանանեան սկիւ:

Այժմ գանք մեր բուն նիւթին.— թէ ինչու մէկը չունեցանք մեր հայրենիքին մէջ ալ: Պատճառը ինչո՞ւ տխուր եւ անհանդուրժելի է: Եթէ մենք իրապէս կը սիրենք մեր արուեստագէտ եղբայրները, պէտք է բողոքենք իրենց տեղը, որովհետեւ ամբողջ քառասուն տարիներ, ըլլալ նկարիչը, ըլլալ քանդակագործը, ոչ միայն չէ կրցած տալ

իր զգացածը իր ուզածին պէս, այլ իր կամքէն անկախ՝ իր արուեստը միջոց մըն է եղած ծառայելու կոմ. վարդապետութեան փրփականտին: Արուեստագէտը մեքենայացած է, եւ արտադրած, իրեն տրուած զազափարաքանութիւնները: Իր եսը, որ կարելուքագոյն ազդակն է արուեստին, իր սպրումներուն հետ, խեղդուած է իր հոգիէն ներս: Տաժանակիր աշխատանքով է, տասնեակ տարիներ նկարած եւ քանդակած են նոյն եւ նոյն բանուորները Փարիզի քերու մէջ, թատերական շարժումներով. օրինակներ՝ որ կը կարգանք «Սովետական Արվեստ» ամսագրին մէջ, նկարներու կողքին:

«Արա Սարգսեան կարլովի-վայրում (Ձեխոտովաքիա) քանդակել է պանելային շինարարութեան դործարանի աշխատանքի հերոսի շքանշանակիր Անտոնի Չալտրի պորտրէն որը նա նուիրել է քաղաքի ակումբին: Գաղաքի հասարակութիւնը սիրով ընդունեց քանդակագործի աշխատանքը»:

Ժ. Կիտնիեան.— Աշխատանքի Բրիգադի Դարաբեկեանի դիմաքանդակը:

Սարգիս Մարաղեան.— Սիւնեանի չորջանի վազուցի գիւղի Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, որոնց կուրծքերուն անուշտ կախուած են յստակ կերպով կարմիր շքանշաններ:

Առաջին անգամ Հանքահորում, պատանի մը զարմացած եւ հիացած կը դի-



«Կոմերիտականները Մոսկվայի մատոյցներում դիրքեր փորելիս»

Համբախորում, տարեց  
բանուար մը մեքենայով  
կը փարէ ժայռը:



տէ կիսամերկ տարեց բանուար մը որ  
մեքենայով կը փորէ ժայռը:

Սովետական դորքերի տարած պատ-  
մական յաղթանակի 15-ամեակի առի-  
թով:

Կոմունիստներ Մոսկուայի մասոյց-  
ներում դիրքեր փորելիս (կիներ են փո-  
րողները):

Հեռագիր Լենինին:

Եւ նմանօրինակ նիւթերու անվեր-  
ջանալի կարաւաններ, որոնք կը յիշուին  
որպէս ստեղծագործութիւն: Նիւթեր՝ ու-  
րոնց անընթաց, լուսանկարչութիւնն  
իսկ չի կրնար շալկել, ուր մնաց արուես-  
տագէտները, որոնք իրենք ալ վերած-  
ուած են բանուարներու, նկարելով նմա-  
նօրինակ բանուարներ:

Գիտական մարդին մէջ կրցած են  
աւլ իրենց առաւելագոյնը մեծ յաջողու-  
թեամբ, որովհետեւ գիտութիւնը մէկ  
տեսակ է եւ անպայմանօրէն նպաստող  
երկրին:

Երաժշտութիւնը նկարագրական եւ  
պատկերաւոր ըլլալուն, եւ մասամբ ալ  
իր վերացականութեամբ՝ դասած է իր յա-  
ջողութիւնը, թէպէտ այդ մարդն ալ են-  
թարկուած է քննադատութեան իր տե-  
սանելի կողմերուն համար, բայց երա-  
ժշտութիւնը ճկուն եւ վիճելի ըլլալուն՝  
երաժիշտը կրցած է դուրս գալ այդ բու-  
լորէն:

Նորինսկ փրոփականտի ակնոցով, հար-  
ցըններ իրենց:— ըմբոսա Պալատուր-  
եա՞ն մը աւելի արժեք, թէ ենթակայ  
չորս հարիւր արուեստագէտներ: Ար-  
ուեստը միակ այն ճիւղն է որուն նպաս-  
տը անուղղակի է եւ ոչ թէ ուղղակի:

Արուեստագէտը, կ'ըսեն, պէտք է  
ըլլայ ժողովրդական, այսինքն պէտք է  
ըլլայ մատչելի ժողովուրդին հասկացո-  
ղութեան եւ պահանջին: Հոս է մեծա-  
պոյն ողբերգութիւնը արուեստագէտին.  
ո՞վ որուն պէտք է հետեի: Արուեստա-  
գէտը ժողովուրդին, որ շատ աւելի վար  
է մակարդակով, թէ ժողովուրդը ար-  
ուեստագէտին, որ աւելի բարձր է, ա-  
ւելի հեռատես, աւելի կանխազգաց:

Գծախտարար առաջինն է տիրապե-  
տողը, որով արուեստագէտը կ'իջնէ դէ-  
պի վար՝ հասարակը, մերկանալով ան-  
հատականութիւնէն, կը դիտէ objectif  
աչքով բոլորին պէս, բոլորին հաշակով  
եւ կը դառնայ լուսանկարչական մեքենայ  
մը, որ կ'ընդօրինակէ տեսածը, դառնելով  
ստեղծագործելի: Եւ այս է բուն պատ-  
ճառը, որ բոլորին դործերը միօրինակ  
եւ իրերանման են, եւ իբրամէ կը զա-  
նազանուին զիրար չկարենալ ընդօրինա-  
կելու աստիճանով մը միայն:

Իսկ երբ քննադատութիւն ժը պիտի  
ըլլայ արուեստագէտի մը մասին, կար-  
ծէք դրականութիւն է եղածը: Օրինակ.



Հեռագիր  
Լեճիճիճ

«Բնականորար մեզ կը փոխադրէ կամ չի փոխադրեր մեր հայրենի խրոխտ լեռները, գուլալ շրերը, պայծառ երկինքը. Մասիսը կ'երեւայ մշուշապատ երկինքէն դուրս ձիւնապատ պազաթով»:

Անձ գիտեր ի՞նչ կերպով պիտի արտայայտուէր եթէ ցուցանալէսը ըլլար լուսանկարչական. անշուշտ նոյն ոճով:

Այսօր սովիէթները առաջնակարգ դերքի վրայ են Սպուսիքի գիտութեան մէջ, սովիէթ մարդը կը ճամբորդէ ժամական մօտ 30-000 քիլոմետր, մինչ իրենց արուեստագէտները իրենց սնով կ'ապրին սայլարչաւի դարէն ալ առաջ, որովհետեւ այս երկուքին իրար հակասող մրցումն է որ կ'օժանդակէ իրենց յաղթանակին:

Կը նկատեն ամէն ինչ յետին մանրամասնութեամբ, որուն կը միանայ նիւթին տափակութիւնը, իսկ այս երկուքին արդիւնքը յաճախ մեղի կը յիշեցնէ սիւրբ-բրիգ լուսանկար մը: Օրինակ պատտամը որ կը ներկայացնէ շինացի թոփոկրաֆ մը որ կ'աշխատի Հայաստանի համար. մեքենան կանգնած է իր վից ոտքերուն վրայ եւ նկարուած յետին մանրամասնութիւններով. նոյնիսկ կը տեսնենք պտուտակները մեքենային վրայ. կողքին կանգնած է շինացին, գոհ դէմքով մը, ժաքիթը հանած, ձեռքերուն մէջ տետրակ մը ուր բաներ մը

կ'արձանագրէ. ձախ ձեւերն ժամացոյցը կապուած. ժամագործ մը դիւրութեամբ պիտի կարենայ ճշդել տեսակը:

Արուեստագէտը կը փնտռէ կամ փնտռել կու տայ անոր նիւթը, մասնաւորով որ ան կ'արժէքաւորուի միայն նիւթին տեսակով. մինչդեռ կենսականը տալու ձեւին մէջն է եւ ոչ թէ տուածին: Ոճին մէջ է եւ ոչ թէ գեղեցկութեան եւ քնականութեան: Իրենց մօտ նիւթը կ'անցնի պատտառին վրայ այնպէս ինչպէս կ'երեւայ քնութեան մէջ, որով Էմֆոգիսիսը որ կարեւորագոյնն է, գոյութիւն չունի իրենց մօտ, գոյութիւն չունի նաեւ գոյներու ուղղակի արտայայտութիւնը որ մաքիւր կը կոչուի եւ մեծագոյն դերը ունի ներկայ նկարչութեան մէջ: Եւ կարեւորագոյնը եթէ կ'ուզէք շիդի պակասն է. ամէն ինչ կակուղ է (մաւ). երբ կակուղ կ'ըսենք, չկարծէք թէ մեր գիտողութիւնը անհատներու արտայայտութեան մասին է. ոչ, որովհետեւ անոնք տրամաթիք կառոյցով մը կ'ըսած են. մեր խօսքը աշխատելու եղանակին մասին է:

Նկար մը նախ քան բան մը ներկայացնելը, ինքզինք է որ պէտք է ներկայացնէ, առանց նկատի ունենալու նիւթը. աւելին եթէ կ'ուզէք, բերեղացած աչքով տեսնելու համար ծուռ պէտք է դարձնէք նկարը, որպէսզի մեր տես-



զուժիւնը ազատի նիւթին դերութենէն, եւ տեսնէ միայն զուտ նկարչութիւնը, ինչ որ արուեստագէտի հոգին եւ անհատականութիւնն է. մնացեալը կը պատկանի բնութեան: Եթէ նոյն բանը փորձենք սովիէթ նկարիչի մէկ պատասաին՝ եղածով կ'ոչնչանայ նկարը, որովհետեւ հոն որ միայն նիւթը կայ, ան ալ կը կորուսի:

Երեք քառորդ դար առաջ, Վան Կոկ նկարած է աթու մը միայն, մեծ պատարտի մը վրայ, բայց երբ նայինք անոր կը շնորհիք, եւ կը զգանք մեր փոքրութիւնը անոր առջեւ. հոն աթուր չէ անշուշտ մեզ կախարդողը. եթէ այդպէս ըլլար, սինեմայի մը սրահին մէջ մենք փոխանակ պատատուր դիտելու, պիտի դիտէինք Պարիւրաւոր աթուները իրենց դիտուորական շարքով, եւ աւելի գեղեցիկ քան Վան Կոկի նկարածը. հոն աթուր հաղորդող մըն է միայն մեզի Վան Կոկի տատապող հոգին. հոգին է որ կը պակսի կամ աւելի ճիշդ կը մեռնի մեր նկարիչներու մարմնէն ներս:

Այս բոլորի կողքին, անոնք կ'ազդին բանաստիճան կեանք մը երկրի սահմաններէն ներս, անոնք չեն ճամբորդեր, չեն տեսներ, շփումի մէջ չեն մտներ ժամանակակից մեծ արուեստագէտներու արտադրութեանց հետ. որով իրենց հորիզոնը կը մնայ միշտ նոյնը, եւ ստիպուած անոնք կը կրկնեն իրենց գիւրնը: Մինչ անդին աւելի կարեւոր կարծրւած անհատ մը կ'անցնի սահմաններ: Երբ Մոսկուայի մէջ մեծահասակար Օկիլատ Ռոտէնի դործերը կը ցուցադրուին Փրանսական տաղաւարին մէջ, ժողովուրդը կը դիտէ զայն միայն ծիծաղով, մինչ արդէն նոյն դործերը Եւրոպայի մէջ կ'անցնին դասականներու շարքին:

Իրենց նկարչութեան մէջ չենք հանդիպիր նաեւ մերկ մարմիններու. մերկ

մարմինը որ գեղեցկագոյն ստեղծագործութիւնն է բնութեան՝ ինչո՞ւ նկարեն, ի՞նչ իմաստ ունի իրենց համար մարմին մը եւ միայն մարմին մը առանց բան մը ընողի վիճակին մէջ. ոչինչով կ'օժանդակէ իրենց զաղափարներու տարածման, որով բոլորովին անիմաստ է զայն նկարելը սրպէս գեղեցկութիւն միայն:

Եւ նման երեւոյթներ, պատճառներ եւ բացատրութիւններ կարելի է թուել տակաւին շատ երկար. բայց կը կարծենք թէ այսքանը կը բաւէ բացատրելու եւ պատշաճելու. Հայաստանի արուեստագէտները, որոնց վրձինները, ափսոս, շարժած են իրենց հոգիներուն հակառակ, շարժած են ուրիշներու մըտքին համար. բայց վրձինը հոգի է՝ մտքէ աւելի:

Վերջաբան

Բայց հոս ուրախութեամբ կ'արձագանգարենք որ վերջերս ոմանք սկսած են ազատագրուիլ ուրիշներու մտքէն. երիտասարդ նկարիչներ սկսած են լքել նիւթը եւ փարիլ միայն գոյներու, գիծերու, Փորձերու ներդաշնակութեան. մէկ խօսքով ընել նկարչութիւն մը նկարչութեան համար:

Անշուշտ մէկ օրէն միւսը կարելի չէ սպասել ամբողջական արդիւնք մը, որովհետեւ միւսը իրենց մէջ զծած է սկոսներ, եւ դիւրին չէ դուրս դալ այդ աղօսներէն: Եւ մի զարմանաք, երբ օր մը դուք մեզ գտնէք նոյնիսկ վերացական (ապսքրէ) նկարի մը առջեւ:

Ափսո՞ս սակայն այն սերունդին, որուն վրձինը մաշեցաւ իր սրտէն անկախ, մաշեցաւ տաժանքով, անէծքով. բայց անոնք թող միւթարուին իրենց յաջորդներով, որոնք անկասկած պիտի վերցընեն, պիտի բարձրացնեն արուեստը, որ ցարդ երբեք չէր անարդուած այսքան:



ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.—

Վ. ԳԵՈՐԳԵԱՆ

Պետկոս Այրես, 1961

Վարդան Գեորգեանի Գրական Հարցեր Հատորը 316 մեծագիր էջեր գրաւույ պիտի մըն է, նուիրուած դրական բազմապիսի հարցերու քննութեան եւ լուսարանութեան:

Գրական հարցերու սահմանին մէջ մնալով հանդերձ, հեղինակը ծաւալած է այս կարգի խնդիրներու բոլոր մարզերուն մէջ, բազմաթիւ եւ բազմազան պարագաներ մտածման նիւթ դարձուցած ե իր դասողութիւններն ու թելադրանքները գրի տուած: Այս բաղադրանութիւնը լրիւ բովանդակ կ'ըլլայ, եթէ ըսեմ, որ պիտի ութսուն պլուրներու բաժնուած է, որով ութսուն գրական երեւոյթներ Վարդան Գեորգեանի գատողութեան եւ թելադրանքներուն նիւթ դարձած են:

Ամփոփ բովանդակութիւնը այս հատորին՝ էջեր պիտի գրաւէր: Սակայն անոնք որ առիթը պիտի ունենան Գրական Հարցերը կարդալու, վարձատրուած պիտի զգան իրենք գիրքէն եւ մասնակից պիտի ըլլան հեղինակի մտածումներուն, երբեմն ալ վիճելով անոր հետ:

Կարեւոր հարցերու կողքին, երկրորդական երեւոյթներ ալ գլուխ կազմած են այս հատորին մէջ. բայց երբ գրքին ամբողջութիւնը նկատի առնէք, երկրորդական երեւոյթները իրենց լրացուցիչ գերով իսկ հանգուածելի կը դառնան:

Նոր սերունդը, որ պիտի փորձէ Հայ Գրականութեան սեմէն ներս մտնել, կրնայ մեծապէս օգտուիլ Վարդան Գեորգեանի այս հատորէն, որ տեսակ մը դասապիտի կրնայ նկատուիլ, ազատ

ունկնդիրներու կողմէ: Բնական է, խօսքը անոնց մասին է, որ աստուածային սուրբ մը ունին գրական արուեստին նըւերելու:

Գրականութիւնը իր դերով, քննադատութիւնը իր բազաւատական կարեւորութիւններով, կիրք եւ ստեղծագործութիւն, երեւակայութիւն եւ զգացում, խորացում եւ ինքնաքննադատութիւն, ազգային եւ համամարդկային ընդունումներ, լեզուի եւ ոճի խնդիրներ, կարելի յատկութեամբ եւ ճշգրիտ դաստուծով քննութեան աւանուած են եւ նորահաս գրողներուն համար թելադրական են:

Գրական Հարցերու աւանդած տեսութիւնները բացառիկ ուղի մը չեն գրծեր, եւ ոչ ալ արտակարգ նորութիւններ ունին: Հեղինակն արդէն արտակարգ երեւնալու ձգտում մը չունի: Տարիներու փորձառութիւնը, բազմակողմանի դարձացումը եւ գրական գրադումներու երկար անցեալ մը ձեւ տուած են այս այլազան աշխատասիրութեան, որ բազմաթիւ տարիներու աշխատութեամբ կարելի եղած է մէկտեղել այս հատորին մէջ:

Գրական Հարցերու Հատորը լուսագոյն վկայութիւնն է Վարդան Գեորգեանի գրական գատողութեան: Հեղինակը ծանօթ է ինչպէս հայ, նոյնպէս եւ միջազգային գրականութեան: Այդ ծանօթութեան լայն սահմաններուն մէջ անոր թելադրանքներն ու դաստուծները համոզիչ են, և բնորոշիչ՝ անոր դասողական թափանցումներուն համար:

Նիւթին համապատասխան ճոխ բառամթերքով յստակ լեզուն հաճելի կը դարձնէ ընթերցումը այս հատորին, որ պրական միջնորդող մը ստեղծելու կոչուած գիրք մըն է:

Կ. Մ.



Գործ՝ ՃԱՆՍՆԱԻ

« ԵՐԳԵՐ ԲԱՆՏԷՆ »

Հեղինակ՝ ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ

Պուժնուս Այրեւս 1959

Պաշտոյ Պէրպէրեանէն ընթացաւարտ, ապա համալսարանական՝ «Երկունք»էն ծնած մտաւորական-բանաստեղծն է Արմէն Սեւան (բուն տնունով Յովհաննէս Տէվլճեան), որ շուրջ կէս դարէ ի վեր կը գրէ, ինքն իր շուրջին, հանրային բեղուն կեանքին տունը, քերթողութեան գեղեցիկ մուտաներն ալ դարպասելու առիթը գտնելով: Մէկն է այն քիչերէն, որ երկար տարիներ Սիւրբիոյ սառնամանիքներուն տոկալէ յետոյ՝ վերադարձաւ կեանքին, ու կ'ապրէ հիմա Պուժնուս-Այրէսի ազատ երկիրներն տակ:

Տարօրինակ չթուի ուրեմն «Երգեր Բանտէն» խորագիրը, որուն բովանդակութեան (ոտանաւոր եւ արձակ) մեծամասնութիւնը յղացուած ու ծնունդ առած է վերաթմբի բանտին ցուրտ ու մութ պատերուն ետին: Ետըջ 250 մեծադիր էջոց հատոր մը, որ կը յատկանշուի գրողը եւ անհատը Արմէն Սեւանի մէջ, - գաղափարական մարդը, անձնուրաց հարեանակը, որուն կուրծքին տակ կը արտփէ նաեւ մարդկային սիրտ մը՝ ընտանիքին հանդէպ ունեցած զգացումներուն ջերմ վարկերով:

Գիրքը արտացոլումն է մարդուն, անոր հոգեկանին եւ տեսողական դաշտին: Հակառակ աշխարհէն կղզիացումին, բանտի չորս պատերուն մէջ մեկուսացումին՝ ինքնամփոփման մէջ, Արմէն Սեւան կ'ապրէ հայրենի աշխարհով, կ'ազեւորուի հայոց պատմութեան հերոսները երեւակայելով՝ կը ասչորի կնոջ ու անցեալի քաղցր յիշատակներով: Մի միայն գաղափարական մարդը կրնայ յոռեպոյն պարագաներու մէջ ապրելու յոյսէն չզարպուիլ եւ դրիչը ձեռք առնել՝ ցուրտ առանձնութեան մէջ հայրենի փառքով խանդավառուելու համար:

Հետեւաբար՝ բանտարկեալի մը ընդ-վըդումը կամ ներքին փլուզումը պատկե-

րացնող ազդակներ գրեթէ չենք դըռները այս հաստափոր դրփն մէջ, այլ՝ աշխարհէն կտրուած բայց աշխարհի յուշերով ապրող սրտի մը վշտախառն ուրախութիւնը առաւելաբար: Ատոր համար ալ «Երգեր Բանտէն» են առնք, այլ ոչ՝ «Բանտարկեալի Երգեր», ինչպէս հեղինակը ինքն ալ կը վկայէ դրփն «Յատաշարան»ին մէջ:

Հատորին մէկ ծայրէն միւսը կը տարածուին վարուժանի արուեստին վեհափառ շուրջը եւ Մեծարհնցի շողշողուն բառարանին անմար ճաճանչները: Ու դասական կաղապարի մը մէջ կ'առնեն Արմէն Սեւանին արուեստը, որուն տակ չի կորսուիր սակայն, զոնէ տեղ-տեղ, բանաստեղծին անհատականութիւնը: Երբ կ'երգէ հայրենի դաշտերը, բերքը, մշակները՝ կը քալէ վարուժանին քացած սկօսէն, մերթ այնքան մօտենալով հայ բանաստեղծութեան ջուրմին, որ ասոր հետ չիոթուելու խարկանքը կը ստեղծէ: Միևնոյն ապարտութիւնը, նուազ յաջողութեամբ, երբ կ'երգէ Մըհերներն ու Դաւիթ Բէկերը, այսինքն՝ քնարին ազգային լարը հնչեցուցած ատեն: Սակայն երբ անձնական զգացումները կ'ուտին իր մէջ եւ կու տան իր արուեստին քնարական ապրումներուն գուլ՝ յանկարծ կը սահի Արմէն Սեւանի ուսերէն իրը չեղող ճաճանչաւարտ պատմուճանը, և բանաստեղծը կը յայտնադործէ ինքզինք:

Լեզուն, իւրացուած բառամթերքով, բանաստեղծութիւն գրելու շափ ճոխ է ու բաւական սահուն: Պատկերները եթէ ոչ ըլլացուցիչ դէթ հարազատ են միշտ, մերթ ալ բանաստեղծ մը արժէւորելու շափ խորունկ:

Մշակը որ բացեր էր սկօսմ իրքի  
օրօրաց  
Յզի՝ ոսկի յոյսերով, երազներով իր  
խաղաղ,  
Հիւսմ, նստեր յուսահատ, աչքը ետիմ,  
սիրտը խոց,  
Ձայն կը փակէ գերբ դազալ...  
(Երաշտ)

Երանի՛ առելի յաճախ Արմէն Սեւան  
 մոռնար իր պաշտամունքի զուրմերը եւ  
 մնար ինքն իրեն հետ, քակէր իր շիղե-  
 բուն կծիկները, խորատուզուէր ինքն իր  
 սրտին մէջ: Անպայման պիտի պարտա-  
 զրէր ինքզինք:

Սակայն ինչ ալ ըլլան կէս դարու իր  
 գրականութեան արժանիքներն ու թերի-  
 ները՝ մեր նորագոյն գրականութիւնը  
 պիտի չմոռնայ Արմէն Սեւան անունը, եւ  
 «Բանտի Երգերը գիրք մըն է, որ կը  
 վարձատրէ իր ընթերցողը:

Յ. Գ.

**Ի Մ Բ Ե Ր Դ Ս**

ԿՆՈՋՍ

Ան կանգուն է մէջտեղը փոքորիկին ու ծովին.  
 Անբռնարար ապաւեն, հաւատարիմ ու խաղաղ.  
 Ալիքներն որ անդադար իր կողերուն կ'ընդհարին՝  
 կը նորոգե՛ն գայն միայն, կը դառնան կիր ու շաղախ:  
  
 Ան՝ հին բերդն է իմ սիրոյս միշտ նոր եւ միշտ՝ աննուսն.  
 Այր՝ ինձի հետ միայնակ, կը բընակի ինձն՝ Աստուած:  
 Անով կեանքին կ'ըլլամ հաշտ, բազուկս անով կ'ըլլայ իջ,  
 Ու վարդերու կը փոխուին գծնէ փուշերն ու կասկած:  
  
 Ասպետին պէս հնօրեայ ջր կարուսած է գուպար,  
 Եւ խորտակուած իր սուրով կ'ապաւինի դրձակին,  
 Ես՝ իմ բերդըս կը մտնեմ պարտուած այլ՝ յորտարար:  
  
 Հան, կորուստներս բոլոր կը նուսնեմ վերջստին.  
 կը ծածանի յաղթական դրօշակըս վեհափառ,  
 Եւ ուսերուս կը փաղփի երջանկութեան ծիրանին...:

**Պ Ա Պ Ե Ն Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ն**

Բընակարանըս ըլլար պապեմական հին ժառանգ,  
 Հեծաններով հաստաբետ, առաստաղովը մըքիմ.  
 Պատին վըրայ պլպըլար ոգեվարող մէկ գըրագ.  
 Խճիչ փայտք երբոր հոգիներն արեգակով կը յարդին:  
  
 Ծրք յագնաբեկ ելլէի սանդուխներէն իր մաշած,  
 Մ'օրըս բստուերն հետեւէր իմ ետեւես ու հայրս ալ,  
 Իր բոց կարօտը գրկած, բարձունքներէն իջնէր ցած,  
 Ու համբոյրով մը, սիրտը պարպէր սրտիս մէջ մըռայլ:  
  
 Ո՛րք ջր մատներս հըպէին, այնտեղ սարսուռը ըլլար  
 իմ պապերուս մատներուն, հըգօր, գգուող ու բարի.  
 Պատէն առկախ սքլեմորին սիրտը գեղուր ու գըշար,  
 Որուն օր մը կը կապէի խոնարհ լա՛ր մը ճնարի:  
  
 Սերունդները անցնէին անկէ արդար ֆակասով,  
 Զերք մարգարիտ պըսպըզար, քրտինք, ժըպիտ ու արցունք,  
 Դարը դարի՛ն միանար մանկանց ոսկի շղթայով,  
 Ըլլար ամէ՛ն ինչ անմեռ, գերք սրբութիւն ու մասունք...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

## ԼՂՎԱՐՆԵՐ

### «ՉԱՐԱՂԷՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ»

Հայաստանի դրականութեան հետեւակութիւն ընելը հիշատանքի վերածած գրիչ շարժողներ երեւցան Սփիւռքի այս կամ այն անկիւնին մէջ, որոնց թիւը անեցաւ յատկապէս վերջին տասնամեակին: Նախկին հետեւակներու շարքերը խոսցնողները, ի հարկէ, երխասարդներ էին, որոնք հասկնալի պատճառներով, բուսան ու անեցան մեր կողմերը: Այս ազաքը փոխանակ Հայաստանի մէջ մշակուած հարազատ սպրումներով իրենց տողերը պատուաստելու, հոն պարտադրուած անկարելի նիւթերուն կ'արձագանգեն: Կը յեղյեղեն աշխարհաքաղաքացիական տեսակէտներ ու մեծ ախորժակով կը կատարեն տիեզերական թռիչքներ, կանգ առնելով ամենայն տեղ, ուր կոբու կայ, դասակարգային հարց մը կը յուզուի, կամ համաշխարհային յեղափոխութիւն խաղալու աղմկարար առիթ մը կայ: Կը մասնակցին կոմկուսի համագումարներուն, «Պուրբշի մէջ երկնէր երկին» կ'ըսեն, «Իմ ֆարէա» կ'երգեն, «Ձեռնք յամսներ քեզ, Սուէզ» կը պոռան, «Բոր-Սայիտի մէջ՝ արիւն... ու դիակներ» կը տեսնեն ու սրտատուշ անլըջութեամբ մը կուլան:

Անհաստատ, անխարխուս ու սպրումէ դուրկ գրողներ են ասոնք, պայմանադրական սէրերու եւ պայմանադրական ատելութիւններու ոպասարկու անժառանգներ: Չերկարենք այս դատումները, աւելի ճիշդը թրւենք այս դատումներուն հիմք ծառայող մի քանի փաստեր:

Կոմկուսի վերականգնեալ քարտուղարներէն մէկը, 1949-ին, «Եօթանասունամեակ» վերնագրուած քերթուածի մը մէջ կ'ազօթէր՝

Եւ ինչպէ՞ս երգեմ ես, երբ գիտեմ քէ տժգոյն  
Իմ երգը կը մեռնի, բայց դու չես մահանա:

Եօթանասուն անգամ եօթանասուն տարի,  
Եօթանասուն անգամ եօթանասուն սերունդ,  
Կը գամ, կ'անցնիմ, բայց դու՝ կը լինես միշտ կանգուն,  
Կեանքի պէս՝ միշտ նորոգ, ու միշտ վառ աւելի:

Եօթը տուներէ բաղկացող այս «Եօթանասունամեակ»ին վերջին մէկուկէս տունն է մեր արձանագրածը ու առաջին տուններուն մէջ եօթանասունամեայ մարդուն ուղղուած են հետեւեալ խօսքերը.

Մի կուտար ես անհաս,  
 Քն ձեռքումս հզոր...  
 Քն ներկան պայծառ,  
 Մեզ գալիքից նայադ վիթխարի միտք,  
 Նայուածքը քն քարի

*Եօթանասուն անգամ եօթանասուն սերունդ իր հերոսին կեանք ու շնորհք բաշխող շնորհարարչի այս քերթուածը, ինչպէս յիշեցինք, գրուած է 1949-ին, եւ կը վերաբերի, ինչպէս կուսակցիք, ժողովուրդներու նախկին «Հայրենիք»։ Բայց Հոս չեն վերջանար շնորհարարչին զեզումները։ Ձորս տարի ետք պատահեցաւ որ մեռնի հերոսը, ու հերոսերգակը «Անմահութիւն» վերնագրին տակ ասկէ անկէ հաւաքուած բառերով շարունակեց իր սարկահան երգը.*

Ուր ալ երթանք, ինչ ալ ընենք, մեզի հետ ես, Ստալին ջան,  
 Երբ տրտում ենք, երբ խնդում ենք, մեզի հետ ես, Ստալին ջան,  
 «Պայքարին մէջ այս բարձրացող» երբ կը քալենք ուռիսն դէմ,  
 Իբրեւ ճրագ, իբրեւ կրակ, մեզի հետ ես, Ստալին ջան:

Ինչ որ շարունակ իբրեւ ժպիտ՝ մեզի տուիր դուն միմիայն,  
 Յոյսերը մեր, լուսերը մեր, մեզի տուիր դուն միմիայն,  
 Մեծ կենիւնի մահէն յետոյ, դեռ մահամերձ խաւարին մէջ,  
 Մեր այսօրին մարմին տուող տենդը տուիր դուն միմիայն:

Օրեր յետոյ, դարեր յետոյ, պիտի ապրիս դուն տակաւին,  
 Միլիոններու յայտնում մէջ պիտի ապրիս դուն տակաւին,  
 Օր մը եթէ ժամանակն այս դառնայ լոկ յուշ մը հեռուար,  
 Նոր մարդերու հագիւնն ներս պիտի ապրիս դուն տակաւին:

Հազար բարեւ, հազար արեւ, քեզի ընծայ, Ստալին ջան,  
 Քերթուղներու երգն անվայսման, քեզի ընծայ, Ստալին ջան,  
 Սերունդներու համար գալիք, լուսապայծառ ճակատիդ դէմ,  
 Անմահութիւնն իբրեւ պսակ, քեզի ընծայ, Ստալին ջան:

*Այս Ստալիններգութիւնը տպուած է «Ժողովածու» (1953 Մայիս, Պէյրութ) անունը կրող թերթի պէս բանի մը մէջ եւ ստորագրուած Գ. Ազգարեանի կողմէ։ Այնքան գուարճալի էր մեզի այս քերթուածը, որ այդ վայելքէն չզրկուելու համար դժուարացանք օրին խռովել անոր գուարճալի հեղինակը։ Եւ յետոյ նման անապրում ու անմիտ յօրինումներուն խաղաղութիւնը յիշեցնելու բնաւ պէտք չկայ, երբ դիտենք թէ օր մը հեղինակը ինքը կը յիշեցնէ մեզի թշուառ բաներ ստորագրելու իր թշուառ շարժառիթները։ Այսպէս եղաւ նաեւ այս մէկուն պարագան։ Իր խմբագրած թերթին Ձարենցի նուիրուած թիւին մէջ նոր Հովի մը ենթակայ այս հին խնկարկուն կը գրէր—*

«Եթէ ամեն պաշտամունքի արեւները ստեղծանք արեւները Ձարենցի կորուստով միայն, դարձեալ բուսարար պիտի ըլլար անվարան դառու պարտեւալ համար չարադէտ այդ պաշտամունքը»:

**«Պարագէտ պաշտամունքը»:**

Ըսողը ինքն է: Մտեցուցէ՛ք այս «չարաղէտ»ը վերը կատարած իր պաշտամունքին ու մի մոռնաք, որ իր պաշտամունքին եւ պաշտամունքին հանդէպ ունեցած նողկանքին միջեւ անցած են եօթը տարիներ միայն: Բանաստեղծութեամբ սոսնձարձակ պաշտամունք կը կատարէր ու արձակով նոյն սոսնձարձակութեամբ նոյն պաշտամունքը կը հարուածէ: Բանաստեղծութեան մէջ աւելի շեշտուած էր կեղծիքը, թէ արձակին: Ինքը, այս ազատ պայմաններուն մէջ, որչափ ո՞վ զարկ տուած էր «անձի պաշտամունքին»: Այս հարցումներուն պատասխաններով շատ չենք հետաքրքրուիլ այստեղ, բայց անկարելի է աննկատ անցնել այն միւս պարագան, ըստ որում բանաստեղծութիւն գրող միեւնոյն մարդը կ'ըսէ, կամ ըսել կ'ուզէ, թէ՛ ինք սխալ էր, անձիչդ էր, թեթեւ էր, պաշտամունք կը կատարէր սուտ կոտորածներուն, չարաղէտ մարդոց, անցաւոր ուրուականներու:

Բանաստեղծութիւն կը նշանակէ ճշմարտութիւն մը կայունացնել:  
 Բանաստեղծութիւն կը նշանակէ մնայունիւ անցաւորէն անջատել:  
 Բանաստեղծութիւն կը նշանակէ «հիմնականը մանրից» զատել:

Արդ՝

Բանաստեղծ մը, որ կու գայ ըսել, թէ իր ճշմարտութիւնը, իր մնայունը, իր հիմնականը եօթը տարուան իսկ կեանք չէ ունեցած, չի կըրնար անշուշտ պահանջել, որ լրջութեամբ մօտենանք իրեն, իր միւս զործներուն:

Շատ կ'ըլլա՞յ արդեօք եթէ ընդհանրացնենք այս օրինակը եւ անոր պատկերին մէջ տեսնել ուզենք՝ բանաստեղծութիւնը օրաթերթի խմբագրականներու անյոյզ աղմկարարութեամբ եւ մեծաքանակ կեղծիքով ծանրաբեռնող այս ազոց դրական ըմբռնողակ թշուառութիւնը, իր ներկայով եւ սպառնալով:





**ԼԵՋՈՒԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ**

**ԹԻԻՐՆ ՈՒ ԹԵՐԻՆ**

1958-ի վերջերը Հարցարան մը ներկայացուցինք «Յուսարեք»ի մէջ, ուղղազարկան միօրինակութիւն հաստատելու գիտումով: Մեր հարցարանին մաս կը կազմէր նաեւ ընդունիլ սա երկու գրեկածեւերէն մէկը, - ամենէն եւ ամենէն: Ո՞րը ընտրել, որո՞ւն հետեւիլ: Բազմաթիւ պատասխաններ արուեստն ե թեր ու դէմ կարծիքներ յայնուեցան: Ոմանք պաշտպանեցին ամենէն ձեւը (եւ չով), ուրիշներ ամէնէն (չով): Եզրակացութիւն մը կարելի չեղաւ հանել սակայն:

Հիմա դարձեալ սեղանի վրայ է Հարցը. Ի՞նչպէս պէտք է գրել, ամենէն թէ ամէնէն: Քանի որ երկու ձեւով գրողներ կան, ուրեմն վիճելի ուղղադրութեամբ բառ մըն ալ այս է, պիտի ըսենք ու անցնի՞նք: Ո՛չ, պիտի չանցնինք, այլ պիտի կենանք պահ մը եւ միասին պիտի մտածենք, թէ երկու ձեւերէն ո՞րն է յաւել, մանաւանդ ո՞րն է ճիշդը, ըստ այնմ եւ վերջնապէս ընդունելու եւ գործածելու համար մէկը կամ միւրը:

Ըսենք անցողակի, որ ամէն թէ՛ մտկայ է, թէ՛ անորոշ սծական: Մակբայ է, երբ գործածուի զբլլայ, եղեցի՞ իմաստով: Օրինակ՝ ամէն բանի ամէն ըսել: Անորոշ սծական է, երբ քովը գոյական մը գրուի: Օրինակ՝ ամէն մարդ, ամէն գերի, ամէն տուն:

Ամէն իր ծաղումը կ'ունէ զարբար համայնէն եւ կը գրուի չով: Հ. Ա. Բազրատունի կը հաստատէ, թէ «Խա-

մայն եւ ամէն նոյն բառք են»: Նոր Հայկական բառգիրքը հետ կը գրէ ամէն բառին դիմաց. «նոյն ընդ համայն»:

Վէճը կը սկսի ասկէ ետք: Ամէնէն գրեկածեւին կողմնակիցները կ'ըսեն. - բառը ամէն է, ծայրը կը գնենք բացառականի հարկակերտ մասնիկը Ե կամ էն եւ կ'ունենանք ամէնէն: Ըստ երեւոյթին՝ արամարանական է այս... տրամարանութիւնը, ըստ հուրեան՝ ո՛չ, արամարանական չէ: Ամենէն-ին արմատը ո՛չ թէ ամէն է, այլ՝ ամենայն (ամենայն - ամենայնէն - ամենէն): Եթէ ճիշդ է այս ենթադրութիւնը, - ինչպէս կը կարծեմ ես, - պէտք է գրենք ուրեմն ամենէն (եչով) եւ ո՛չ թէ ամէնէն (չով):

Նոյն արմատէն կազմուած բոլոր բառերուն մէջ է գիրը չկայ, այլ կայ Ե: Օրինակ՝ ամենայնիւ, ամենայնում, յամենայնէ, զամենայն, ամենայնից, յամենայնից, եւայլն, եւայլն: Ուրիշ օրինակներ ալ տանք, եթէ չէք մանձրանար. ահաւասիկ. - ամենի, ամենից, ամենեցուն, յամենէ, ամենեքեան, զամենեւեան, եւայլն:

Հ. Արսէն Բազրատունի, մեր քերականագիտութեան Մուրր Մեսրոպը, իր «Տարեք Հայերէն քերականութեան» մէջ կը գրէ. «Ամենէն, ամէն գրէն, ամէն ծառայութեան»: Հ. Արսէն Ղազիկեան կը գրէ իր կարգին. «Բայց ինծի համար ամենէն զարմանալին այն է...» («Մի՛ գրէք... այլ գրեցէք...» էջ 156):

Մեզի կը մնայ հետեւիլ երկու Արսէններուն եւ գրել ամենէն, ամենուն:



ԿՑ. Թափփի

Բ. ԹԱԾԵԱՆ

Եթէ անոնք կը սխալին, մենք ալ սխալ-  
լինք, հոգ չէ, բայց զրեանք միատեսակ և  
զրեանք ելով:

Ըսելիք մը ունի՞ք...

Ճ

Վերջերս տեղ մը կարդացի. «...ալ  
չկա ուրիշ»: Ունինք ալ մը, առանց շեշ-  
տի, որ կը գործածուի իրբեւ շաղկապ:  
Ունինք ուրիշ ալ մը, որ շեշտ կ'առնէ  
եւ կը գործածուի իրբեւ մակրայ: Այս  
երկուքը պէտք չէ շփոթել իրարու հետ:  
Եթէ շաղկապ է, շեշտ չ'առնէր, իսկ ե-  
թէ մակրայ է, անպատճառ շեշտ կ'առ-  
նէ: Առանց շեշտի՝ ալ կը դադարի մակ-  
րայ ըլլալէ եւ կը դառնայ շաղկապ: Օ-  
րինակ՝ «ես ալ, դուն ալ հայ ենք: Այս  
ալ թուղթ է, այն արջ»: Այստեղ ալ  
շաղկապ է, բայց երբ ըսենք «ալ կը բա-  
ւէ, ո՛ւ չկա ուրիշ», պէտք է շեշտ մը  
դնենք այլին վրայ եւ մակրայացնենք  
«ալ»ը:

Այս ալ - այսպէս:

Ճ

Փիլիքի մը մէջ տեսայ լեարդ բառը,  
որ գրուած էր լիարդ, իով: Տպագրա-  
կան սխալ մը ըլլալու է, ըսի ու անցայ:  
Յաջորդ էջին վրայ տեսայ «սիարդ»,  
իով: Ո՞նքիբը տպագրական սխալի մը  
շուրջ չէր գառնար ուրեմն, այլ կը գառ-  
նար ուղղագրական սխալի մը շուրջ:

Ինչո՞ւ լիարդ, իով: Եւ ինչո՞ւ  
սիարդ, դարձեալ իով: Ո՞րքա չհաստ:  
Թերեւս ես կը սխալեմ, ըսի եւ ձեռքիս  
տակ գտնուած բառարանները նայեցայ:  
Երկու բառերն ալ գրուած էին ելով, -  
լեարդ, նեարդ:

Եթէ ինծի չէք հաստար, դուք ալ  
բառարան նայեցէք: Իսկ եթէ բառարան  
չունիք, հաս մը դնեցէք...

Ճ

Երբեմն կը գրեն. «Ես տուն չեմ եր-  
թար, այլ՝ շուկայ»: Սխալ մը կա՞յ  
հաս: Ըստ երեսօթին՝ ո՛ւ, ըստ հոս-

թեան՝ ա՛յո: Բայց ո՞ւր է սխալը, պիտի  
հարցնէք անշուշտ: Կեցէք, որ բացատ-  
րեմ, գոնէ փորձեմ բացատրել:

Ըսինք ու գրեցինք. «Ես տուն չեմ  
երթար, այլ՝ շուկայ»: Այլին վրայ շեշտ  
մը դնելով՝ ըսի կ'ուզենք, թէ զեղուած  
բառ մը կայ: Մեր տուած օրինակին մէջ  
զեղուած բառն է «չեմ երթար»: Հիմա  
վերցնենք բուժը «այլ»ին վրայէն և ամ-  
բողջացնենք նախադասութիւնը: Կը  
ստացուի հետևեալը. «Ես տուն չեմ եր-  
թար, այլ շուկայ չեմ երթար»:

Եղա՞ւ, ձեզի կը հարցնեմ, սիկի-  
նե՛ր եւ պարոններ: Ո՛ւ, չեղաւ: Ուրեմն  
ի՞նչպէս ընկեք, որ ճիշդ գրած ըլլանք:  
Իմ կարծիքով՝ ճիշդը այս է. «Ես տուն  
չեմ երթար, այլ շուկայ կ'երթամ»:

Բագինի Երգ թիւին մէջ նման նա-  
խադասութիւն մը տեսայ: Բ. Փափազ-  
եան գրած է. «Հին օրերու հեղինակնե-  
րը, բանաստեղծներն ու վիպասանները,  
այնքան հարցեր չունին իրենց դիմաց,  
որքան այսօրուան գրադէսները ունին»:  
Խօսքը, այս ձևով, ճիշդ է քերականո-  
րէն: Եթէ վերցնէինք ունինք եւ բուժ  
մը դնէինք քրէական վրայ, հայերէնի ու-  
սուցիչները մէկ-երկու նիշ պահաս պի-  
տի տային մեղի:

Բայց մեր սիրելի բարեկամը՝ Բ.  
Փափազեան կէտադրութեան սխալ մը ը-  
րած է մատնանշուած նախադասութեան  
մէջ, այսինքն՝ ստորակէտով մը տէր  
բային զատած է բայէն: Այսպէս.  
«Հին օրերու հեղինակները, բանաստեղծ-  
ներն ու վիպասանները, այնքան հարցեր  
չունին...»: Ի՞նչ բանի կը ծառայէ «վի-  
պասանները»ին քով գրուած ստորակէ-  
տը: Պէտք կա՞յ տէր բային նոյնիսկ ըս-  
տորակէտով բաժնելու բայէն: Ո՛ւ, պէտք  
չկայ:

- Ճանճմ, - պիտի ըսէ մեր բարե-  
կամը հաւանօրէն, - դուն ալ հաւկիթին  
մէջ մազ կը փնտռես:

Բայց ո՛ւ, հաւկիթին մէջ մազ չեմ  
փնտռեր ես, այլ մազի՛ն մէջ հաւկիթ կը  
փնտռեմ...

Բ. Բ.

**ՍՏՈՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ**

Հատընտիր.- Գ. Շախմեան, 1962.- Պէյրուք:

Երգեր Բանտէն.- Ա. Սեւան.- Պուէնոս Այրէս:

Կրական Հարցեր.- Վ. Կէրպեան.- Պուէնոս Այրէս:



**ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ**

**ED. BOYADJIAN**


**B. P. 1153**

**BEYROUTH - LIBAN**

Հեռագայնի թիւ 256078

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԵՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ  
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

**DIKRAN KOUYOUMDJIAN**

**P. B. 587, Beyrouth — Liban**